

Հավելված
ՀՀ կառավարության 2021 թվականի
հունվարի 14-ի N 46 - Լ որոշման

ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

I. ԻՆՉ Է ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ	3
1. ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԳՈՐԾԻՔ.....	3
2. ԻՆՉՈ՞Ւ Է ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԿԱՐԵՎՈՐ.....	4
II. ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՔԱՅԼԵՐԸ.6	
1. ԽՆԴՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ.....	7
1.1. Ի՞նչ է խնդիրը	7
1.2. Ի՞նչ է նշանակում կարգավորման ենթակա խնդիր.....	7
1.3. Ինչու՞ է կարևոր խնդրի սահմանումը	7
1.4. Ինչպե՞ս է խնդիրը որոշվում և սահմանվում	7
1.5. Ի՞նչ է խնդրի պատճառների վերլուծումը.....	15
1.6. Ինչպե՞ս կառուցել խնդրի ծառը.....	16
1.7. Խնդրի մեծությունը և հրատապությունը	17
2. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ	20
2.1. Նպատակների սահմանում	20
2.1.1. Նպատակների սահմանման դերը ԿԱԳ վերլուծությունում.....	20
2.1.2. Ինչպես ճիշտ սահմանել նպատակները.....	20
2.1.3. Նպատակների տեսակները	24
2.1.4. Նպատակների միջև կապերը.....	25
2.1.6. Նպատակների սահմանման փուլերը.....	31
2.2. Նպատակային ցուցանիշների սահմանում	33
2.2.1. Նպատակային ցուցանիշների սահմանման դերը ԿԱԳ վերլուծությունում.....	33
2.2.2. Ինչպես ճիշտ սահմանել նպատակային ցուցանիշները	33
2.2.3. Նպատակային ցուցանիշների տեսակները.....	35
2.2.4. Նպատակային ցուցանիշների սահմանման կապը նպատակների հետ.....	36
2.2.5. Նպատակային ցուցանիշների ընտրությունը	37
3. ԽՆԴՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ. ԿԱՐԳԱՎՈՐԻՉ ԵՎ ՈՉ ԿԱՐԳԱՎՈՐԻՉ ԳՈՐԾԻՔՆԵՐ.....	39
3.1. Ի՞նչպես բացահայտել գործիքները	39
3.2. Կարգավորիչ և ոչ կարգավորիչ գործիքների տեսակները.....	40
3.3. Խնդրի կարգավորման տարբերակների մշակման գործընթացը.....	43
4. ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ.....	48
4.1. Ինչու՞ է դա կարևոր	48
4.2. Ազդեցությունների վերլուծության և գնահատման գործընթաց	49
4.3. Ազդեցությունների վերհանումը.....	50
4.3.1. Ազդեցությունների դասակարգումը	50
4.3.2. Ազդեցության ենթարկված խմբերը	52
4.4. Նշանակալի ազդեցությունների ընտրություն	53
4.5. Նշանակալի ազդեցությունների գնահատում	54

4.5.1. Ծախսերի և օգուտների տեսակներ	55
4.5.1.2. Կարգավորմամբ պայմանավորված հանրային հատվածի և մասնավոր հատվածի օգուտների տեսակներ.....	57
4.5.2. Ծախսերի և օգուտների գնահատման մեթոդներ.....	60
5. ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒՄ	71
5.1. Ծախս-օգուտ վերլուծություն	71
5.2. Ծախս-արդյունավետություն վերլուծություն	72
5.3. Բազմաչափանիշ վերլուծություն	73
5.4 Տարբերակների համեմատության վերլուծական մեթոդի ընտրություն	76
6. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ.....	78
6.1. Մշտադիտարկման և գնահատման միջոցառումների նախագծման դերը ԿԱԳ վերլուծությունում.....	78
6.2. Մշտադիտարկման միջոցառումների նախագծում.....	78
6.2.1. Ի՞նչ է մշտադիտարկումը և ի՞նչը մշտադիտարկել.....	78
6.2.3. Մշտադիտարկման համակարգի նախագծում	80
6.3. Գնահատման միջոցառումների նախագծում.....	82
6.3.1. Ի՞նչ է գնահատումը և ի՞նչն է պետք գնահատել.....	82
6.3.2. Գնահատման համակարգի նախագծում	83
III. ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ	86
1. Ու՞մ հետ, ինչպե՞ս և ե՞րբ իրականացնել հանրային քննարկումներ	86
ՀԱՎԵԼՎԱԾ 1	88
ՀԱՎԵԼՎԱԾ 2	91
ՀԱՎԵԼՎԱԾ 3	92
ՀԱՎԵԼՎԱԾ 4	93
ՀԱՎԵԼՎԱԾ 5	94

I. ԻՆՉ Է ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

1. ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԳՈՐԾԻՔ

Կարգավորման ազդեցության գնահատումը (այսուհետև՝ ԿԱԳ) կարգավորիչ բարեփոխումների հիմնական բաղկացուցիչն է: ԿԱԳ համակարգի ներդրումը անհրաժեշտ պայման է երկրում փաստերի և ծախս-օգուտ հաշվարկի վրա հիմնված արդյունավետ, որակյալ և թափանցիկ որոշումների կայացման համար: Այլ կերպ ասած՝ ԿԱԳ-ը կարգավորման արդյունքում առաջացող հնարավոր ծախսերի և օգուտների, հետևանքների և ազդեցությունների գնահատման վերլուծական մոտեցում է, որը հնարավորություն է ընձեռում կառավարությանն ընտրելու խնդրի հնարավոր լուծումներից ամենաարդյունավետը: ԿԱԳ-ը համակարգային մոտեցում է. այն թույլ է տալիս գնահատել կարգավորման դրական և բացասական ազդեցությունները, ինչը ենթադրում է ԿԱԳ իրականացում նախքան կարգավորման ընդունումը (Ex-ante Impact Assessment):

ԿԱԳ համապարփակ համակարգի ներդրումը թույլ է տալիս բարելավել որոշումների կայացման գործընթացը, մասնավորապես.

1. Սահմանել օրենսդրական նախաձեռնության մշակման առավել խիստ պահանջներ և որոշումների կայացման կանոնակարգված մոտեցումներ՝ հիմնավորված փաստերով և ծախս-օգուտ հաշվարկներով,
2. Նվազեցնել օրենսդրական ձախողումների հավանականությունը: ԿԱԳ մեթոդաբանության հիմքում դրված է խնդրի, դրա պատճառահետևանքային կապերի, ազդեցությունների բացահայտման, ինչպես նաև ծախս-օգուտ հաշվարկի իրականացման և տարբերակների համադրման անհրաժեշտությունը: Այս մոտեցումը թույլ է տալիս օրենսդրական նախաձեռնություն մշակողին բացահայտել իրական պատկերը և, հետևաբար, թիրախավորել խնդրի առաջացման իրական պատճառները՝ վերացնելով դրանք կամ թուլացնելով պատճառահետևանքային կապերը,
3. Զարգացնել կարգավորման հաշվետվողականության համակարգ և որոշումների ընդունման թափանցիկություն,
4. Գնահատել նախկինում կայացված որոշումների արդյունավետությունը և անել հետևություններ, քանի որ ԿԱԳ համակարգը ստեղծում է հիմքեր կարգավորման ընդունումից հետո (Ex-post) վերլուծությունների իրականացման համար,
5. ԿԱԳ-ով պահանջվում է սահմանված ժամկետներում և պահանջներով հանրային քննարկումների իրականացում, որը մասնավոր հատվածի ներկայացուցիչներին և հասարակության մյուս խմբերին տեղեկացված լինելու և իրենց դիրքորոշումը արտահայտելու հնարավորություն կտա: Հանրությանը օրենսդրական

նախաձեռնության մշակման գործընթացին մասնակից դարձնելը նաև նպաստում է կառավարության հանդեպ վստահության աճին և ամրապնդմանը:

2. ԻՆՉՈՒՒ Է ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԿԱՐԵՎՈՐ

Լավ մշակված և համակարգված ԿԱԳ-ը նպաստում է որոշումների կայացման գործընթացի բարելավմանը և առավել արդյունավետ որոշումների կայացմանը: Մասնավորապես.

1. ԿԱԳ-ը նպաստում է որոշումների կայացման փուլերում համատեղ քննարկումների իրականացմանը. ԿԱԳ-ը միասնական դաշտ է ստեղծում առաջադրված տարբերակների միջև փոխհամաձայնեցված լուծում գտնելու հարցում՝ ոչ միայն որպես վերլուծական, այլև ուղղորդող գործիք, որը որոշումների կայացման գործընթացում հնարավորություն է տալիս հաշվի առնել բոլոր կողմերի կարծիքները: Այսպիսով, ԿԱԳ-ը համակարգում է հանրության տարբեր շերտերի շահերը՝ դրանով իսկ ապահովելով փոխհամաձայնեցված տարբերակների բացահայտում և քաղաքական համաձայնություն՝ վերացնելով ոլորտային շահերով առաջնորդվելու կարծրատիպը: ԿԱԳ-ը բարձրացնում է կարգավորիչ որոշումների որակը՝ բացառելով ձևական մոտեցումների առկայությունը որոշումների կայացման գործընթացում՝ ստեղծելով հիմքեր փաստահենք որոշումների կայացման համար: Օրենսդրական նախաձեռնության մշակման գործընթացի սկզբում համակարգված հարցադրումների իրականացումը հեշտացնում է օրենսդրական նախաձեռնության մշակումը, բացահայտում է առկա խնդրի պատճառահետևանքային կապերը և հավանական ազդեցությունները, թույլ է տալիս համեմատել խնդրի կարգավորման առաջարկվող տարբերակները և ընտրել կարգավորման նախընտրելի տարբերակ, հաշվի է առնում որոշման մշակման ընթացքում չնախատեսված հետևանքները,
2. ԿԱԳ-ն օգնում է հասկանալ կառավարության կողմից ձեռնարկվող գործողությունների իրական ազդեցությունները: ԿԱԳ-ի ընթացքում անհրաժեշտ է գնահատել տվյալ կարգավորիչ միջամտության անհրաժեշտությունը և արդյունավետությունը: Այն օգնում է ռացիոնալ տեղաբաշխել ռեսուրսները և նվազեցնել օրենսդրական կարգավորման հնարավոր ռիսկերը՝ հրաժարվելով պակաս արդյունավետ կարգավորումներից և կանգ առնելով առավել արդյունավետ տարբերակների վրա,
3. ԿԱԳ-ը բարձրացնում է որոշումների կայացման գործընթացի թափանցիկությունը և կառավարության հաշվետվողականությունը: Այն հնարավոր է դարձնում ավելի շրջահայաց որոշումների կայացումը: Այն դեպքում, երբ ԿԱԳ իրականացման ընթացքում պատշաճ կերպով հաշվի են առնվում հանրային քննարկումների արդյունքները, ԿԱԳ-ը օգնում է տնտեսվարող սուբյեկտներին և քաղաքացիներին

օգտվել օրենսդրական նախաձեռնության և կարգավորման առաջարկվող տարբերակների ընտրության մասին իրազեկված լինելու իրենց իրավունքից:

II. ՈՐՈՂՔ ԵՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՔԱՅԼԵՐԸ

ԿԱԳ համակարգը ենթադրում է վերլուծական գործընթաց, որն ունի 6 հստակ քայլեր, դրանք են՝



ԿԱԳ-ի յուրաքանչյուր քայլ ընթանում է հետազոտական, վերլուծական և ապացուցողական աշխատանքների իրականացման, իսկ հարկ եղած դեպքում, նաև շահառուների հետ հանրային քննարկումների իրականացման միջոցով:

1. ԽՆԴՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

1.1. Ի՞նչ է խնդիրը

Խնդիրը՝ որպես երևույթ, մտածանք սահմանում չունի: Եթե ամփոփ սահմանենք խնդիրը, ապա դա «**տարբերությունն է այն բանի, ինչ ունենք, և այն բանի, ինչ ցանկանում ենք ունենալ**»: Խնդիրը գերակշռող դեպքերում առաջացնում է վնաս կամ կորուստ (որևէ բացասական հետևանք), որը ենթակա է վերացման, իսկ խնդրի պատճառները՝ այն վնասակար գործոններն են, որոնք առաջացնում են այդ խնդիրը:

1.2. Ի՞նչ է նշանակում կարգավորման ենթակա խնդիր

Կարգավորման ենթակա խնդիրը ԿԱԳ շրջանակներում բացահայտվող խնդիրն է: ԿԱԳ իրականացնողն օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալիս պարտավոր է հստակ ներկայացնել խնդրի առարկան: Այն կարող է առնչվել ամենատարբեր երևույթների՝ տեղեկատվության, գնի, որակի, քանակի, շուկայի հասանելիության, շուկայի անարդյունավետության/անկատարության, կարգավորման բացասական ազդեցության, քաղաքացիների հիմնարար իրավունքների պաշտպանության երաշխիքների տրամադրման և այլն:

1.3. Ինչու՞ է կարևոր խնդրի սահմանումը

Խնդրի վերլուծությունը, որոշումը և սահմանումը ԿԱԳ գործընթացի կարևորագույն քայլերից են: Եթե խնդիրը, դրա պատճառները և հետևանքները չեն ենթարկվել խորը վերլուծության, և խնդիրը հստակ չի սահմանվել, ապա շատ հավանական է, որ իրատեսական լուծումներ չառաջակվեն:

1.4. Ինչպե՞ս է խնդիրը որոշվում և սահմանվում

Խնդրի որոշման գործընթացը միմյանց փոխլրացնող վերլուծական գործողությունների շարք է: Խնդիրը որոշելու համար նախ **պեղք է ապացուցել, որ այն գոյություն ունի**: ԿԱԳ-ը փաստերի վրա հիմնված և ապացուցողական գործընթաց է, որը նշանակում է, որ յուրաքանչյուր վերլուծական գործողության ընթացքում պետք է հավաքագրել և օգտագործել այն բոլոր հնարավոր փաստերը, որոնք կարող են ապացույց լինել և օգնել հասկանալու խնդիրը, որոշելու դրա կարևորությունն ու հրատապությունը:

Խնդրի որոշման և սահմանման գործընթացը ենթադրում է՝

1. խնդրի դրսևորումների ուսումնասիրություն, խնդրի բնույթի վերլուծություն,

2. պատճառների վերհանում, պատճառի և պատճառը պայմանավորող գործոնների տարբերակում,
3. հետևանքների գնահատում և պատճառահետևանքային կապերի հետազոտում,
4. խնդրի նախնական սահմանում,
5. խնդրի ազդեցության շրջանակների և ազդեցության բնույթի որոշում,
6. խնդրի հավանական զարգացման կամ միտումների գնահատում,
7. խնդրի վերաձևակերպում կամ վերջնական սահմանում:

Խնդրի որոշման և սահմանման գործընթացը պետք է իրականացնել բացառապես տեղեկատվության հավաքագրման ու պահանջվող տվյալների առկայության պարագայում և դրանց հիման վրա:

Խնդիրը կարող է տարբեր դրսևորումներ ունենալ. օրինակ, եթե երեխան հիվանդ է, ապա հիվանդությունը կարող է դրսևորվել տենդով, հազով, փոշոտցով կամ այլ կերպ (հիվանդության արտահայտման ձև), որոնց միջոցով միայն կարող ենք փաստել, որ երեխան առողջական խնդիր ունի:

Խնդիրը հասկանալու համար անհրաժեշտ է պարզել, թե ինչ մարտահրավերներ կան, կամ ինչն է խոչընդոտում ցանկալի իրավիճակի հաստատմանը: Ուստի խնդրի որոշումը ենթադրում է դրա պատճառահետևանքային կապերի վերլուծություն, և խնդրի որոշման արդյունավետությունը կախված է այդ պատճառահետևանքային վերլուծության արդյունքից: Սակայն, պետք է հիշել, որ այս վերլուծությունն իր բույթով ընդհանրական է և շատ ընդգրկուն, իսկ խնդիրը պետք է սահմանված լինի հստակ: Խնդրի ձևակերպման հստակությունից է կախված խնդրի այնպիսի նպատակների սահմանումը, որոնք կարող են ապահովել խնդրի իրատեսական լուծման տարբերակների ընտրությունը: Հստակության բացակայության դեպքում հնարավոր չէ խնդրին տալ վերջնական լուծում, և այն կարող է առաջացնել նոր խնդիրներ:

Ոչ հստակ որոշված խնդիր

- Առաջարկված լուծման տարբերակները չլուծեցին խնդիրը, այն նորից ի հայտ եկավ
- Խնդիրն առաջացրեց նոր խնդիրներ

Հստակ որոշված խնդիր

- Առաջարկված լուծման տարբերակները լուծեցին խնդիրը

Խնդրի հստակությունը պահանջում է նաև խնդրի ճիշտ ձևակերպում. երկար և բարդ մտքերից խուսափելը նպաստում է խնդրի լիարժեք ընկալմանը:

Խնդրի սահմանումը պետք է լինի կարճ, կոնկրետ և առավելագույնս հստակ ձևակերպված: Որոշ դեպքերում խնդիրը կարող է ունենալ մի քանի ենթախնդիր, սակայն, անկախ այս հանգամանքից, խնդիրը պետք է ունենա 1 ընդհանուր նպատակ:

Առկա են խնդրի ախտորոշման և սահմանման տարբեր մեթոդաբանություններ, որոնց հիմքում ընկած են խնդրի որոշման տարբեր մոտեցումներ և մեխանիզմներ, սակայն գրեթե բոլոր դեպքերում գոյություն ունեն համընդհանուր սկզբունքներ, որոնցով կարգավորողը պետք է առաջնորդվի.

- 1. Կարգավորումը չի կարող լինել խնդրի էությունը:** Սա նշանակում է, որ եթե որևէ իրավիճակ կարգավորված չէ կա՛մ մասամբ, կա՛մ թերի է կարգավորված, ապա կարգավորման բացակայությունը կա՛մ մասամբ, կա՛մ թերի կարգավորված լինելն ինքնին խնդիր չէ: Այս դեպքում կարգավորումը համարվում է խնդրի լուծման տարբերակ, այլ ոչ թե խնդիր:
- 2. Կարգավորողի կողմից խնդրի ընկալումը կարող է տարբերվել շահառուների կողմից խնդրի ընկալումից:** Ուստի անհրաժեշտ է այն քննարկել խնդրի հետ անմիջական առնչություն ունեցող կամ ազդեցության ենթարկվող շահառուների հետ:
- 3. Խնդրի վերլուծությունը և որոշումը բարդացնող հանգամանքներ են դրա երկրորդային պատճառները, հետևանքները և այլ մանրամասնություններ, որոնք կարող են շեղել խնդրի խորքային պատճառներից և հանգեցնել դրանց նույնականացմանը բուն խնդրին:** Ուստի անհրաժեշտ է մանրակրկտորեն կատարել խնդրի ծնող խորքային պատճառների վերլուծություն՝ բացը որոշելու համար:
- 4. Խնդրի սահմանումը չի կարող արտացոլել և պարունակել դրա լուծման տարբերակի որևէ բաղադրիչ:** Խնդրի հիմքում ընկած են երկու իրավիճակ՝ ընթացիկը և ապագան: Այսինքն, ընթացիկ ոչ ցանկալի իրավիճակը և ցանկալի այն իրավիճակը, որը շահառուները ցանկանում են ունենալ: Ցանկալի և ոչ ցանկալի իրավիճակների տարբերությունը հենց այն «բացն» է, որը պետք է վերացնել: Սակայն ոչ ցանկալի իրավիճակից ցանկալի իրավիճակին անցում կատարելիս կարող են հայտնվել բացասական երևույթներ կամ թերություններ, որոնք կարող են դժգոհություն առաջացնել շահառուների մոտ՝ անկախ այն հանգամանքից, որ ոչ ցանկալի իրավիճակն այլևս չկա: Այս ոչ ցանկալի երևույթների առկայությունն առաջացնում է «դիլեմա». այսինքն, հնարավոր է, որ շահառուների դժգոհությունը կապված լինի հենց խնդրի հնարավոր լուծումների հետ:

Սակայն խնդրի սահմանման մեջ մենք չենք կարող դրա մասին խոսել՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ լուծման տարբերակները պետք է բաց դաշտ լինեն վերլուծության մեջ, և դնելով որոշակի լուծման գաղափարներ՝ մենք կսահմանափակենք մեզ:

Օրինակ 1. Ինչպե՞ս սահմանել խնդիրը

Օդանավակայանին հարող տարածքներում բնակիչները (շահառուներ) բողոքում են և ցանկանում են, որ ինքնաթիռներից առաջացող աղմուկը պակասի, բայց ոչ իրենց ժամանակի և ծախսերի ավելացման ու օգուտների նվազման հաշվին: Այսինքն, դա կարող է լուծվել, եթե օդանավակայանը փակեն կամ նվազեցնեն թռիչքները կամ իրենց տեղափոխեն այլ վայր, սակայն կան նաև շահառուներ, ովքեր գիտակցում են, որ այս մտքեցումները չեն բխում իրենց իսկ շահերից, քանի որ նրանք էլ ունեն ինքնաթիռով թռչելու կարիք, իսկ որոշներն էլ գիտակցում են, որ մեծ և հզոր օդանավակայան ունենալը տնտեսապես շահավետ է ինչպես երկրի, այնպես էլ իրենց համար:

Խնդրի էությունը երևում է հենց այս իրարամերժ շահերում: Ահա այստեղ է, որ զգացվում է լարվածությունը՝ «**աղմուկը չլինի, բայց թռիչքներ կատարելու հնարավորությունը լինի**»: Եթե հենվենք ինքնաթիռների տեխնիկական հզորությունների վրա, ապա խնդիրը կարող ենք ձևակերպել, օրինակ այսպես, «**Օդանավակայանի ավիացիոն հզորությունների պահպանման պարագայում օդային երթուղուց աղմուկի բարձր մակարդակ**» (այսինքն մենք ցանկանում ենք նվազեցնել աղմուկը օդային երթուղուց, սակայն առանց օդանավակայանի ավիացիոն հզորությունների նվազեցման): Այս ձևակերպմամբ խնդրի լուծման տարբերակը կլինեն, օրինակ, անաղմուկ շարժիչներ ունեցող ինքնաթիռների ձեռքբերումը: Բացի դրանից կարող է դիտարկվել նաև օդանավակայանն ավելի նոսր բնակեցված վայր տեղափոխելու տարբերակը: Իհարկե կարող են լինել նաև խնդրի այլ ձևակերպումներ. ավելի արստրակտիկ ձևակերպումները կարող են տանել ավելի լայն լուծման տարբերակների: Խնդրի որոշման բազմակողմանի վերլուծության պարագայում լուծման հնարավորությունները ավելի են մեծանում, իսկ սա նշանակում է, որ ԿԱԳ իրականացնողի կողմից ծախսվող ռեսուրսները նույնպես մեծանում են՝ այն նկատարադրով, որ ավելի շատ աշխատանք պետք է իրականացվի այդ բոլոր տարբերակները համեմատելու և դրանցից նախապատվելի տարբերակն ընտրելու համար: Սակայն հնարավորությունը, որ գտնված միակ լուծումը կբավարարի շահառուների ավելի լայն շրջանակների շահերը, նույնպես կավելանա:

Ներկայացված օրինակում հեշտ է գտնել դիլեման: Պետք է պակասեցնել ինքնաթիռներից առաջացող աղմուկը, բայց միևնույն ժամանակ, պահպանել դրանցից առաջացող օգուտները: **Ահա հենց այստեղ է խնդրի սահմանման իմաստը:** Եթե վերացնենք աղմուկը, ապա խնդիրը կլուծվի: Բայց թե ինչու աղմուկի վերացման այդ ցանկալի իրավիճակին չենք կարողանում հեշտությամբ հասնել, դա արդեն խնդրի դիլեման է: Այլ կերպ ասած՝ շահառուների կողմից ցանկալի իրավիճակին հասնելիս պետք է ուշադրություն դարձնել, թե խնդրի լուծման այլընտրանքների տեսանկյունից կոնկրետ ինչն է այդ գործընթացի իրականացումը դարձնում խնդրահարույց. հենց այդ հակասությունն է ձևավորում դիլեման՝ առանց որի խնդիրը չի լինում:

Խնդիրը պետք է ունենա բաց (ցանկացածի և եղածի տարբերություն) և դիլեմա (պատճառ, թե ինչու հնարավոր չէ հեշտությամբ լրացնել այդ բացը):



Բերենք վերոնշյալ կանոնից շեղման օրինակ, որտեղ խնդիրը սխալ է սահմանվել:

Օրինակ 2. Խնդրի սահմանման սխալ

Չկա դիւնա – Առանց դիւնայի ձևակերպված խնդրում ակնհայտ երևում է՝ ինչ են ուզում, սակայն չգիտեն՝ ինչու դա չի ստացվում, որովհետև չգիտեն՝ որտեղ է խնդիրը, և ինչի վրա հենվեն: Եթե այդ ոլորտում կարգավորողը վստահելի փորձ չունի և շահառուների հետ էլ քննարկումներ չի իրականացրել, ապա ԿԱԳ-ը, ամենայն հավանականությամբ, կձախողվի:

Օրինակ՝ «Թունավոր նյութերի արտանետումների բարձր մակարդակ», «Ճանապարհային խցանումներ» կամ «Շահույթի ցածր մակարդակ»:

Այս առանց դիւնա խնդիրները կարող են լուծվել շար պարզունակ կամ «տարօրինակ» տարբերակներով: Օրինակ՝ «Փակել արտանետումներ առաջացնող օբյեկտները», «Արգելել ավտոմեքենաներ վարելը» կամ «Կողոպտել բանկ»:

Թերևս, եթե նույնիսկ խնդրի սահմանման մեջ չի արտացոլվում դիւնան, ապա այն պետք է արտացոլվի խնդրի հաջորդող վերլուծական քայլերում՝ դրսևորումներում, պարճառահեղանքային կապում և այլն:

Շահառուների մասով հարկ է նշել, որ միևնույն խնդիրը կարող է ունենալ տարբեր շահառուներ, իսկ շահառուներն էլ կարող են ենթարկվել տարբեր ազդեցությունների և ունենալ տարբեր ցանկություններ: Խնդիրը նույնիսկ կարող է դինամիկ լինել ժամանակի մեջ: Այս դեպքերում կարգավորողի քայլերը պետք է լինեն խնդրի դիւնման փնտրելը և հստակ խնդիրը սահմանելը, այնուհետև պետք է քննարկել այս ամենը շահառուների հետ, ապա անհրաժեշտության դեպքում վերաձևակերպել խնդիրը:

Մինչև շահառուների հետ քննարկելը խնդիրը սահմանվում է տեսականորեն կամ դրան տրվում է նախնական գնահատական:

Ի լրումն խնդրի որոշման և սահմանման վերը նշված մեթոդաբանության՝ առաջարկվում են նաև այլ օժանդակ մոտեցումներ, որոնք ուղղորդում են կարգավորողին առավել կազմակերպված մոտենալ խնդրի որոշմանը: Դրանցից է ստորև բերված պարզ հարցաշարը.

1. Ո՞րն է ի հայտ եկած խնդիրը կամ պատճառված վնասը/կորուստը, և ի՞նչ հանգամանքներում է այն առաջացել:
2. Որո՞նք են խնդրի հիմնական պատճառները և գործոնները:
3. Որո՞նք են խնդրի հետևանքները: Որքա՞ն մեծ, լուրջ կամ հրատապ են դրանք:
4. Ովքե՞ր են շահառուները, ո՞վ է տուժում, ինչպե՞ս և ի՞նչ աստիճանի:
5. Ո՞վ է պնդում, որ դա խնդիր է:

Ձեռնարկի Հավելված 1-ում ներկայացված է ավելի լայն մասնագիտական հարցաշար, որով պետք է առաջնորդվել ԿԱԳ վերլուծությունների իրականացման ժամանակ:

ԿԱԳ մեթոդաբանությամբ հատկապես կարևորվում է խնդրի բնույթի որոշումը: Ստորև ներկայացված են կարգավորման ենթակա խնդիրների հնարավոր բնույթներ, դրանց օրինակներ և կարգավորման հնարավոր տարբերակներ, որոնց վերլուծումն ու գնահատումը կարևոր դեր ունի առաջարկվող կարգավորման հիմնավորման հարցում: Դրանք են՝



1. Շուկայի ծախողում/անկատարություն

Սա տեղի է ունենում, երբ տնտեսական արդյունքի ստեղծման գործընթացն անարդյունավետ է. ռեսուրսների տեղաբաշխումը օպտիմալ չէ, որի արդյունքում սոցիալական առավելագույն արդյունք չի ստացվում (գերիշխող դիրք, բնական մոնոպոլիա, ցածր մրցակցություն և այլն):

Օրինակ՝ սպառողների մասով հաշվի չեն առնվել օդի աղտոտվածության ծախսերը նրանց կողմից սպառվող ապրանքների գներում կամ հաշվի չեն առնվել վարորդների կողմից մեքենա օգտագործելուց այլ մարդկանց վրա դրվող ծախսերը, որոնք առաջանալու են խցանման մակարդակի աճից: Արդյունքում կառաջանա օդի՝ օպտիմալ մակարդակից ավելի բարձր աղտոտվածություն:

Օրինակ՝ երբ մարդը պատվաստվում է, նա ապահովագրում է հիվանդություններից ոչ միայն

2. Կարգավորման ծախսեր

Սա տեղի է ունենում, երբ առաջարկվող կարգավորումը հիմնավորվել և իրականացվել է, սակայն խնդիրը դրանով չի լուծվել, և նույնիսկ առաջացրել են նոր խնդիրներ:

Օրինակ՝ պետությունը բարձրսահմանային տարածքներում դպրոցների, հիվանդանոցների և գյուղատնտեսական ֆերմաների համար նախատեսել է կադրեր պատրաստել՝ բուհերում անվճար տեղեր հատկացնելով և պահանջելով 2 տարվա պարտադիր աշխատանք այդ վայրերում, իսկ նորմը չկատարելու համար նախատեսել է կրկնակի տուգանքներ: Սակայն խնդիրը դրանով չի լուծվել, և ավելի շատ պրոբլեմներ են առաջացել, մասնավորապես՝ պայմանավորված այդ վայրերում պարտադիր աշխատելու պայմանի խախտմամբ և դրա համար սահմանված տուգանքների կիրառման անհնարինությանը (ելնելով շրջանավարտների անվճարունակության կամ երկրից բացակայելու հանգամանքից):

Շնորավոր կարգավորումը

Պետության կողմից միջամտությունը պետք է լինի հավասարակշռված: Պետք է առաջարկվի հանել նպատակային ուսուցման գործող նորմը և փոխարենը նույն ծախսերով առաջարկել ազատ ընտրություն (օրինակ՝ նպատակային ուսուցման ֆինանսավորման փոխարեն՝ այդ ֆինանսական միջոցներն ուղղել բարձրաստիճանային տարածքներում համապատասխան հաստիքների աշխատավարձերի և հավելավճարների վճարմանը):

3. Անհավասարություն

Տեղի է ունենում այն դեպքում, երբ կարգավորումը հաշվի չի առնում հավասարության սկզբունքները, հնարավորությունները, գործընթացները և արդյունքները: Այս դեպքում անհավասարությունը կարող է վնասել տնտեսական աճին:

Օրինակ՝ ապահովված և կրթված ընտանիքներում ծնվածների շանսերը լավ կրթություն ստանալու և հնուր աշխատող դառնալու համար ավելի մեծ են, քան հակառակ իրավիճակում գտնվողներինը: Այսինքն, հավասար կրթության սկզբունքը խախտված է:

Օրինակ՝ կենսաթոշակի հարցում միջսերնդային հավասարության սկզբունքը խախտվում է, երբ կենսաթոշակի կարգավորումները հաշվի չեն առնում գալիք սերնդի բեռը: Այսինքն դրանք անհավասար են, խտրական և ոչ հիմնավորված:

Շնորավոր կարգավորումը

Կարգավորիչ գործողությունները պետք է ուղղված լինեն հավասարության սկզբունքի պահպանմանը:

4. Վարքագծային սխալներ

Տեղի է ունենում, երբ կարգավորումը առաջացնում է վարքագծային կախվածություն:

Օրինակ՝ սպառողների իրազեկվածության համար օրենքով նախատեսված է սպրանքի մակնշման նորմ, սակայն դրա չափից շատ մանր գրվածքը կամ տեղեկատվության ծավալը կարող են հանգեցնել այդ կարգավորումից օգտվողների թվաքանակի նվազման:


Օրինակ՝ ապացուցված է, որ կենցաղային էլեկտրաէներգիա սպառողներից սպառման վերաբերյալ պարբերական ցուցանիշներ ստանալը և հրապարակելը օգնում է այլ սպառողներին (հարևաններին) խնայողաբար այն սպառել:

1.5. Ի՞նչ է խնդրի պատճառների վերլուծումը

Խնդրի պատճառները կարող են բազմազան լինել, դրանց հետևանքները՝ նույնպես: Խնդրի լուծման արդյունավետությունն ապահովելու նպատակով դրանց կարող են տրվել կշիռներ՝ ըստ ազդեցության կարևորության: Պատճառները կարող են լինել՝

1. առաջնային պատճառներ - ուղղակի,
2. երկրորդային պատճառներ - անուղղակի,
3. խորքային պատճառ:

Խնդրի սահմանման ընթացքում ընդունված սխալներից խուսափելը կարևոր նախապայման է կարգավորողի համար: Կարևոր է չփոթել խնդիրը և դրա պատճառները կամ հետևանքները, ինչը շատ դեպքերում իսկապես շփոթեցնող է լինում: Ձեռնարկի Հավելված 2-ում զետեղված են խնդրի սխալ և ճիշտ սահմանման օրինակներ: Այս հարցում կարևոր է պատճառահետևանքային կապի վերլուծության մեթոդի կիրառումը:



Պատկերված սխեման պարզ ցույց է տալիս, թե ինչպես է խնդիրն առաջանում: Նախ դրա առաջացմանը նպաստում են պատճառային գործոնները, որոնք կարող են մեկ խորքային

պատճառ ունենալ, իսկ ավելի հազվադեպ՝ հավասարազոր պատճառներ: Օրինակ՝ երեխայի հիվանդության պատճառ կարող է դառնալ դրսում ցուրտ եղանակը և ոչ համապատասխան հագուստը: Եթե հագուստը համապատասխան լիներ, ապա երեխան նույնիսկ ցուրտ եղանակին հնարավոր է չմըսեր և չհիվանդանար: Եթե եղանակը տաք լիներ, իսկ հագուստը ոչ համապատասխան, ապա երեխան ավելի քիչ հավանական է, որ հիվանդանար: Ուստի, ցուրտ եղանակը այս պարագայում կարող ենք համարել խնդրի առաջնային կամ խորքային պատճառը: Սա փակ շրջան է, որտեղ պատճառը ծնում է խնդիր, իսկ խնդիրը՝ հետևանք, ինչը կարող է մեկ այլ, նոր խնդրի առաջացման պատճառ հանդիսանալ:

Պատճառահետևանքային կապը գործնականում գնահատվում է տարբեր մեթոդներով, որոնցից հայտնի է Իշիկավա գծապատկերը (*Cause-effect Fishbone, Ishikawa diagram*): Սա վերլուծական գործիք է, որը օգտագործվում է խնդրի (էֆֆեկտի) հնարավոր պատճառները գտնելու և կապակցված ձևով դրանք ներկայացնելու համար:

Պատճառահետևանքային կապի վերլուծության մեկ այլ ընդունված մեթոդ է այսպես կոչված «խնդրի ծառի» կառուցումը: Օգտագործելով այս գրաֆիկական եղանակը՝ խնդիրը կարող է «ճյուղավորվել» պատճառների և հետևանքների: Խնդիրը սահմանվում է պատճառների և հետևանքների վերլուծության և դրանց արդյունքները հաշվի առնելու միջոցով: ԿԱԳ վերլուծության առաջին կարևորագույն քայլը խնդրի դրդիչների կամ հիմնական պատճառների բացահայտումն է և հաստատումը, թե ինչպես են այդ գործոնները հանգեցրել խնդրի առաջացմանը: Ուստի, պետք է միշտ անդրադարձ կատարել վերհանված և հստակեցված պատճառներին և գտնել դրանց միջև օբյեկտիվ պատճառահետևանքային կապերը:


Խնդրի ծառը օգնում է՝

1. հստակեցնել բոլոր առկա խնդիրները, որոնք վերաբերում են վերլուծության ենթակա թեմային (անհրաժեշտ է կենտրոնանալ իրական խնդիրների, այլ ոչ թե թվացյալ կամ ապագա խնդիրների վրա),
2. տարբերակել խնդրի պատճառները, արտահայտման ձևերը, այսինքն, ինչպես է այն դրսևորվում, և դրա հետևանքները,
3. բացահայտել տուժած խմբերը,
4. սահմանել խնդրի հիերարխիան:

1.6. Ինչպե՞ս կառուցել խնդրի ծառը

Խնդրի հիմնարար պատճառները ներկայացվում են ծառի վերին մասում («ճյուղերում»): Նրանք կարող են լինել այնքան, որքան առկա են, և այնքան մանրամասն, որքան անհրաժեշտ է: Կարող են լինել առաջնային և երկրորդային պատճառներ: ԿԱԳ-ի շրջանակներում վերլուծման ենթակա պատճառները որոշվում են և կախված են ԿԱԳ-ի գերակայություններից, կարողություններից և տրամադրության տակ գտնվող միջոցներից:

Խնդրի ծառ



1.7. Խնդրի մեծությունը և հրատապությունը

Խնդիրը տնտեսության ոլորտների և սոցիալական խմբերի վրա կարող է ազդել տարբեր ձևերով: Դրա ազդեցությունը կարող է դասակարգվել՝

1. ըստ տարիքի,
2. ըստ աշխարհագրական խմբերի,
3. ըստ եկամտի բաշխվածության,
4. ըստ սոցիալական խմբերի,
5. ըստ տնտեսական կատեգորիայի,
6. այլ:

Նպատակահարմար է կազմել նաև շահառուների քարտեզ (Տե՛ս Ձեռնարկի Հավելված 3), ինչը թույլ կտա բացահայտել ոչ միայն բոլոր այն անձանց, ովքեր կարող էին ուղղակիորեն կամ անուղղակիորեն կրել խնդրի ազդեցությունները և հանդիսանալ խնդրի շահառու, այլ նաև գնահատել նրանց կողմից խնդրի վրա ներգործության ռիսկերը և դրանց աստիճանը:

1. Խնդրի մեծությունը կամ ուժգնությունը

ԿԱԳ իրականացնողը պետք է գնահատի խնդրի մեծությունը կամ դրա ուժգնությունը թեկուզ միայն այն բանի համար, որ խնդիրը կարող է վերաբերել միայն տնտեսության մի փոքր սեգմենտի կամ բնակչության մի փոքր հատվածի կամ ունենալ շատ չնչին ազդեցություն, ինչը կարող է համարժեք չլինել այն ռեսուրսներին, որը կարգավորողը պատրաստվում է ներդնել ԿԱԳ իրականացման համար: Սա կոչվում է «Համարժեքության որոշման սկզբունք» և կիրառվում է կարգավորիչ միջամտության նպատակահարմարությունը որոշելիս՝ պարզեցված ԿԱԳ իրականացման փուլում:

Խնդրի մեծությունը կարող է գնահատվել տարբեր եղանակներով և հիմնվել տարբեր չափման համակարգերի վրա, օրինակ՝

- 1) ազդեցության ենթարկվող կազմակերպությունների թիվը (ձեռնարկատիրությամբ զբաղվող սուբյեկտների ընդհանուր թվում կամ տվյալ տնտեսության ոլորտում զբաղված սուբյեկտների թվում),
- 2) ՀՆԱ-ի վրա խնդրի ազդեցության չափը,
- 3) խնդրի հետևանքով տուժած բնակչության թիվը,
- 4) այլ:

Այնուհետև ընտրվում է համապատասխան գնահատման համակարգ՝ խնդրի մեծությունը չափելու համար: Օրինակ՝ կարող է սահմանվել, որ խնդիրը «փոքր» է, եթե այն ազդում է մինչև 5,000 կազմակերպությունների վրա, «միջին»՝ եթե այն ազդում է մինչև 30,000 կազմակերպությունների վրա, և «մեծ»՝ եթե այն ազդում է ավելի քան 30,000 կազմակերպությունների վրա (պայմանով, որ գրանցված կազմակերպությունների ընդհանուր թիվը, օրինակ, կազմում է մոտ 100,000):

2. Խնդրի հրատապությունը

Խնդրի հրատապությունը գնահատելը նույնպես կարևոր է, քանի որ կարող են լինել դեպքեր, երբ օրենսդրական նախաձեռնությունն իր հրատապ կամ անհետաձգելի կարգավիճակի պատճառով չի կարող ենթարկվել ԿԱԳ-ի՝ դրա համար սահմանված կարգով և ժամկետներում:

Իսկ ԿԱԳ-ի ենթարկման դեպքում խնդրի աշխտորոշման հարցում հրատապության որոշումն ունի տեղեկատվական բնույթ: Խնդրի հրատապությունը դիտարկելիս պետք է առաջնորդվել հետևյալ մոտեցումներով՝

- 1) խնդրի հրատապությունը պետք է դիտարկել որպես անսպասելի իրավիճակ՝ թաքնված խնդրի հանկարծակի սրմամբ կամ վթարային իրավիճակի առաջացմամբ,

- 2) հրատապությունը կարող է գնահատվել՝ հաշվի առնելով տվյալ հարցի վերաբերյալ հակասությունները հասարակության շրջանում, այսինքն՝ որքանով է խնդիրը բախվում հանրային շահերին՝ որպես մեկ ամբողջություն, հանրային պաշտպանությանը, կամ արդյոք համապատասխան շահառուների դիրքորոշումները խնդրի շուրջ հակասական են,
- 3) որպես հրատապության մեկ այլ գործոն կարող է հանդես գալ խնդրի քաղաքական կողմը, օրինակ՝ արդյոք խնդիրն ազդեցություն ունի կամ չունի կառավարության ռազմավարական առաջնահերթությունների վրա:

2. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

2.1. Նպատակների սահմանում

2.1.1. Նպատակների սահմանման դերը ԿԱԳ վերլուծությունում

Ցանկացած ԿԱԳ վերլուծություն պետք է ունենա հստակ սահմանված նպատակներ, որոնք անմիջականորեն կապված կլինեն բացահայտված խնդրի լուծման հետ:

«Նպատակ» հասկացության սահմանումը

Միջամտության քանակական կամ որակական արդյունք, որին ուզում ենք հասնել խնդրի լուծման համար:

Նպատակների սահմանումը, խնդրի և դրա պատճառահետևանքային կապերի սահմանումից հետո, ԿԱԳ վերլուծության հաջորդ կարևոր քայլն է. այն ցույց է տալիս, թե ինչին է միտված հասնելու ապագա միջամտությունը, և թե ինչ հիմնական արդյունքներ են ակնկալվում այդ միջամտությունից: Նպատակների սահմանումն՝

1. օգնում է ցույց տալ օրենսդրական նախաձեռնության համապատասխանությունն ու հետևողականությունը և հանդիսանում է միջամտության պատշաճ հիմնավորում,
2. օգնում է հասկանալ ձեռնարկվելիք գործողությունների հիմնական ուղղությունները և որոշել կարգավորման առաջարկվող տարբերակներն ու համեմատել դրանք,
3. օգնում է բացահայտել նպատակային ցուցանիշները՝ օրենսդրական նախաձեռնության նպատակների իրականացումը ստուգելու համար,
4. օգնում է մշտադիտարկել կարգավորիչ միջամտության իրականացումն ու գնահատել ցանկալի արդյունքներին հասնելու կամ չհասնելու փաստը:

2.1.2. Ինչպես ճիշտ սահմանել նպատակները

Նպատակների սահմանման՝ միջազգային պրակտիկայում ընդունված և ամենից տարածված տարբերակը «ՍՄԱՐԹ» («**SMART**») մեթոդի կիրառումն է: Այն կիրառվում է նաև ԿԱԳ վերլուծության իրականացման շրջանակներում նպատակների սահմանման ժամանակ:

Ըստ այս մեթոդի՝ սահմանվող նպատակները պետք է լինեն՝

«ՍՄԱՐԹ» («**SMART**») մեթոդ

S - (SPECIFIC) **ՈՐՈՇԱԿԻ** - Ի՞նչ կոնկրետ արդյունքի ենք ուզում հասնել: Ի՞նչ ենք պատրաստվում անել:

Նպատակները պետք է լինեն որոշակի և հստակ, որպեսզի չենթարկվեն տարատեսակ մեկնաբանությունների: Դրանք պետք է ամբողջությամբ հասկանալի լինեն:

M - (MEASURABLE) **ՉԱՓԵԼԻ** - Արդյո՞ք կարող ենք չափել այդ արդյունքը (Ելակետային և Թիրախային ցուցանիշներ):

Նպատակները պետք է սահմանեն ցանկալի իրավիճակը չափելի ձևով՝ ներկայացնելով այնպես, որպեսզի հնարավոր լինի ստուգել նպատակների իրականացման փաստը:

A - (ACHIEVABLE) **ՀԱՍԱՆԵԼԻ** - Արդյո՞ք կարող ենք հասնել այդ արդյունքին նախատեսվող ժամկետներում և հասանելի ռեսուրսների ու աջակցության պայմաններում:

Նպատակները պետք է սահմանվեն հավակնոտ և հեռանկարային, սակայն, միևնույն ժամանակ, պետք է լինեն իրատեսական, որպեսզի դրանք իրականացնողները կարողանան հասնել այդ նպատակներին:

R (RELEVANT) **ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ** - Արդյո՞ք նպատակը կապված է խնդրի և դրա պատճառահետևանքային կապերի հետ:

Նպատակները պետք է ուղղակիորեն կապված լինեն սահմանված խնդրի և դրա պատճառահետևանքային կապերի հետ:

T (TIME-DEPENDENT) **ԺԱՄԱՆԱԿԻՑ ԿԱԽՅԱԼ** - Ե՞րբ կամ ի՞նչ ժամկետում է իրականացվելու նպատակը:

Նպատակները պետք է ամրագրվեն կոնկրետ ժամկետով կամ ժամանակային տևողությամբ: Հակառակ դեպքում դրանք մնում են անորոշ՝ իրականացման, և անհնար՝ իրականացման փաստի գնահատման տեսանկյուններից:

Ոչ բոլոր դեպքերում է հնարավոր իրականացնել նպատակի՝ ամբողջությամբ «ՍՄԱՐԹ» սահմանում: Նման պարագայում մոտեցումն այն է, որ պետք է աշխատել համապատասխանեցնել նպատակն այս մեթոդի՝ որքան հնարավոր է շատ չափանիշներին: Վերոնշյալ հարցադրումներն օգտակար կլինեն մեթոդի արդյունավետ կիրառության և չափանիշներին համապատասխան նպատակների սահմանման համար:

Օրինակ 3. «ՍՄԱՐԹ» մեթոդի կիրառման միջոցով նպատակի սահմանում

Դիցուք, իրականացվում է ԿԱԳ վերլուծություն, որի շրջանակներում բացահայտվել է՝

- *Խնդիր - ՀՀ 18-35 տարեկան արական սեռի բնակչության շրջանում արյան շրջանառության համակարգի հիվանդություններից վաղաժամ մահացությունների բարձր մակարդակ:*

- Պատրճառ – փվյալ խումբի բնակչության շրջանում ծխախոտային արտադրատեսակների օգտագործման բարձր մակարդակը:

- Նպատակը սկզբնական ձևով սահմանվել է՝ «Կրճատել մահացությունների ռիսկը 50 %-ով»:

«ՍՄԱՐԹ» մեթոդի կիրառման միջոցով նպատակի սահմանման համար անհրաժեշտ է՝

I. համադրել սահմանված նպատակը «ՍՄԱՐԹ» մեթոդի չափանիշների (և դրանց հարցադրումների) հետ կամ գնահատել սահմանված նպատակն, ըստ «ՍՄԱՐԹ» մեթոդի չափանիշների (և դրանց հարցադրումների), հասկանալու համար, թե որքանով է այդ նպատակը «ՍՄԱՐԹ»,

II. դարձնել սահմանված նպատակը հնարավորինս «ՍՄԱՐԹ»՝ ձևափոխելով և լրացնելով այնպես, որ այն համապատասխանի մեթոդի՝ որքան հնարավոր է շատ չափանիշներին:

Համադրումը (գնահատումը) և ձևափոխություններն ու լրացումներն անհրաժեշտ է իրականացնել ըստ մեթոդի յուրաքանչյուր չափանիշի հերթականության:

Որոշակի – նպատակի սահմանման մեջ նշված չէ, թե բնակչության կոնկրետ ո՞ր խմբի մահացությունների կրճատումն է հանդիսանում մեր նպատակը: Անորոշությունից և փարատեսակ մեկնաբանություններից խուսափելու համար անհրաժեշտ է հստակություն մտցնել նպատակի սահմանման մեջ:

Իրականացվող ԿԱԳ վերլուծության շրջանակներում բացահայտված խնդիրը մահացություններն են ոչ թե ՀՀ ամբողջ բնակչության շրջանում, այլ կոնկրետ արական սեռի և 18-35 տարեկան բնակչության շրջանում:

Արդյունքում, «Որոշակի» չափանիշին համապատասխանության ապահովման համար նպատակի սահմանման մեջ պետք է ավելացնել «**ՀՀ 18-35 տարեկան արական սեռի բնակչության շրջանում**» բառերը:

Չափելի – նպատակի սահմանման մեջ «մահացությունների ռիսկը» ներկայացված է որպես չափելի արդյունք: Այսպես հարց է ծագում, թե արդյո՞ք հնարավոր է չափել այս արդյունքը (ինչպես Ելակետային, այնպես էլ Թիրախային ցուցանիշները) և դրա միջոցով ստուգել նպատակի իրականացման փաստը: Մյուս կողմից, «մահացությունների ռիսկը» ձևակերպումն անհրաժեշտ է դիտարկել նաև «Որոշակի» չափանիշին համապատասխանության տեսանկյունից. արդյո՞ք այս ձևակերպումը որոշակի ու հստակ է և չի կարող փարբեր կերպ մեկնաբանվել: Այսպիսով, անհրաժեշտ է «մահացությունների ռիսկը» ձևակերպումը փոխարինել չափելի և կոնկրետ ձևակերպումով: Իրականացվող ԿԱԳ վերլուծության շրջանակներում բացահայտված խնդիրը ոչ թե մահացությունների ռիսկն է, այլ կոնկրետ մահացությունները բացարձակ արժեքով՝ մահացությունների քանակը:

Արդյունքում, «Չափելի» և «Որոշակի» չափանիշներին համապատասխանության ապահովման համար նպատակի սահմանման մեջ «**մահացությունների ռիսկը**» բառերը պետք է փոխարինել «**մահացությունների քանակը**» բառերով:

Հասանելի – նպատակի սահմանման մեջ մահացությունների քանակի կրճատումը «50%»-ով հավակնոյ է, սակայն արդյո՞ք այն իրապեսական է, և իրականացնողները կարող են հասնել այդ արդյունքին: Այսպես կարող է նշվել նաև նպատակի իրականացման համար նախատեսվող ֆինանսական և այլ ռեսուրսների վերաբերյալ տեղեկատվություն: Մահացությունների քանակի կրճատման առավել իրապեսական թիրախային ցուցանիշ է հանդիսանում 2%-ը:

Արդյունքում, «Հասանելի» չափանիշին համապատասխանության ապահովման համար նպատակի սահմանման մեջ «50%-ով»-ը պետք է փոխարինել «2%-ով» և ավելացնել «**Առկա ֆինանսական միջոցների շրջանակներում**» բառերը:

Համապատասխան – արդյո՞ք սահմանված նպատակը կապված է բացահայտված խնդրի և դրա պարզադի հետ: Անհրաժեշտ է ուղղակի ձևով ցույց տալ այդ կապ(եր)ը:

Նպատակի՝ վերոնշյալ չափանիշներին համապատասխանեցման ընթացքում իրականացվել է նաև նպատակի՝ «Համապատասխան» չափանիշին համապատասխանեցում, քանի որ նպատակը որոշ չափով կապվել է ԿԱԳ վերլուծության շրջանակներում բացահայտված խնդրի հետ: Սակայն դա ամբողջությամբ չի իրականացվել:

Իրականացվող ԿԱԳ վերլուծության շրջանակներում բացահայտված խնդիրը տվյալ խումբ բնակչության շրջանում ոչ թե բոլոր տեսակի մահացություններն են, այլ կոնկրետ արյան շրջանառության համակարգի հիվանդություններից վաղաժամ մահացությունները, որի պարճառն էլ, իր հերթին, ծխախոտային արտադրատեսակների օգտագործումն է:

Արդյունքում, «Համապատասխան» չափանիշին համապատասխանության ապահովման համար նպատակի սահմանման մեջ «**մահացությունների քանակը**» բառերից առաջ պետք է ավելացնել «**ծխելու հետևանքով արյան շրջանառության համակարգի հիվանդություններից վաղաժամ**» բառերը:

Ժամանակից կախյալ – նպատակի սահմանման մեջ նշված չէ որևէ ամսաթիվ կամ ժամանակային տևողություն, ինչի արդյունքում պարզ չէ, թե ե՞րբ կամ ի՞նչ ժամկետում է այդ նպատակն իրականացվելու: Այս պարագայում նպատակի («... մահացությունների քանակի՝ 2 %-ով կրճատումն...») իրականացումն անորոշ է, իսկ իրականացման փաստի գնահատումն՝ անհնար: Սահմանվող նպատակի համար կարող է կիրառվել «1 տարի» ժամանակային տևողությունը: Սակայն, քանի որ խնդիրը վերաբերում է մարդկանց առողջությանը, և նման խնդիրների լուծումը պահանջում է ավելի տևական ժամանակ, այդ պարագայում սահմանվող նպատակը չի համապատասխանի «Հասանելի» չափանիշին, քանի որ տվյալ դեպքի համար չի լինի սահմանված բավականին հեռանկարային, ինչպես նաև «Համապատասխան» չափանիշին, քանի որ չի ներկայացնում հեռանկարային և երկարաժամկետ, չի կարող լուծել բացահայտված խնդիրը:

Արդյունքում, «Ժամանակից կախյալ», «Հասանելի» և «Համապատասխան» չափանիշներին համապատասխանության ապահովման համար նպատակի իրականացումը պետք է ապահովվի առաջիկա 5 տարիների ընթացքում, և նպատակի սահմանման մեջ պետք է «2%-ով» բառից առաջ

ավելացնել «տարեկան» բառը, իսկ «Առկա ֆինանսական միջոցների շրջանակներում» բառերից հեյրո՝ «2020-2025 թթ.-ին» բառերը:

Իրականացված քայլերի հիման վրա նպատակը վերջնական արդյունքում սահմանվում է՝ «Առկա ֆինանսական միջոցների շրջանակում 2020-2025 թթ.-ին կրճատել ՀՀ 18-35 տարեկան արական սեռի բնակչության շրջանում ծխելու հետևանքով արյան շրջանառության համակարգի հիվանդություններից վաղաժամ մահացությունների քանակը՝ տարեկան 2%-ով»:

2.1.3. Նպատակների տեսակները

ԿԱԳ վերլուծության իրականացման շրջանակներում տարանջատում են երեք տեսակի նպատակներ՝ ընդհանուր, հատուկ և գործառնական:

Նպատակների տեսակները	
Ընդհանուր նպատակ	Վերջնական նպատակն է, որին օրենսդրական նախաձեռնությունը միտված է նպաստել կամ ակնկալում է հասնել (եթե ոչ ամբողջությամբ, ապա գոնե մասամբ):
Հատուկ նպատակ	Հստակորեն սահմանում է, թե կարգավորիչ միջամտությունն ինչին է ուղղված հասնել: Այն պետք է լինի բավականաչափ «լայն», որպեսզի հնարավորություն տա դիտարկել կարգավորման բոլոր համապատասխան այլընտրանքները՝ առանց նախապես կանխորոշելու որևէ կոնկրետ լուծում:
Գործառնական նպատակ	Վերաբերում է ձեռնարկվելիք գործողությունների վերջնական արդյունքներին: Այն պետք է արտահայտվի չափելի ցուցանիշներով և հստակ ժամկետներով: Որպես այդպիսին, այն պայմանավորված է կարգավորման նախընտրելի տարբերակով և սահմանվում է կոնկրետ գործողությունների արդյունքների տեսքով:

Ստորև ներկայացված են նպատակների՝ ըստ տեսակների սահմանման օրինակներ, որոնք ավելի տեսանելի կդարձնեն նպատակների տարբերակումը:

Օրինակ 4. Նպատակների տեսակներ

Ընդհանուր նպատակ – Բարելավել ՀՀ ներդրումային միջավայրն օտարերկրյա ներդրողների համար

Հատուկ նպատակ – 1. Նվազեցնել ՀՀ-ում օտարերկրյա ներդրողների ներդրումային (ծեռնարկատիրության իրականացման) ծախսերը

2. Պարզեցնել և հստակեցնել ներդրումային միջավայրին առնչվող գործընթացները

Գործառնական նպատակ – 1.1. Մինչև 2021 թվականի վերջ նվազեցնել ՀՀ-ում օտարերկրյա ներդրողների կողմից վճարվող հարկերն ու վճարները 30%-ով

1.2. 2020 թվականի հունվարի 1-ից սահմանել առավելագույն ժամկետ ՀՀ-ում օտարերկրյա սկսնակ բիզնեսի գրանցման համար՝ 5 աշխատանքային օր

2.1.4. Նպատակների միջև կապերը

Տարբեր տեսակի նպատակներ սահմանելիս անհրաժեշտ է տալ հստակ և ճշգրիտ կապեր այդ նպատակների միջև: Նպատակների համակարգված և համահունչ սահմանման համար իրականացվում է դրանց աստիճանավորում. նպատակների դասակարգում ըստ երեք մակարդակների:

Ըստ մակարդակների նպատակների ներկայացման միջազգային պրակտիկայում ընդունված տարբերակը «Նպատակների ծառ»-ի կիրառումն է:




«Նպատակների ծառ»-ը տարբեր մակարդակի նպատակների միջև առկա ուղղահայաց կապերի գրաֆիկական պատկերումն է. յուրաքանչյուր հաջորդ մակարդակի նպատակ գործիք կամ միջոց է հանդիսանում նախորդ մակարդակի նպատակին հասնելու համար: Մասնավորապես՝

Հատուկ նպատակը գործիք է հանդիսանում Ընդհանուր նպատակին հասնելու համար, իսկ Գործառնական նպատակը, իր հերթին, գործիք է հանդիսանում Հատուկ նպատակին հասնելու համար:

Միևնույն ժամանակ՝ սահմանվող մեծ նպատակի (Ընդհանուր նպատակ) իրականացման համար անհրաժեշտ է բաժանել այն ավելի փոքր նպատակների (Հատուկ և Գործառնական նպատակներ) և, իրականացնելով այդ նպատակները, հասնել մեծ նպատակի իրականացմանն ու, հետևաբար, խնդրի լուծմանը:

Այդ իսկ պատճառով ըստ մակարդակների նպատակների սահմանման առավել ամբողջական մոտեցում է **«Նպատակների բուրգ»**-ի կիրառումը:



Այս պարագայում, պահպանելով նպատակների միջև առկա ուղղահայաց կապերը, մեկ Ընդհանուր նպատակի իրականացման համար սահմանվում են մի քանի Հատուկ նպատակներ, որոնց համար էլ՝ մեկ կամ մի քանի Գործառնական նպատակներ:


2.1.5. Նպատակների սահմանման կապը ԿԱԳ վերլուծության իրականացման այլ քայլերի հետ

ԿԱԳ վերլուծության իրականացման շրջանակներում սահմանվող նպատակներն իրենցից ներկայացնում են կապող օղակ բացահայտված խնդրի և կարգավորման առաջարկվող տարբերակների միջև, որոնք պետք է սահմանվեն, գնահատվեն և համեմատվեն:

1. Կապը խնդրի և դրա պատճառահետևանքային կապերի սահմանման հետ¹.

ԿԱԳ վերլուծության իրականացման շրջանակներում բացահայտված խնդիրն ու դրա պատճառահետևանքային կապերն ընկած են նպատակների սահմանման հիմքում: Կառուցված «խնդրի ծառ»-ը պետք է մեկնարկային կետ հանդիսանա «Նպատակների բուրգ»-ի կառուցման համար:

Այդ կապը կարելի է արտահայտել հետևյալ տեսքով՝



1) Խնդիր – Ընդհանուր նպատակ կապը

ԿԱԳ շրջանակներում սահմանվող Ընդհանուր նպատակը հենց այն գլխավոր նպատակն է, որի համար իրականացվում է այդ վերլուծությունը: Ընդհանուր նպատակը ներկայացնում է այն իրավիճակը, որն, ինչպես սպասվում է, կլինի ԿԱԳ վերլուծության իրականացման վերջնական արդյունքում (և կբարելավի իրավիճակը թիրախային խմբի համար): Այդ պատճառով ԿԱԳ վերլուծության իրականացման Ընդհանուր նպատակ է սահմանվում բացահայտված խնդրի լուծումը:

Ընդհանուր մոտեցումն այստեղ այն է, որ յուրաքանչյուր ԿԱԳ վերլուծություն պետք է ունենա միայն «մեկ խնդիր – մեկ Ընդհանուր նպատակ»:

2) Պատճառ (պատճառահետևանքային կապ) – Հարուկ նպատակ կապը

¹ Տե՛ս նաև Օրինակ 5. Ճանապարհային խցանումներ Երևան քաղաքի Կենտրոնում

Ընդհանուր նպատակի իրականացմանը (նույնն է թե խնդրի լուծմանը) հնարավոր է հասնել երկու ճանապարհով՝

- 1) վերացնել այն բոլոր պատճառները, որոնք հանգեցնում են խնդրի առաջացմանը, այսինքն՝ եթե չկա պատճառ, ապա չկա նաև խնդիր,
- 2) սակայն միշտ չէ, որ հնարավոր է վերացնել խնդրի պատճառները. սա մեծամասամբ վերաբերում է բնական և տեխնաժին բնույթի աղետներին, կամ, ինչպես ընդունված է ասել, «անհաղթահարելի ուժ»-ին: Այս պարագայում խնդրի լուծման (նույն է թե ընդհանուր նպատակի իրականացման) համար պետք է թուլացնել պատճառահետևանքային կապերը, այսինքն՝ մեղմել պատճառի ներգործությունը հետևանքի վրա:

Ընդհանուր մոտեցումն այստեղ այն է, որ *յուրաքանչյուր պատճառի* (կամ պատճառահետևանքային կապի) *համար* պետք է սահմանվի *համապատասխան Հատուկ նպատակ*:


Օրինակ 5. «Խնդրի ծառ»-ի և «Նպատակների բուրգ»-ի կառուցման օրինակ Ճանապարհային խցանումներ Երևան քաղաքի Կենտրոնում	
Խնդիր	Ընդհանուր նպատակ
Աշխատանքային օրերին (երկուշաբթի-ուրբաթ) և երեկոյան ժամերին (17:30-20:30) ճանապարհային երթևեկության խափանումները Երևան քաղաքի կենտրոնում	Նվազեցնել աշխատանքային օրերին և երեկոյան ժամերին ճանապարհային խցանումները Երևան քաղաքի կենտրոնում
Պատճառ 2.	Հատուկ նպատակ 2.
Աշխատավայրերի (պետական և մասնավոր) բարձր կենտրոնացումը Կենտրոնում	Նվազեցնել Կենտրոն մուտք գործող, շրջանառվող և դուրս եկող մասնավոր ավտոտրանսպորտային միջոցների քանակը
Պատճառ 3.	Հատուկ նպատակ 3.
Հանրային տրանսպորտի անարդյունավետ ցանցը (տեսակ, քանակ, երթուղիներ, կանգառների տեղադրություն, տարողունակություն և այլն)	Հանրային տրանսպորտի ցանցի վերանայման և բարելավման միջոցով (տեսակ, քանակ, երթուղիներ, կանգառների տեղադրություն, տարողունակություն) բարձրացնել դրա արդյունավետությունը
Պատճառ 7.	Հատուկ նպատակ 7.
ՃՏՊ-ների արդյունքում երթևեկության համար առաջացող խոչընդոտները՝ կապված ԱՊՊԱ գործակալի և ՃՈ աշխատակցի՝ ՃՏՊ-ի վայր ժամանելու	ԱՊՊԱ գործակալի և ՃՈ աշխատակցի՝ ՃՏՊ-ի վայր ժամանելու պարտադիր դեպքերի և նրանց սպասելու ժամանակի կրճատման միջոցով նվազեցնել ՃՏՊ-ների արդյունքում երթևեկության համար առաջացող խոչընդոտները

Կարող են լինել բացառություններ «մեկ խնդիր – մեկ Ընդհանուր նպատակ» մոտեցումից. երբ օրենսդրական նախաձեռնությամբ նախատեսվում է որևէ ոլորտի համալիր կարգավորում և բացահայտվել են տարբեր խնդիր:

Ընդհանուր մոտեցումն այստեղ այն է, որ բացահայտված խնդրներից *յուրաքանչյուրի համար* պետք է սահմանվի *համապատասխան Ընդհանուր նպատակ*:

Այս պարագայում վերոնշյալ կապը կունենա հետևյալ տեսքը՝

«խնդրի ծառ»-ի և «Նպատակների բուրգի»-ի միջև կապը (2)



Ինչպես երևում է գծապատկերից, պատճառ (պատճառահետևանքային կապ) – Հատուկ նպատակ կապերի կառուցման տրամաբանությունը չի փոխվում:

Օրինակ 6. Ոլորտի համալիր կարգավորում նախատեսող օրենսդրական նախաձեռնության օրինակ

Օրինակ՝ նախատեսվում է մշակել դեղերի մասին օրենքի նախագիծ, որի կարգավորման շրջանակներում ընդգրկվելու են դեղերի արտադրությունը, մեծածախ իրացումը (այդ թվում՝ ներմուծումը), մանրածախ իրացումը (դեղատնային գործունեությունը), փոխհատուցվող դեղերի պրամադրումը և դեղերի գովազդը: Եթե օրենսդրական նախաձեռնությունը սահմանափակվեր դեղերի արտադրությամբ, մեծածախ իրացմամբ և մանրածախ իրացմամբ, ապա հնարավոր կլիներ սահմանել մեկ ընդհանուր խնդիր, օրինակ՝ «Շրջանառությունում անորակ դեղերի առկայություն», և այդ խնդիրը կունենանր իր ենթախնդիրները՝ ըստ համապատասխան գործունեության տեսակի: Այս դեպքում մեկ ընդհանուր խնդրի համար կսահմանվեր մեկ

2. Կապը խնդրի կարգավորման փարբերակների մշակման հետ²

Խնդրի կարգավորման տարբերակների մշակումն ուղղակի կապված է սահմանված նպատակների (մասնավորապես՝ Հատուկ նպատակների) հետ: Առանց նպատակների հստակ սահմանման անհնար է իրականացնել կարգավորման այլընտրանքային տարբերակների մշակում:

Առանց նպատակների հստակ ըմբռնման դժվար է որոշել ձեռնարկվելիք գործողությունները և, հետևաբար, կարգավորման առաջարկվող տարբերակների նպատակահարմարությունը: Հստակ ձևակերպված նպատակները նպաստում են կարգավորման այլընտրանքային տարբերակների մշակմանն ու հանդիսանում են ապագա միջամտության պատշաճ հիմնավորում:

3. Կապը փարբերակների համեմատման հետ³

Չափանիշները, որնք պետք է օգտագործվեն կարգավորման առաջարկվող տարբերակների համեմատության ժամանակ, սերտորեն կապված են սահմանված նպատակների հետ: Այդ չափանիշներն՝

- 1) **արդյունավետությունը (effectiveness)** – ի՞նչ չափով են կարգավորման առաջարկվող տարբերակները հասնում սահմանված նպատակների իրականացմանը,
- 2) **ծախս-խնայողությունը (efficiency)** – որքանո՞վ կարող են սահմանված նպատակներն առկա ռեսուրսների շրջանակներում իրականացվել նվազագույն ծախսերով,
- 3) **համաձայնեցվածությունը (coherence)** – որքանո՞վ են կարգավորման առաջարկվող տարբերակները համաձայնեցված կառավարության գերակա նպատակների հետ:

² Ավելի մանրամասն տե՛ս Քայլ 3 «Խնդրի կարգավորման տարբերակների մշակում, կարգավորիչ և ոչ կարգավորիչ գործիքներ»:

³ Ավելի մանրամասն տե՛ս Քայլ 5 «Տարբերակների համեմատում»:

Այս չափանիշներն էական դեր են խաղում նախընտրելի տարբերակի ընտրության ժամանակ:

4. Կապը մշտադիտարկման և գնահատման հետ⁴

Առանց հստակ սահմանված նպատակների անհնար է մշտադիտարկել և գնահատել, թե արդյոք կարգավորիչ միջամտությունը ճիշտ է իրականացվում: Պատշաճ նպատակային ցուցանիշների բացահայտման համար անհրաժեշտ են «ՍՄԱՐԹ» նպատակներ, ինչն, իր հերթին, թույլ կտա մշտադիտարկել կարգավորիչ միջամտության իրականացումն ու գնահատել սահմանված նպատակներին հասնելու չափը:

2.1.6. Նպատակների սահմանման փուլերը

Սահմանվող նպատակները սերտորեն կապված են ԿԱԳ վերլուծության այլ քայլերի հետ, այդ իսկ պատճառով դրանց սահմանումը չի իրականացվում միանգամից: Մասնավորապես՝

1. խնդիրը սահմանելուց հետո հնարավոր է իրականացնել **Ընդհանուր նպատակի** սահմանում, որին օրենսդրական նախաձեռնությունը միտված է նպաստել կամ ակնկալում է հասնել,
2. **Հատուկ նպատակների** սահմանումը հնարավոր է իրականացնել Պատճառների (պատճառահետևանքային կապերի) բացահայտումից հետո:
Սահմանված Հատուկ նպատակները կարող են փոխվել ԿԱԳ վերլուծության իրականացման ընթացքում՝ կարգավորման առաջարկվող տարբերակների արդյունավետության և ծախս-խնայողության ավելի խորը վերլուծության իրականացմանը զուգահեռ:
Օրինակ՝ որևէ տարբերակի վերլուծության ընթացքում կարող է հայտնաբերվել որևէ բացթողում, որը մինչև այդ հաշվի չէր առնվել: Այս պարագայում ընդունված պրակտիկա է համարվում նոր Հատուկ նպատակի սահմանումը՝ հայտնաբերված բացթողման վերացման համար: Նման մոտեցումը երաշխավորում է, որ կարգավորման մյուս առաջարկվող տարբերակներն էլ են գնահատվում այդ տեսանկյունից և, հետևաբար, կարգավորման առաջարկվող տարբերակների գնահատումն ու համեմատությունն իրականացվում են միևնույն խումբ չափորոշիչների հիման վրա:
3. **Գործառնական նպատակների** սահմանումն իրականացվում է **նախընտրելի տարբերակի** ընտրությունից հետո և դրա հիման վրա:


⁴ Ավելի մանրամասն տե՛ս Քայլ 6 «Մշտադիտարկման և Գնահատման միջոցառումների նախագծում»:

3.1. Գործառնական նպատակների կապը նախընտրելի տարբերակի հետ

ԿԱԳ վերլուծության իրականացման շրջանակներում Գործառնական նպատակների սահմանումն իրականացվում է առաջադրված նախընտրելի տարբերակի հիման վրա՝ ըստ այդ տարբերակի յուրաքանչյուր գործիքի:

Այդ կապը կարելի է արտահայտել հետևյալ տեսքով՝

Նախընտրելի տարբերակի և Գործառնական նպատակների միջև կապը



Ընդհանուր մոտեցումն այն է, որ նախընտրելի տարբերակի յուրաքանչյուր գործիքին համապատասխանում է մեկ Գործառնական նպատակ, սակայն կարող են լինել դեպքեր, երբ սահմանվող Գործառնական նպատակների քանակը կլինի մեկից ավելի:

Օրինակ 7. Ճանապարհային խցանումներ երևան քաղաքի Կենտրոնում

<p>Գործիք 1.</p> <p>Արգելել աշխատանքային օրերին (երկուշաբթի - ուրբաթ) և երեկոյան ժամերին (17:00-21:00) բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների կայանումը Կենտրոնի միակողմանի և մեկ ուղղությամբ 2 երթևեկելի գոտի ունեցող ճանապարհներին՝ բացառությամբ ճանապարհներին առկա «գրպանիկների»</p>	<p>Գործառնական նպատակ 1.</p> <p>2021-2031 թթ ընկած ժամանակահատվածում յուրաքանչյուր տարի աշխատանքային օրերին (երկուշաբթի - ուրբաթ) և երեկոյան ժամերին (17:00-21:00) Կենտրոնում կայանող ավտոմեքենաների քանակի կրճատում 80%-ով</p>
<p>Գործիք 2.</p> <p>Բարելավել ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների՝ Կենտրոնում գտնվող կանգառների համակարգը</p>	<p>Գործառնական նպատակ 2.1.</p> <p>2021 թվականին Կենտրոնում 10 նոր կանգառի կառուցում</p> <hr/> <p>Գործառնական նպատակ 2.2.</p>

	2021 թվականին Կենտրոնում գտնվող 70 կանգառների բարեկարգում
<p>Գործիք 3.</p> <p>Ճանապարհափորանսպորտային պատահարները հնքնություն, համաձայնեցված հայտարարագրի միջոցով գրանցման դեպքերում տուժողի կողմից վնաս պատճառողից ակնկալվող վնասի հատուցման չափը կրկնապատկել՝ սահմանելով 200,000 դրամ</p>	<p>Գործառնական նպատակ 3.</p> <p>2021-2031թթ. ընկած ժամանակահատվածում յուրաքանչյուր տարի ՃՏՊ-ների՝ հնքնություն, համաձայնեցված հայտարարագրի միջոցով գրանցման դեպքերի ավելացում 190 դեպքով</p>

2.2. Նպատակային ցուցանիշների սահմանում

2.2.1. Նպատակային ցուցանիշների սահմանման դերը ԿԱԳ վերլուծությունում

ԿԱԳ վերլուծության իրականացման շրջանակներում սահմանվող յուրաքանչյուր Գործառնական նպատակ պետք է ունենա հստակ սահմանված նպատակային ցուցանիշ, որն անմիջականորեն կապված կլինի այդ նպատակի հետ:

«Նպատակային ցուցանիշ» հասկացության սահմանումը

Սահմանված նպատակի իրագործման փաստի ստուգման համար կիրառվող միջոց (չափման միավոր):

Նպատակային ցուցանիշները ցույց են տալիս ժամանակի տարբեր պահերին կարգավորիչ միջամտության իրականացումն ու դրա արդյունքները ըստ նպատակների մակարդակների: Նպատակային ցուցանիշների սահմանումն՝

1. օգնում է ցույց տալ, թե ինչպես կարող է չափելի ձևով ստուգվել և ներկայացվել օրենսդրական նախաձեռնության նպատակի իրականացումը,
2. օգնում է վերլուծել և համեմատել նպատակների իրականացումը բնակչության տարբեր խմբերի և առանձին աշխարհագրական տարածքների միջև,
3. հիմք է ստեղծում կարգավորիչ միջամտության մշտադիտարկման և գնահատման իրականացման համար:

2.2.2. Ինչպես ճիշտ սահմանել նպատակային ցուցանիշները

Նպատակային ցուցանիշների սահմանման՝ միջազգային պրակտիկայում ընդունված և ամենից տարածված տարբերակը «ՌԱՍԵՌ» («**RACER**») մեթոդի կիրառումն է: Այն կիրառվում է

նաև ԿԱԳ վերլուծության իրականացման շրջանակներում նպատակային ցուցանիշների սահմանման ժամանակ:

Ըստ այս մեթոդի՝ սահմանվող նպատակային ցուցանիշները պետք է լինեն՝

«ՌԱՍԵՌ» («RACER») մեթոդ

R - (RELEVANT) ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ

Նպատակային ցուցանիշները պետք է սերտորեն կապված լինեն սահմանված նպատակների հետ: Դրանք պետք է չափեն համապատասխան փաստեր:

Օրինակ՝ առողջապահության համար նպատակային ցուցանիշ կարող է լինել մանկական մահացությունների թվի կրճատումը:

A - (ACCEPTED) ԸՆԴՈՒՆԵԼԻ

Նպատակային ցուցանիշները պետք է ընդունելի լինեն ինչպես այն կիրառողների, այնպես էլ շահագրգիռ կողմերի համար: Նպատակային ցուցանիշների դերն ու նշանակությունը պետք է հստակ սահմանված լինեն:

C - (CREDIBLE) ԱՐԺԱՆԱՀԱՎԱՏ

Ոչ մասնագետների համար նպատակային ցուցանիշները պետք է լինեն միանշանակ և հեշտ մեկնաբանվող:

E (EASY TO MONITOR) ՀԵՇՏ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ

Նպատակային ցուցանիշները պետք է լինեն քիչ թվով և հնարավորինս չբարդացնեն մշտադիտարկման գործընթացը. տվյալների հավաքագրման գործընթացը պետք է հնարավոր լինի իրականացնել հնարավորինս քիչ ծախսերի միջոցով:

R (ROBUST) ԿԱՅՈՒՆ

Նպատակային ցուցանիշները պետք է զերծ լինեն շահարկումներից:

Օրինակ՝ եթե նպատակը ձեռնարկատիրության իրականացման վարչարարական բեռի կրճատումն է, վարչարարական բեռը կարող է չկրճատվել, այլ պարզապես տեղափոխվել գործարար միջավայրից պետական կառավարման վրա, ինչից բնականաբար պետք է խուսափել:

Նպատակային ցուցանիշի ամբողջական սահմանման համար պետք է աշխատել համապատասխանեցնել սահմանվող նպատակային ցուցանիշն այս մեթոդի որքան հնարավոր է շատ չափանիշներին:

2.2.3. Նպատակային ցուցանիշների տեսակները

ԿԱԳ վերլուծության իրականացման շրջանակներում սահմանված նպատակների իրականացումը կարող է չափվել ինչպես *քանակական*, այնպես էլ *որակական* նպատակային ցուցանիշների միջոցով:

Քանակական ցուցանիշները կարող են արտահայտվել թվով, տոկոսով կամ հարաբերակցությամբ:

Օրինակ 8. Քանակական նպատակային ցուցանիշների օրինակներ

Թիվ – Ճանապարհային պատահարների (պատահարներից մահացությունների) թիվը

Տոկոս – Հարկերը ժամանակին վճարող փոփոխվարողների տոկոսը

Հարաբերակցություն – Վերապատրաստված աշխատակիցների համամասնությունն աշխատակիցների ընդհանուր քանակի մեջ

Որակական ցուցանիշները կիրառվում են որակը չափելու համար և սովորաբար հիմնված են ընկալման, կարծիքի կամ բավարարվածության մակարդակի վրա:

Օրինակ 9. Որակական նպատակային ցուցանիշների օրինակներ

Ընկալում – Բնակչության կողմից անվտանգության ընկալման մակարդակը

Կարծիք – Կյանքի որակը

Բավարարվածության մակարդակ – Տնփեսվարողների/քաղաքացիների բավարարվածության մակարդակը

Որակական չափանիշների կիրառումը պետք է իրականացվի զգուշորեն, քանի որ դրանք հաճախ հիմնված են սուբյեկտիվ ընկալման վրա: Դրանց կիրառումը կարող է բավարար չլինել կարգավորիչ միջամտության հետևանքով առաջացած արդյունքների և իրական փոփոխությունների ցուցադրման համար: Միջամտության վերաբերյալ օբյեկտիվ և քանակական գնահատման ենթակա տեղեկատվությունը կարող է ավելի ամուր հիմք ստեղծել հաջող արդյունքի հասնելու ուղղությամբ հիմնավորված որոշումների կայացման համար:


Միևնույն ժամանակ, կարող են լինել դեպքեր, երբ առաջացած արդյունքների օբյեկտիվ չափման և գնահատման համար կարող են պահանջվել ինչպես քանակական, այնպես էլ որակական ցուցանիշներ: Օրինակ՝ բավարար չէ ուղղակի իմանալ իրականացված վերապատրաստումներին մասնակցած աշխատակիցների քանակը. միջոցառման ազդեցության ամբողջական պատկերը հասկանալու համար կարևոր է նաև մասնակիցների մասնակցության որակն ու ձեռք բերած փորձը: Սակայն, քանի որ դժվար է որակական ցուցանիշների

ստանդարտացումը դրանց համեմատության և վերլուծության համար, ընդհանուր մոտեցումն այն է, որ որակական ցուցանիշներն անհրաժեշտ է արտահայտել քանակական ձևով, որտեղ դա հնարավոր է:

2.2.4. Նպատակային ցուցանիշների սահմանման կապը նպատակների հետ

ԿԱԳ վերլուծության շրջանակներում սահմանվող նպատակային ցուցանիշներն ունեն հստակ նշանակություն, այն է՝ չափել օրենսդրական նախաձեռնության սահմանված նպատակների իրականացման աստիճանը: Այսպիսով, նպատակային ցուցանիշներն ուղղակիորեն կապված են սահմանված նպատակների հետ և բխում են դրանցից:

Այդ կապը կարելի է արտահայտել հետևյալ տեսքով՝



Օրինակ 10. Ճանապարհային խցանումներ երևան քաղաքի Կենտրոնում	
<p>Գործառնական նպատակ 1. 2021-2031թթ. ընկած ժամանակահատվածում յուրաքանչյուր փարի աշխատանքային օրերին (երկուշաբթի - ուրբաթ) և երեկոյան ժամերին (17:00-21:00) Կենտրոնում կայանող ավտոմեքենաների քանակի կրճատում 80%-ով</p>	<p>Նպատակային ցուցանիշ 1. Տվյալ օրերին և փվյալ ժամերին Կենտրոնում կայանող ավտոմեքենաների քանակը</p>
<p>Գործառնական նպատակ 2.1. 2021 թվականին Կենտրոնում 10 նոր կանգառի կառուցում</p>	<p>Նպատակային ցուցանիշ 2.1. 2021 թվականին Կենտրոնում կառուցված կանգառների քանակը</p>
<p>Գործառնական նպատակ 2.2. 2021 թվականին Կենտրոնում գտնվող 70 կանգառների բարեկարգում</p>	<p>Նպատակային ցուցանիշ 2.2. 2021 թվականին Կենտրոնում վերանորոգված կանգառների քանակը/%-ն ընդհանուր կանգառների քանակի մեջ</p>

<p>Գործառնական նպատակ 3. 2021-2031թթ. ընկած ժամանակահատվածում յուրաքանչյուր տարի ՃՏՊ-ների՝ ինքնուրույն, համաձայնեցված հայտարարագրի միջոցով գրանցման դեպքերի ավելացում 190 դեպքով</p>	<p>Նպատակային ցուցանիշ 3. 2021-2031 թվականներին ՃՏՊ-ների՝ ինքնուրույն, համաձայնեցված հայտարարագրի միջոցով գրանցման դեպքեր քանակը/%-ային աճը նախորդ տարվա նկատմամբ</p>
--	---

Նպատակային ցուցանիշները կարող են սահմանվել նաև «Նպատակների բուրգ»-ի մյուս երկու մակարդակի նպատակների (Ընդհանուր և Հատուկ) համար, ինչը ընդունված և տարածված է միջազգային պրակտիկայում:

Սակայն, քանի որ ԿԱԳ վերլուծության շրջանակներում հստակ արդյունքներ և ժամանակային սահմանափակումներ են սահմանվում միայն Գործառնական նպատակների համար, ընդհանուր մոտեցումն այն է, որ նպատակային ցուցանիշները համապատասխանաբար սահմանվում են միայն այդ նպատակների համար:

2.2.5. Նպատակային ցուցանիշների ընտրությունը

Չկա նպատակային ցուցանիշների սահմանման ստանդարտ ձևաչափ: Դրանք միշտ պետք է համապատասխանեցվեն յուրաքանչյուր ԿԱԳ վերլուծության և Գործառնական նպատակների համար: Նպատակային ցուցանիշների ընտրությունը ցույց է տալիս, թե արդյոք սահմանված նպատակները «ՍՄԱՐԹ» են: Համապատասխան նպատակային ցուցանիշի ընտրության գործընթացը մեկնարկելիս երբեմն բացահայտվում է, որ նպատակները պետք է վերանայվեն, քանի որ դրանք «ՍՄԱՐԹ» չեն:

Նպատակային ցուցանիշը պետք է լինի *չեզոք և նպատակի հետ ստուգելի*: Այն չպետք է ձևակերպված լինի ինչպես նպատակ, և չպետք է նշանակություն ունենա, թե ով է իրականացնելու չափումը:

Նպատակային ցուցանիշների ընտրության համար անհրաժեշտ է՝

1. մեկ անգամ ևս վերանայել սահմանված Գործառնական նպատակները և վերագնահատել, թե արդյո՞ք դրանք «ՍՄԱՐԹ» են,
2. կազմել սահմանված Գործառնական նպատակների իրականացման փաստի չափման համար կիրառելի բոլոր հնարավոր նպատակային ցուցանիշների ցուցակ,
3. բոլոր վերոնշյալ ցուցանիշների համար անհրաժեշտ է դիտարկել հետևյալ հարցադրումները՝

- 1) հանդիսանում է արդյո՞ք ցուցանիշն արդյունքի առավելագույնս ճշգրիտ արտացոլում, որքանով որ դա հնարավոր է,

- 2) արդյո՞ք ցուցանիշը բավարար չափով ճշգրիտ է արդյունքի չափումն իրականացնելու համար,
- 3) արդյո՞ք ցուցանիշն ապահովում է առավել գործնական և ծախս-խնայող տվյալների հավաքագրման գործընթաց:

Այստեղ պետք է հաշվի առնել նաև, որ յուրաքանչյուր նպատակային ցուցանիշի մշտադիտարկման համար պահանջվելու է ռեսուրսների, ժամանակի և ջանքերի ներդրում: Տվյալների հավաքագրումը չպետք է ավելի ծախսատար լինի, քան այն տեղեկատվության արժեքը, որը նրանք տրամադրում են:

3. ԽՆԴՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ. ԿԱՐԳԱՎՈՐԻՉ ԵՎ ՈՉ ԿԱՐԳԱՎՈՐԻՉ ԳՈՐԾԻՔՆԵՐ

3.1. Ի՞նչպես բացահայտել գործիքները

Խնդրի կարգավորմանն ուղղված գործիքները պետք է ակնհայտորեն կապված լինեն ինչպես պատճառների, այնպես էլ՝ նպատակների հետ և լուծեն բացահայտված խնդիրը: Կարգավորման ազդեցության գնահատման նպատակը պետության առջև ծառայած խնդիրների և դրանց լուծման ուղիների արդյունավետ բացահայտումն է, ուստի այս ենթատեքստում կարգավորիչ և ոչ կարգավորիչ գործիքները ներկա իրավիճակից ցանկալի իրավիճակին հասնելու միջոցներ են:

Կարգավորողի կողմից ընտրված գործիքները պետք է լինեն՝

1. արդյունավետ - ուղղված նպատակների իրագործմանը և խնդրի լուծմանը,
2. ծախս-խնայող - առկա ռեսուրսների պայմաններում նվազագույն ծախսերով նպատակների իրականացումն ապահովող,
3. կայուն - ոչ զգայուն կամ քիչ զգայուն արտաքին գործոնների հանդեպ,
4. հասանելի - թե քաղաքական և թե ֆինանսական տեսանկյունից կարգավորողին հասանելի,
5. թափանցիկ - կարգավորման ենթակա բոլոր շահառուներին տեղեկատվության հասանելիության հավասարություն ընձեռող,
6. համաձայնեցված ու համահունչ կառավարության քաղաքականության հետ - երկրի ռազմավարական ծրագրերին չհակասող:

Խնդրի լուծմանն ուղղված գործիքների ընտրությունը պետք է դիտարկել ոչ միայն ներկա իրավիճակի, այլ նաև ապագա հնարավոր զարգացումների հարթության մեջ, քանի որ խնդրի կամ իրավիճակի հետագա միտումները կարող են պահանջել թիրախավորված մոտեցում, ինչը ենթադրում է նաև համապատասխան գործիքակազմի ընտրություն:

Խնդրի ի հայտ գալու
հավանականություն

Ներկա

Միտումների կանխատեսման ժամանակ անհրաժեշտ է դիտարկել նաև միջազգային հավանական զարգացումները, քանի որ վերջինս կարող է փոխել կանխատեսված միտումների կորի և՛ քանակական, և՛ որակական հատկանիշները: Գործիքների բացահայտման գործում մեծ դերակատարում ունի նաև միջազգային փորձի ուսումնասիրությունը, քանի որ այլ երկրներում համանման խնդիրների լուծմանն ուղղված ջանքերը կարող են ուղղորդել կարգավորողին որոշումների կայացման գործընթացում:

3.2. Կարգավորիչ և ոչ կարգավորիչ գործիքների տեսակները

Պատմականորեն կարգավորումը դիտարկվել է կարգավորողի կողմից կանոնների ուղիղ սահմանման միջոց, երբ պետությունը թելադրել է՝ ինչ կարելի է անել, ինչպես, և ինչ չի թույլատրվում: Սակայն ներկայումս նման կարգավորումները կոչվում են կոշտ կարգավորումներ, և երկրները հնարավորության դեպքում նախընտրում են կիրառել առավել ճկուն կարգավորումներ, քանի որ կոշտ կարգավորումները մեծացնում են վարչարարական բեռը:

Կարգավորիչ և ոչ կարգավորիչ գործիքները դասակարգվում են չորս հիմնական խմբերի՝

1. կարգավորիչ գործիքներ,
2. տնտեսական գործիքներ,
3. կամավոր գործիքներ,
4. տեղեկատվական գործիքներ:

Անհրաժեշտ է նշել նաև, որ վերոնշյալ դասակարգումը ընդհանրական է և տարբեր խմբերի գործիքների միջև կարող են լինել ինչպես մասնակի համընկնումներ, այնպես էլ համակցություններ:

Տնտեսական
գործիքներ

1. Կարգավորիչ գործիքներ (կոշտ կարգավորումներ)

1) Հանձնարարական և հսկողական կարգավորումներ

Հանձնարարական և հսկողական կարգավորումները ոլորտի ուղիղ կարգավորումներ են օրենսդրության միջոցով, որոնք սահմանում են, թե ինչն է թույլատրելի, և ինչը՝ ոչ: Առաջին հայացքից կարող է թվալ, որ այս կարգավորման գործիքն ամենահեշտ և ամենախոստումնալից լուծման տարբերակն է, քանի որ պարզ է, ստանդարտացված և կանխատեսելի, սակայն այս տեսակ կարգավորումները կարող են հանգեցնել զգալի վարչարարական ծախսերի, դժվարությունների, չկանոնակարգված և չհիմնավորված վարքագծի (բարոյական վտանգի):

Օրինակ՝ ֆիքսված ելքային արտանետումների մակարդակների սահմանում:

2) Կատարողականի վրա հիմնված կարգավորում

Կատարողականի վրա հիմնված կարգավորումները սահմանում են կատարողական չափանիշներ՝ ազատ թողնելով անհատներին և կազմակերպություններին որոշելու մեխանիզմներ և ուղիներ սահմանված չափանիշներն ապահովելու համար: Ընդ որում, այն օրենքի կատարումը ապահովող որևէ մեխանիզմ չի առաջարկում: Չափանիշները պետք է լինեն ճկուն՝ ճիշտ և արդյունավետ կիրառելի:

Օրինակ՝ աշխատավայրում անվտանգության նորմերի սահմանում:

3) Պարզեցում

Պարզեցումը գործող կարգավորումների պարզեցման միջոցով կարգավորմամբ պայմանավորված բեռի կրճատումն է:

Օրինակ՝ մաքսային ընթացակարգերի կրճատում:

4) Ավելի լավ հարկադրում և իրականացում

Ավելի լավ հարկադրումը և իրականացումը ենթադրում է կարգավորմամբ պահանջվող դրույթների վերանայում, դրանց իրականացման ընթացքում առաջացած թերությունների բացահայտում, թերությունների ի հայտ գալու պատճառների բացահայտում և շտկում: Այս տարբերակը միշտ քննարկելի է, եթե գործ ունենք արդեն ընդունված որևէ իրավական կարգավորման հետ:

Օրինակներ՝ տեսչական գործունեության գործառույթների վերանայում, փաստացի կատարման գնահատում:

2. Տնտեսական գործիքներ

Տնտեսական գործիքները գների, հարկերի, տուրքերի, պետական գնումների քաղաքականության, արտոնությունների, պիտակավորման, փոխհատուցման, վարկային երաշխավորագրերի սահմանման միջոցով կարգավորում են շուկայի մասնակիցների գործունեությունը: Այլ կերպ ասած՝ եթե գործիքը ազդում է շուկայական գնի կամ ծախսերի վրա, ապա այն համարվում է տնտեսական գործիք: Տնտեսական գործիքների կիրառությունը հիմնականում համակցվում է կարգավորիչ գործիքների կիրառության հետ:

Օրինակ՝ տուրքեր ծխախոտային արտադրանքի համար:

3. Կամավոր գործիքներ (փափուկ կարգավորումներ)

1) Ինքնակարգավորում

Ինքնակարգավորումը կամավոր համաձայնագրերի և նորմերի սահմանումն է տնտեսվարող սուբյեկտների կողմից, որոնց հիման վրա նրանք ինքնուրույն կարգավորում և կազմակերպում են իրենց գործունեությունը: Իրավական կարգավորում որպես այդպիսին չի պահանջվում, բայց պահանջվում է վստահություն և փոխհամաձայնություն անդամների միջև: Ինքնակարգավորումը պետք է լինի բաց և թափանցիկ գործընթաց, քանի որ այն կարող է առաջացնել հանցավոր համագործակցության տարրեր (ռիսկեր) մրցակիցների շրջանակներում:

Օրինակ՝ ՋԼՄ-ների ինքնակարգավորում, գույքի գնահատման գործունեության բնագավառում ինքնակարգավորում:

2) Համակարգավորում

Կարգավորողի և տնտեսվարող սուբյեկտների համատեղ աշխատանքի արդյունքում ձևավորված կարգավորումներն են: Համակարգավորող ռեժիմները ենթադրում են ամուր համագործակցություն տնտեսության հիմնական դերակատարերի և կառավարության միջև:

Օրինակ՝ մասնագիտական վարքագծի կամ որակավորման պահանջների կանոններ, էլեկտրոնային հարթակներից օգտվող երեխաների անվտանգությանն առնչվող կարգավորումներ:

3) Ապակարգավորում

Ապակարգավորումն իրենից ներկայացնում է տվյալ ոլորտում կառավարության միջամտության դադարեցումը՝ թողնելով խնդրի լուծումը շուկայական և ինքնակարգավորման մեխանիզմներին:

Օրինակ՝ գործունեության իրականացման համար լիցենզիայի պահանջի վերացում:

4. Տեղեկատվական և կրթական գործիքներ

1) Կարողությունների զարգացմանն ուղղված միջոցառումներ

Հանրության, պետական մարմինների, կազմակերպությունների ունակությունների զարգացմանն ուղղված միջոցառումներ: Կրթական գործիքներն ի գորու են արդյունավետ կերպով զարգացնել կառավարման գործնական հմտությունները, առավել ևս, եթե պատշաճ ձևով հաշվի են առնվում նաև թիրախային խմբերի անձնական շահերը: Կրթելով և հնարավոր հետևանքների վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելով՝ կառավարությունը կարող է «ուղղորդել» և սատարել թիրախային խմբերին:

Օրինակ՝ պետական ֆինանսավորմամբ կամ համաֆինանսավորմամբ դասընթացների կազմակերպում:

2) հանրային իրազեկվածության մակարդակի բարձրացում

Այս գործիքը ենթադրում է հանրային իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացում:

Օրինակ՝ մարդու օրգանների նվիրատվության մասին իրազեկման քարոզարշավ:

3.3. Խնդրի կարգավորման տարբերակների մշակման գործընթացը

Բացահայտված գործիքների միավորման արդյունքում կարգավորողը մշակում է տարբերակ կամ տարբերակներ: Յուրաքանչյուր գործիք ի սկզբանե կարող է հանդիսանալ նաև տարբերակ, սակայն տարբերակը կարող է բաղկացած լինել նաև մեկից ավել գործիքներից: Ձևավորված տարբերակը պետք է ակնհայտորեն կապված լինի ինչպես պատճառների, այնպես էլ նպատակների (մասնավորապես՝ Հատուկ նպատակների) հետ և վերջիններիս իրականացման միջոցով լուծի բացահայտված խնդիրը:

Կարգավորման այլընտրանքային տարբերակների մշակման գործընթացի նպատակը կայանում է նրանում, որ դիտարկվեն որքան հնարավոր է շատ իրատեսական տարբերակներ և դրանցից ընտրվեն ամենահամապատասխաններն ապագա վերլուծությունների համար:

Կարգավորման այլընտրանքային տարբերակների մշակման ընթացքում անհրաժեշտ է իրականացնել հետևյալ 5 քայլերը՝

1. Ելակետային տարբերակի ձևակերպում, որի համեմատ հետագայում պետք է գնահատվեն կարգավորման առաջարկվող տարբերակների ազդեցությունները,

2. հնարավորինս մեծ թվով կարգավորման այլընտրանքային տարբերակների մշակում,
3. առավել համապատասխան տարբերակների ընտրություն,
4. ընտրված տարբերակների համապատասխանության կրկնակի ստուգում,
5. ընտրված տարբերակների հիմնական բաղկացուցիչների մանրամասն նկարագրում, որպեսզի հնարավոր լինի իրականացնել տարբերակների ազդեցությունների խորացված վերլուծություն:

1. Ելակետային տարբերակ

Ելակետային տարբերակը դա «ոչինչ չանելու» տարբերակն է, որն ընդգրկում է այն բոլոր կարգավորումները, որոնք ուժի մեջ են և շարունակելու են մնալ ուժի մեջ: Ազգային ժողովի կողմից ընդունված, բայց դեռևս ուժի մեջ չմտած օրենքները և դրանցից բխող ընթացակարգային ենթաօրենսդրական իրավական ակտերը, որոնք կանխատեսվում է, որ էական ազդեցություն կունենան այդ օրենքներով սահմանված նպատակների իրականացման տեսանկյունից, ևս պետք է ներառվեն ելակետային տարբերակում:

Ելակետային տարբերակը տարբերվում է ներկա իրավիճից, քանի որ ելակետային տարբերակի վերլուծության ժամանակ պետք է դիտարկվեն բացահայտված խնդրի պատճառների հնարավոր զարգացումները, և ցույց տրվի, թե ինչպես դրանք կազդեն խնդրի գոյության և մեծության վրա: Ըստ այդմ, Ելակետային տարբերակում պետք է ընդգրկվեն նաև սպասվող սոցիալ-տնտեսական զարգացումները (օրինակ՝ ծերացող ազգաբնակչություն, ՀՆԱ-ի աճ և այլն), ինչպես նաև տեխնոլոգիական/հասարակական զարգացումները, ինչպիսիք են, օրինակ, ինտերնետի և սոցիալական լրատվամիջոցների լայն տարածվածությունը, ինչն ինքնին մեծ փոփոխություններ է առաջացնում: Ավելին՝ Ելակետային տարբերակը պետք է դիտարկվի հստակ ժամանակահատվածի համար, որի տևողությունը որոշվում է կարգավորման այլընտրանքային տարբերակների դիտարկման ժամանակահատվածով և գործող կարգավորումներով սահմանված նպատակների իրականացման համար անհրաժեշտ ժամանակահատվածով: Սակայն հնարավոր են դեպքեր, երբ կարգավորումները պարունակում են գործողության վերջնաժամկետներ՝ պայմանավորված որոշակի թիրախային նպատակների իրականացմամբ: Այս դեպքում հնարավոր է կիրառել երկու մոտեցում. եթե փորձագիտական գնահատման արդյունքում պարզ է դառնում, որ օրենսդրական նախաձեռնությունն արդյունավետ չէ և չի ապահովում իրենում ամրագրված թիրախային նպատակների իրականացումը, ապա ելակետային տարբերակում պետք է ընդունել, որ կարգավորման ժամկետի երկարաձգում տեղի չի ունենա, իսկ եթե փորձագիտական գնահատման արդյունքում պարզ է դառնում, որ օրենսդրական նախաձեռնությունն արդյունավետ է և ապահովում է իրենում ամրագրված թիրախային նպատակների իրականացումը, ապա ելակետային տարբերակում պետք է ընդունել, որ տեղի կունենա կարգավորման ժամկետի երկարաձգում:

2. Հնարավորինս մեծ թվով կարգավորման այլընտրանքային տարբերակների մշակում՝ ի լրումն ելակետային տարբերակի

Իրականացվում է «արկղից դուրս» (out of box) մտածելու, կարգավորիչ կողմնապահությունից (կոշտ կարգավորմանը հակվածությունից) խուսափելու, բոլոր շահառու կողմերի առաջարկություններն ուսումնասիրելու և դրանք չընդունելու դեպքում համապատասխան պատճառները հիմնավորելու համար:

Այս փուլում պետք է դիտարկել խնդրի բոլոր պատճառները և այն բոլոր հնարավոր միջոցառումները, որոնք կարող են լուծել խնդիրը և ապահովել օրենսդրական նախաձեռնության նպատակների իրականացումը: Այնուհետև պետք է որոշել այն կարգավորիչ ու ոչ կարգավորիչ գործիքները, որոնք կարող են ապահովել այդ միջոցառումների իրականացումը: Պետք է դիտարկել գործիքների ամենալայն շրջանակը՝ սկսած ամենամեղմ կարգավորումից մինչև ամենախիստ կարգավորումը, ամենադասական գործիքներից մինչև այնպիսիները, որոնք առաջարկվում են համապատասխան գիտական ոլորտների, ինչպիսիք են, օրինակ, վարքագծային տնտեսագիտությունը և սոցիալական հոգեբանությունը, վերջին գիտական զարգացումներով: Այս փուլում պետք է դիտարկել նաև շահառուների կարծիքներն ու առաջարկությունները: Ամենամեծ ուշադրությունը պետք է հատկացվի այն տարբերակներին, որնք կարող են արժանանալ ավելի մեծ թվով շահառուների աջակցությանը՝ միննույն ժամանակ ապահովելով առավելագույն արդյունավետություն, չբացառելով այն տեսական տարբերակները, որոնք կարժանանան քիչ աջակցության կամ որոշ խմբերի կողմից ուժեղ դիմադրության:

Գոյություն ունեցող կարգավորումները վերանայելիս միշտ պետք է որոնել սահմանված նպատակներին հասնելու ավելի պարզ ու էժան եղանակներ, որոնք կարգավորման ազդեցությանը ենթարկված խմբերի համար կսահմանափակեն կարգավորմամբ պայամանավորված ծախսերը:

3. Առավել համապատասխան տարբերակների ընտրություն

Տարբերակների ընտրության չափանիշներն են՝

- 1) օրինականությունը. տարբերակները չպետք է հակասեն ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերին (օրինակ՝ սահմանադրությանը),
- 2) տեխնիկական իրագործելիությունը. տեխնոլոգիական և տեխնիկական սահմանափակումները կարող են անհնարին դարձնել տարբերակի իրականացումը, մշտադիտարկումը կամ կիրակումը,
- 3) համաձայնեցվածությունը. այն տարբերակները, որոքն հակասում են կառավարության կողմից վարվող քաղաքականությանը և սահմանված ռազմավարություններին, պետք է անտեսվեն,

- 4) արդյունավետությունը և ծախս-խնայողությունը. պետք է ընտրվեն այն տարբերակները, որոնք ապահովում են սահմանված նպատակների իրականացումը լավագույն ծախս-օգուտ հարաբերակցությամբ,
- 5) համաչափությունը. տարբերակների իրականացումը չպետք է լինի ավելի ծախսատար, քան ահնրաժեշտ է սահմանված նպատակների բարեհաջող իրականացման համար,
- 6) քաղաքական ընդունելությունը. այն տարբերակները, որոքն ակնհայտորեն չեն կարողանա ստանալ անհրաժեշտ քաղաքական աջակցություն ընդունման կամ կիրարկման համար, ևս պետք է անտեսվեն,
- 7) նշանակալիությունը. եթե երկու տարբերակներ ունեն նշանակալի ազդեցությունների միևնույն ծավալը կամ բաշխվածությունը, ապա տարբերակներից միայն մեկը պետք է ընտրվի հետագա խորացված վերլուծությունների համար:

5. Ընտրված տարբերակների համապատասխանության կրկնակի ստուգում

Իրականացվում է համոզվելու համար, որ կարգավորման ազդեցության գնահատումը պատշաճ ձևով կհիմնավորի կարգավորիչ միջամտությունը:

Պետք է հաշվի առնել նաև, որ ելակետային տարբերակը երբեք չի կարող դուրս մնալ վերլուծությունից, քանի որ այն հիմք է հանդիսանում մյուս տարբերակների ազդեցությունների գնահատման համար: Ավելին՝ բոլոր տարբերակները պետք է լինեն իրատեսական. պետք չէ արհեստականորեն փորձել պահպանել արդեն իսկ մեկ անգամ ընտրված ելակետային տարբերակի կարգավորումները: Եթե խորացված վերլուծությունների համար ելակետային տարբերակից զատ ընտրվել է միայն մեկ այլընտրանքային տարբերակ, ապա այս փուլում պետք է լրացուցիչ վերլուծությունների իրականացման միջոցով ևս մեկ անգամ փորձել գտնել խնդրի լուծման այլընտրանքային տարբերակներ: Սակայն, եթե չի հաջողվում, ապա ԿԱԳ հաշվետվությունում պետք է տալ ծանրակշիռ հիմնավորում, թե ինչու է միայն մեկ այլընտրանքային տարբերակ դիտարկվել:

Տարբերակների ընտրության ժամանակ շատ կարևոր է կենտրոնանալ տարբերակների այն բաղկացուցիչների վրա, որոնք առավել կարևոր են որոշման կայացման տեսանկյունից (այն է՝ ունեն նշանակալի ազդեցություն):

6. Ընտրված տարբերակների հիմնական բաղկացուցիչների մանրամասն նկարագրում

Իրականացվում է տարբերակների բոլոր հնարավոր ազդեցությունների բացահայտման և թափանցիկության ապահովման համար:

Տարբերակները պետք է լինեն բավականաչափ հստակ ձևակերպված, որպեսզի հանարավոր լինի դրանց տարբերակումը ըստ սահմանված նպատակների իրականացման: Ուստի ընտրված տարբերակները չպետք է ունենան ընդհանրական նկարագրություն: Պետք է ակնհայտ լինի, թե ինչպես են դրանք իրականացվելու, մշտադիտարկվելու և հարկադրվելու, ում կողմից և ինչ

ժամկետներում, և արդյոք անհրաժեշտ կլինին են փոխլրացնող միջոցառումներ (օրինակ՝ համակարգավորման բնույթի գործողություններ) դրանց արդյունավետ իրականացման համար: Տարբերակների բովանդակությունը պետք է ներկայացվի բավականին մանրամասն: Խորհուրդ է տրվում տարբերակները ներկայացնել տարբեր շահառուների կողմից իրականացվող կոնկրետ գործողությունների ձևով: Սա կնպաստի ազդեցությունների գնահատմանը և կօգնի պատկերացում կազմել կարգավորման տարբերակի ընտրությանը նպաստած առանցքային բաղկացուցիչների վերաբերյալ (օրինակ՝ ծախսերի և օգուտների մակարդակի, եկամուտների վերաբաշխման, ՓՄՁ-ների ու քաղաքացիների վրա ազդեցության և այլն):

Օրինակ 11. Համապատասխան տարբերակների ընտրության օրինակ

Որպես տարրական և ծայրահեղ օրինակ մտածեք միջուկային ռադիոակտիվ թափոնների արտանետումների պահեստավորման մասին:

Տարբերակ 1 – թափոնների պահեստավորում անտարկտիդայում

Տարբերակ 2 – թափոնների պահեստավորում լուսնի վրա

Տարբերակ 3 – թափոնների պահեստավորում օվկիանոսի տակ

Տարբերակ 4 – թափոնների երկրաբանական պահեստավորում՝ մարդկանցով բնակեցված տարածքներից հեռու գտնվող խորը և կայուն երկրաբանական կառույցներում (թունելներում)

Տարբերակ 5 – թափոնների պահեստավորում պողպատյա մխոցներում (բալոններում), որոնք ծառայում են որպես հակաճառագայթային վահան

Շրջակա միջավայրի և անվտանգության տեսանկյունից ամենաբարենպաստ լուծումը կլինի, եթե թափոնները պահեստավորվեն լուսնի վրա, սակայն իրականացման ծախսերը պարզ է, որ կգերակշռեն օգուտներին: Ուստի վերը թվարկված տարբերակներից ամենաընդունելի թափոնների երկրաբանական պահեստավորումն է և պողպատյա մխոցներում (բալոններում) պահեստավորումը:

4. ԱՐԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

4.1. Ինչու՞ է դա կարևոր

Կարգավորումները, բացի պետական կառավարման մարմինների կողմից խնդիրների լուծմանն ուղղված գործիք լինելուց, որպես կանոն, ունեն ավելի լայն ազդեցություն: Կարգավորման հետևանքներն իրենց ազդեցությունն են ունենում հասարակության տարբեր խմբերի վրա, իսկ այդ ազդեցության տեսակները կարող են լինել շատ բազմազան: Միևնույն ժամանակ, իրավական կարգավորումների մշակման փուլում արդեցության շատ տեսակներ կարող են «թաքնված» կամ դժվար բացահայտելի լինել: Ուստի ԿԱԳ վերլուծության միջոցով կարելի է պարզել, թե ինչպես և ում վրա իրենց ազդեցությունը կունենա այս կամ այն միջոցառումը:

Այսպիսով, ԿԱԳ վերլուծության այս փուլում խնդրի լուծման տարբերակներն առաջարկելուց հետո անհրաժեշտ է դրանք համեմատել՝ հաշվի առնելով յուրաքանչյուր տարբերակից բխող բոլոր դրական և բացասական ազդեցությունները: Այսինքն, կանխատեսել առաջարկված տարբերակների բոլոր հնարավոր ծախսերն ու օգուտները և այս ճանապարհով բացահայտել տարբերակների արդյունավետությունը: Տարբերակների ազդեցությունների համեմատումը հնարավորություն է տալիս որոշում կայացնողին ընտրել ամենաարդունավետ և ծախս-խնայող տարբերակը:

Իսելամիտ կլինի, եթե կարգավորումներն ընդունվեն միայն այն ժամանակ, եթե դրանց շնորհիվ կբարձրանա հասարակության բարեկեցությունը, այսինքն հասարակության բոլոր անդամների համար կարգավորման ընդունումից առաջացող ընդհանուր օգուտները կգերազանցեն դրա ընդունումից բխող ընդհանուր ծախսերը: Միաժամանակ կարող են ընդունվել այնպիսի կարգավորումներ, որոնք ուղղված կլինեն հասարակության որոշ խմբերի բարեկեցության բարձրացմանը, օրինակ աղքատ կամ այլ խոցելի խմբերի: Որոշ դեպքերում կարգավորումները կարելի է ընդունել նաև այն դեպքում, երբ դրանց ընդունումից առաջացող ծախսերն ավելի բարձր են, քան օգուտները. դա տեղի է ունենում այն ժամանակ, երբ օգուտների մեծ մասը ստանում է համապատասխան նպատակային խումբը: Եթե այդպիսի որոշում ընդունվի, ապա նշանակում է՝ այն օգուտները, որը կստանան խոցելի խմբերը, մեզ համար ավելի էական են, քան այն ծախսերը, որոնք կկրեն հասարակության մյուս խմբերը: ԿԱԳ-ը ապահովում է այդ գործընթացի թափանցիկությունը, այսինքն թույլ է տալիս տեսնել, թե ով կշահի, և ով կկրի միջամտության հետ կապված ծախսերը, և կատարել գիտակցված ընտրություն:

Կարգավորումն ընդունել, եթե օգուտները գերազանցում են ծախսերը, ավելին՝ պետք է ընդունել նվազագույն ծախսեր առաջացնող այն կարգավորումը, որը կբերի առավելագույն օգուտներ:

Այսպիսով, ԿԱԳ-ի այս փուլն ունի երկու նպատակ. նախ անհրաժեշտ է հասկանալ յուրաքանչյուր այլընտրանքային տարբերակի դրական ու բացասական կողմերը և պարզել՝ արդյոք դրանց օգուտները գերազանցում են ծախսերը՝ ելակետային սցենարի համեմատ, և երկրորդ՝ այս փուլը հիմք է ստեղծում հնարավոր լուծումների համեմատության համար, որպեսզի հնարավոր լինի խնդրի լուծման այլընտրանքային տարբերակների շարքից ընտրել լավագույնը:

4.2. Ազդեցությունների վերլուծության և գնահատման գործընթաց

Ազդեցությունների վերլուծության և գնահատման գործընթացում քայլերի հաջորդականությունը հետևյալն է՝

1. վերհանել տարբերակների ազդեցությունները.
 - 1) հնարավոր դրական և բացասական ազդեցությունների վերհանում յուրաքանչյուր այլընտրանքային տարբերակի համար (ազդեցություններ գործարար միջավայրի և մրցակցության, սոցիալական և առողջապահական ոլորտների, շրջակա միջավայրի, հանրային ֆինանսների վրա և այլն): Դրական և բացասական ազդեցություններն անհրաժեշտ է վերհանել և վերլուծել նախապես որոշված, օրինակ, 5 կամ 10 տարվա կտրվածքով՝ ելակետային սցենարն օգտագործելով որպես համեմատման հիմք,
 - 2) խմբերի վերհանում, որոնք կարգավորման արդյունքում կարող են ենթարկվել ազդեցության (օրինակ՝ կազմակերպություններ, քաղաքացիներ, հանրային կառույցներ, հասարակական կազմակերպություններ և այլն),
2. առանձնացնել այն ազդեցությունները, որոնք, հավանաբար, նշանակալի կլինեն,
3. գնահատել նշանակալի ազդեցությունները քանակապես, իսկ եթե հնարավոր չէ՝ որակապես:

4.3. Ազդեցությունների վերհանումը

Ազդեցությունների վերլուծության և գնահատման գործընթացի առաջին քայլը ազդեցության ենթարկվող տարբեր խմբերի վրա յուրաքանչյուր այլընտրանքային տարբերակից բխող տնտեսական, սոցիալական և բնապահպանական հնարավոր դրական և բացասական, ուղղակի և անուղղակի ազդեցությունների վերհանումն է:

4.3.1. Ազդեցությունների դասակարգումը

Ազդեցությունները նկարագրելիս կարելի է օգտագործել հետևյալ դասակարգումը.

1. Ազդեցության ընդհանուր բնույթը՝ տնտեսական, սոցիալական, բնապահպանական և այլն: Սույն Ձեռնարկի Հավելված 4-ի Աղյուսակ 2-ում ներկայացված են ազդեցությունների հիմնական տեսակների օրինակներ, որոնք պետք է ուսումնասիրվեն հնարավոր բոլոր ազդեցությունները (դրական կամ բացասական, ուղղակի կամ անուղղակի, նախատեսված կամ պատահական, կարճաժամկետ կամ երկարաժամկետ) վերհանելու համար:
2. Ազդեցությունների հատուկ բնույթը, օրինակ՝ կարգավորմանը համապատասխանության ծախսերի աճը/նվազումը, պետության կողմից հարկադրման կամ ստուգման ծախսերը, ազդեցությունը աղքատության, կրթության մակարդակի, հիմնարար իրավունքների վրա և այլն:
3. Կապը միջամտության հետ՝ ուղղակի կամ անուղղակի ազդեցություններ:

3.1 Ուղղակի ազդեցություններ

Ուղղակի ազդեցություններն առաջանում են կարգավորման շրջանակներում ընդգրկված կողմերի մոտ՝ որպես կարգավորիչ փոփոխության անմիջական հետևանք: Ուղղակի ազդեցությունները հայտնաբերելու համար անհրաժեշտ է ճշտել, արդյոք առաջարկվող տարբերակը առաջացնում է նոր կարգավորիչ պարտավորություններ: Եթե այո, ապա ինչ գործողություններ են պարտավոր կատարել թիրախավորված խմբերը (տնտեսվարողներ, քաղաքացիներ, պետական մարմիններ և այլն) այդ պարտավորություններին համապատասխանելու համար: Ինչպե՞ս պետք է փոխվի նրանց վարքագիծը:

Այսպիսով, սրանք փաստացի ազդեցություններն են շահառուների (կազմակերպություններ, սպառողներ և այլն) վրա և ներառում են, օրինակ, կարգավորմամբ սահմանված պահանջ-պայմաններին համապատասխանության ապահովման ծախսերը, ինչպես նաև այն ուղղակի ծախսերը, որոնք կրում է պետությունը (կարգավորող մարմինները)՝ կարգավորման իրականացման

(պետական վարչարարության, հարկադիր կատարման, հսկողության, ստուգումների և այլն) պատճառով:

3.2 Անուղղակի ազդեցություններ

Անուղղակի ազդեցություններն այն ազդեցություններն են, որոնք ազդում են կարգավորմամբ ուղղակիորեն չթիրախավորված սուբյեկտների վրա, ինչպես նաև այն ազդեցությունները, որոնք թիրախային խմբերի վրա ազդում են անուղղակիորեն: Դրանք հիմնականում ազդեցություններ են արտադրողականության, մրցակցության, շուկայի կառուցվածքի փոփոխության, նորարարության, շրջակա միջավայրի վրա և այլն:

Ուղղակի ազդեցություններն ուղղակիորեն կապված են նպատակների իրականացման հետ և առաջարկվող կարգավորման տարբերակի արդյունքում ձեռնարկվող միջոցառումների անմիջական հետևանք են: Մնացած բոլոր ազդեցություններն անուղղակի ազդեցություններ են:

Օրինակ 12. Ազդեցությունների օրինակներ

Ուղղակի և անուղղակի ազդեցություններ – 1) Կարգավորման արդյունքում բարձրանում է էլեկտրաէներգիայի գինը. այս փոփոխությունը կունենա ուղղակի ազդեցություն էներգետիկ կազմակերպության և սպառողների վրա, որոնք ավելի բարձր գին կվճարեն: Միաժամանակ այն կունենա անուղղակի ազդեցություն էլեկտրաէներգիայի օգտագործմամբ արտադրվող ապրանքների գների վրա, ինչը կհանդիսանա անուղղակի ծախս, որը կկրեն սպառողները և փոխադարձորեն: Այն կարող է ունենալ նաև անուղղակի ազդեցություն շրջակա միջավայրի վրա, քանի որ էլեկտրաէներգիայի բարձր գինը կարող է հանգեցնել, օրինակ, փայտի, նավթի առավել մեծ ծավալների օգտագործման:

2) Կարգավորումը, որը մեծացնում է աղբի համար գանձվող վճարն ուղղակիորեն կազդի այն մարդկանց վրա, ովքեր վճարում են աղբի հավաքման համար և, հնարավոր է, առաջացնի անուղղակի ծախսեր աղբի վճարը վճարելուց խուսափող մարդկանց քանակի աճի պատճառով, որոնք կկրի ողջ հասարակությունը:

Չնախատեսված ազդեցություններ – Դիցուք, ինչ-որ մի երկրի կառավարություն ցանկացել է նվազեցնել շրջակա միջավայրին տրվող վնասները՝ պահանջելով, որ խմիչքները վաճառվեն վերամշակելի ապակե, այլ ոչ թե պլաստիկ շշերով: Սկզբում սա խելամիտ է թվացել: Սակայն հետագա վերլուծությունները ցույց են տվել, որ մատակարարող փոխադրարային միջոցներն ապակե շշերով ըմպելիքներն առաքելիս ավելի շատ վառելիք էին օգտագործում, քանի որ ապակին շատ ավելի ծանր է, քան պլաստիկը: Վառելիքի լրացուցիչ սպառման արդյունքում շրջակա միջավայրին հասցվող վնասն ավելին է, քան պլաստիկ շշերի օգտագործման արդյունքում առաջացող վնասը, ուստի առաջարկը մերժվել է: Այսպիսով, առանց մանրակրկիտ վերլուծության, շրջակա միջավայրի բարելավմանն ուղղված կարգավորումը կարող է հանգեցնել դրան վնասող չնախատեսված ազդեցության:

4.3.2. Ազդեցության ենթարկված խմբերը

Խնդրի լուծման տարբերակները միմյանցից տարբերվում են ոչ միայն նպատակներին հասնելու մեթոդներով, այլ նաև տարբեր սուբյեկտների կամ դրանց խմբերի վրա իրենց ազդեցություններով: Կառավարությունները շահագրգռված են ապահովել, որ կարգավորումները հնարավորինս արդար լինեն, սակայն կարգավորման ծախսերն ու օգուտները հազվադեպ են բաշխվում հավասարապես հասարակության և տնտեսության բոլոր հատվածների միջև: Շատ հաճախ, կարգավորման արդյունքում ծախսեր կրողները և կարգավորումից օգտվողները տարբեր մարդիկ են: Այն փաստը, որ ծախսերն ու օգուտները հավասարապես չեն բաժանվում, չի նշանակում, որ առաջարկը վատն է, բայց դրա քննարկումը կարևոր է որոշում կայացնելու համար:

Վերլուծության ընթացքում անհրաժեշտ է նույնականացնել այն խմբերը, որոնք կարգավորման կողմից կարող են ենթարկվել ազդեցության, այսինքն կշահեն կարգավորումից կամ կկրեն ծախսեր՝ ուղղակի կամ անուղղակի:

Վերլուծության ընթացքում անհրաժեշտ է առանձնացնել առնվազն 3 խումբ, որոնց վրա կարգավորումն ազդեցություն կունենա՝ սպառողներ, տնտեսվարողներ, պետություն: Այնուհետև վերջիններս կարող են դասակարգվել ըստ տարբեր չափորոշիչների:

Օրինակ 13. Ազդեցության ենթարկված խմբերի օրինակներ

Ազդեցությունների վերլուծության համար առաջարկվում է անդրադառնալ պոպուլյար ազդեցության ենթարկված խմբերի հետևյալ կատեգորիաներին՝

Քաղաքացիներ/բնակիչներ - Երբ փոփոխությունները լայնարարած են և չեն ազդում որևէ հատուկ ենթախմբի վրա:

Սպառողներ - Երբ ազդեցության է ենթարկվում որևէ կոնկրետ արտադրանքի/ծառայության սպառողը:

Աշխատողներ - Այն դեպքում, երբ ազդեցության են ենթարկվում վարձու աշխատողները ընդհանրապես կամ որոշակի ճյուղի աշխատողները:

Կազմակերպություններ - Գործարար միջավայրն ընդհանուր առմամբ կամ որոշակի ճյուղի կազմակերպությունները: Անհրաժեշտ է նաև տարբերակել կազմակերպություններն ըստ դրանց չափի (միկրո, փոքր, միջին և մեծ), եթե դրանք ենթարկվում են կարգավորիչ նորմերից բխող տարբեր պահանջների (բացառություններ և հատուկ ռեժիմներ) կամ հավանական է, որ նույն կարգավորումներից կենթարկվեն տարբեր ազդեցությունների:

Պետական մարմիններ - Անհրաժեշտության դեպքում տարբերակել պետական և համայնքային մակարդակները:

Վերը նշված ցանկն ամբողջական չէ և անհրաժեշտության դեպքում, կախված խնդրի և առաջարկվող լուծումների բնույթից և առանձնահատկություններից, պետք է դիտարկվեն նաև

ուղղակի ազդեցության ենթարկվող այլ խմբեր, օրինակ՝ տարածաշրջաններ, ուսանողներ, երեխաներ, երիտասարդներ, կենսաթոշակառուներ, հաշմանդամներ և այլն:

Այսպիսով, ազդեցությունների վերլուծության և գնահատման գործընթացի առաջին փուլի ավարտին պետք է քարտեզագրված լինեն բոլոր հնարավոր դրական կամ բացասական ազդեցությունները, ինչպես նաև ազդեցության ենթարկվող խմբերը:

4.4. Նշանակալի ազդեցությունների ընտրություն

ԿԱԳ շրջանակներում անհրաժեշտ չէ վերլուծել բոլոր ազդեցությունները բոլոր հնարավոր շահառուների վրա: Խորացված վերլուծության համար պետք է ընտրել առավել նշանակալի ազդեցությունները՝ հիմնվելով համաչափ վերլուծության սկզբունքի վրա, հաշվի առնելով հետևյալ գործոնները.

<p>Ազդեցության համապատասխանությունը միջամտության տրամաբանությանը</p> <p>Տարբերակի բոլոր հիմնական բաղկացուցիչները, որոնք ուղղակիորեն կնպաստեն նպատակների իրականացմանը, պետք է ենթարկվեն հետագա վերլուծության, քանի որ դրանց գնահատումն անհրաժեշտ պայման է տարբերակի արդյունավետությունն ու ծախս-խնայողությունը գնահատելու համար:</p> <p>Օրենսդրական նախաձեռնությունների դեպքում սա ենթադրում է հետագա վերլուծության ենթարկել այն փոփոխությունները, որոնք առաջացնելու են համապատասխանեցում, կիրարկում և հարկադրում:</p>
<p>Կանխատեսվող ազդեցությունների բացարձակ մեծություն</p> <p>Վերլուծությունը պետք է միշտ կենտրոնանա ամենամեծ ազդեցությունների վրա:</p>
<p>Որոշակի շահառուների համար ակնկալվող ազդեցությունների հարաբերական չափը</p> <p>Չնայած որոշ ազդեցությունները բացարձակ առումով կարող են փոքր լինել, սակայն կարող են նշանակալի լինել որոշակի կողմերի համար, հաշվի առնելով՝</p> <ul style="list-style-type: none"> ✓ վերջիններիս հարաբերական չափը, օրինակ, միկրո և փոքր ձեռնարկությունները, ✓ ազդեցությունների կենտրոնացված բնույթը, օրինակ՝ որոշակի տարածաշրջանների, ճյուղերի, շահառու խմբերի և այլնի վրա, ✓ կուտակային ազդեցությունը, որն իրենից ներկայացնում է ցանկացած սուբյեկտի վրա նոր պարտավորությունների և արդեն իսկ առկա համապատասխանության, իրականացման կամ հարկադրման նշանակալի պարտավորությունների հանրագումարը:
<p>Ազդեցությունների կարևորությունը կառավարության այլ նպատակների և քաղաքականության համար</p>

Եթե ազդեցությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ հավանական է առաջանա ընտրություն կատարելու խնդիր նախաձեռնության նպատակների (և դրա հետևանքների) ու կառավարության քաղաքականության տեսանկյունից այլ կարևոր նպատակների միջև, ապա համապատասխան ազդեցությունները պետք է ենթարկվեն խորացված վերլուծության:

Ազդեցությունների կանխատեսվող նշանակալիությունը պետք է գնահատվի ելակետային սցենարի համեմատությամբ: Ընտրությունը կատարելիս պետք է հաշվի առնել նաև շահագրգիռ կողմերի տեսակետները և փորձագիտական գնահատականները:

Այս գործընթացի ավարտին պետք է ընտրել այն նշանակալի ազդեցությունները, որոնք անհրաժեշտ է հետազայում վերլուծել: Ընդ որում, պետք է լավ պատկերացում ունենալ դրանք դրական են, թե բացասական, ում համար օգուտ կբերեն, և ով կկրի դրանց վնասը/բեռը: Խորացված վերլուծության ենթակա ազդեցությունների ընտրությունը պետք է հստակ հիմնավորված լինի:

4.5. Նշանակալի ազդեցությունների գնահատում

Նշանակալի (զգալի) ազդեցությունները պետք է գնահատվեն քանակապես, իսկ եթե հնարավոր չէ՝ որակապես:

Ազդեցությունների վերաբերյալ տեղեկատվությունը կարող է լինել երկու տեսակի՝ քանակական և որակական: Քանակական տեղեկատվությունն արտահայտվում է թվային (այդ թվում՝ դրամական) արտահայտությամբ: Ազդեցությունների ներկայացումը քանակական տեղեկատվության միջոցով ազդեցությունների վերաբերյալ տեղեկատվության ներկայացման ամենացանկալի տարբերակն է, քանի որ թույլ է տալիս արագ գնահատել տարբերակի ծախսերն ու օգուտները, հատկապես եթե դրանք դրամական արտահայտությամբ են, և համեմատել տարբերակները:

Այսպիսով, ազդեցությունները վերհանելուց հետո պետք է փորձել հնարավորության դեպքում դրանք ներկայացնել քանակապես, այդ թվում՝ արտահայտել դրամական արտահայտությամբ:

Այնուամենայնիվ, շատ դեպքերում կարող է դժվար լինել քանակապես գնահատել տարբերակների ազդեցությունները հիմնականում սահմանափակ, ոչ վստահելի կամ չհամեմատվող տվյալների պատճառով: Այսպիսի պայմաններում որակական տեղեկատվությունը պետք է հանդիսանա գնահատման գործընթացի մի մաս: Նույնիսկ երբ ծախսերն ու օգուտները հնարավոր չէ ներկայացնել քանակապես, հնարավոր է տարբերակները քննարկել որակական տեսանկյունից և տալ որոշակի եզրակացություններ դրանց կարևորության վերաբերյալ: Այն

ազդեցությունները, որոնք քանակապես կամ դրամական արտահայտությամբ հանրավոր չէ արտահայտել, պետք չէ դիտարկել որպես պակաս կարևոր, քանի որ իրականում դրանք կարող են նշանակալի լինել:

Որակական տեղեկատվության ներկայացման հնարավոր խնդիրներից է սուբյեկտիվությունը: Դրանից խուսափելու համար պետք է ջանալ այն ներկայացնել հնարավորինս հստակ և անկողմնակալ:

Օգտագործել քանակական գնահատումներ որտեղ հնարավոր է, և որակական գնահատականներ՝ որտեղ հնարավոր չէ տալ քանակական գնահատական:

4.5.1. Ծախսերի և օգուտների տեսակներ

Կարգավորման ազդեցությունների քանակական գնահատման գործընթացն իրենից ներկայացնում է կարգավորմամբ պայմանավորված դրական և բացասական ազդեցությունների, այն է՝ ծախսերի և օգուտների թվային գնահատում: Ծախսը, կարգավորման կիրառմամբ պայմանավորված, կարգավորողի (հանրային հատվածի) և կարգավորվողի (մասնավոր հատվածի) ժամանակի, ֆինանսական և այլ ռեսուրսների կորուստն է: Իսկ օգուտը, կարգավորման կիրառմամբ պայմանավորված, կարգավորողի և կարգավորվողի ստացած որևէ դրական արդյունքը (մասնավորապես՝ օրենսդրական նախաձեռնությամբ սահմանված նպատակների իրականացումը):

Կարգավորմամբ պայմանավորված կարող են առաջանալ ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի ծախսեր ու օգուտներ:

Ուղղակի ծախսերն ու օգուտներն առաջանում են կարգավորման շրջանակում ընդգրկված կողմերի մոտ՝ պայմանավորված կարգավորմամբ սահմանված պահանջ-պայմաններին համապատասխանության ապահովմամբ:

Անուղղակի ծախսերն ու օգուտներն առաջանում են կարգավորման շրջանակում չընդգրկված կողմերի մոտ և հանդիսանում են վարքագծային փոփոխության արդյունք՝ պայմանավորված կարգավորման կիրառմամբ: Դրանք սովորաբար առաջանում են ժամանակի ընթացքում՝ շուկայական, սոցիալական և այլ պայմանների փոփոխության հետևանքով:

Կարգավորմամբ պայմանավորված ծախսեր և օգուտներ

Կարգավորմամբ պայմանավորված
ծախսեր և օգուտներ

ԿԱԳ մեթոդաբանության շրջանակներում կարգավորմամբ սահմանված պահանջ-պայմաններին համապատասխանության ապահովմամբ պայմանավորված ծախսերն ու օգուտները գնահատվում են հանրային հատվածի և մասնավոր հատվածի համար: Հանրային հատվածը դա համապատասխան պետական կառավարման մարմիններն են, իսկ մասնավոր հատվածը՝ տնտեսվարող սուբյեկտներն, քաղաքացիներն ու անհատները, որոնք ապահովում են կարգավորման համապատասխանությունը, և հանրությունը որպես մեկ ամբողջություն:

4.5.1.1. Կարգավորմամբ պայմանավորված հանրային հատվածի և մասնավոր հատվածի ծախսերի տեսակներ

ԿԱԳ մեթոդաբանության շրջանակներում հիմնականում իրականացվում է կարգավորմամբ պայմանավորված ուղղակի ծախսերի բացահայտում և գնահատում:

ԿԱԳ մեթոդաբանության շրջանակներում հաշվարկվող ծախսերն են՝

- 1. Ընթացիկ ծախսեր.** հանրային կառավարման մարմինների, տնտեսվարող սուբյեկտների կամ քաղաքացիների կողմից ծախսված ժամանակ՝ արտահայտված աշխատավարձով և վերադիր ծախսերի արժեքով, ինչպես նաև կարգավորմամբ պահանջվող ցանկացած վճար:

Ընթացիկ ծախսերի օրինակներ՝ դիմումի, այլ փաստաթղթերի, հաշվետվության, տեղեկատվության ներկայացում, պետական տուրքի, փորձաքննության վճարի, այլ ծառայության վճարների վճարում:

Ընթացիկ ծախսերի մեջ են ներառվում նաև՝

- 1) տրանսպորտային ծախսերը,
- 2) գործուղման ծախսերը,
- 3) վերապատրաստումների և կարողությունների զարգացմանն ուղղված ծախսերը,
- 4) աշխատուժի (նոր աշխատակիցների ընդունման) ծախսերը,
- 5) նյութական ծախսերը (մինչև մեկ տարի օգտակար օգտագործման ժամկետ ունեցող (այն է՝ հիմնական միջոց չհանդիսացող) ապրանքների ձեռքբերման, լրացուցիչ շրջանառու միջոցների օգտագործման և այլ նյութական ծախսերը):

2. Կապիտալ (լրացուցիչ կապիտալ) ծախսեր. կարգավորման պահանջներին համապատասխանության ապահովմամբ պայմանավորված՝ ձեռք բերվող հիմնական միջոց(ներ)ի կապիտալ արժեք: Կապիտալ ծախսերի մեջ հաշվարկվում են նաև կապիտալի տարեկան սպասարկման ծախսերը՝ հիմնական միջոցի պահմանման ծախսերը:

Կապիտալ ծախսերի օրինակներ՝ գրասենյակային գույքի, մեքենաների, սարքավորումների, ծրագրային ապահովման ձեռք բերում:

3. Կարգավորման անարդյունավետության հետևանքով չստացված եկամուտ. եկամտի կորուստ, որը տնտեսվարող սուբյեկտը կրում է կառավարության գործողության հետևանքով ակտիվների օգտագործման կամ գործունեության մեկնարկի ու նոր ծառայությունների մատուցման հետաձգումից:

Կարգավորման անարդյունավետության հետևանքով չստացված եկամտի օրինակներ՝ որևէ գործընթացի համար նախապես գանձվող վճարի գումարի օգտագործման անհնարինության հետևանքով եկամտի կորուստ, գործունեության իրականացման թույլտվության տրամադրման գործընթացի տևողության ընթացքում չստացված շահույթ:

4. Ոչ դրամական ծախսեր. ծախսեր, որոնք ենթակա են քանակական գնահատման, սակայն արտահայտվում են ոչ դրամական միավորներով:

Ոչ դրամական ծախսերի օրինակներ՝ հիվանդացությունների, մահացությունների դեպքերի քանակ, փակված աշխատատեղերի քանակ:

4.5.1.2. Կարգավորմամբ պայմանավորված հանրային հատվածի և մասնավոր հատվածի օգուտների տեսակներ

ԿԱԳ մեթոդաբանության շրջանակներում հիմնականում իրականացվում է կարգավորմամբ պայմանավորված ուղղակի օգուտների բացահայտում և գնահատում:

ԿԱԳ մեթոդաբանության շրջանակներում հաշվարկվող օգուտներն են՝

1. Կարգավորմամբ պայմանավորված ծախսերի կրճատումից օգուտներ. խնայողություններ, որոնք առաջանում են՝

- 1) **ընթացիկ ծախսերի,**
- 2) **կապիտալ (լրացուցիչ կապիտալ) ծախսերի,**
- 3) **կարգավորման անարդյունավետության հետևանքով չստացված եկամտի**

կրճատումից:

Կարգավորմամբ պայմանավորված ծախսերի կրճատումից օգուտների օրինակներ՝ փաստաթղթի ներկայացման, վճարի վճարման, հիմանական միջոցի ձեռքբերման պահանջ(ներ)ի վերացում, գործունեության մեկնարկի թույլտվության ստացման գործընթացի տևողության կրճատում:

2. Կարգավորմամբ պայմանավորված

- 1) **պետական բյուջեի եկամուտներ,**
- 2) **պետության կողմից տրամադրվող աջակցություն, մատուցվող ծառայություն և պետությունից ստացվող այլ օգուտներ:**

Կարգավորմամբ պայմանավորված օգուտների օրինակներ՝ գանձվող պետական տուրքեր/ծառայության վճարներ, պետության կողմից տրամադրվող աջակցություն (նպաստներ, սուբսիդիաներ), հանրային բարիքներ:

3. *Ոչ դրամական օգուտներ.* օգուտներ, որոնք ենթակա են քանակական գնահատման, սակայն արտահայտվում են ոչ դրամական միավորներով՝

- 1) **ոչ դրամական ծախսերի կրճատից օգուտներ,**
- 2) **ոչ դրամական օգուտներ:**


Ոչ դրամական օգուտների օրինակներ՝ հիվանդացությունների, մահացությունների դեպքերի քանակի կրճատում, փրկված կյանքեր, բացված նոր աշխատատեղեր:

ԿԱԳ մեթոդաբանության շրջանակներում կարգավորմամբ պայմանավորված ծախսերի և օգուտների գնահատումն իրականացվում է հետևյալ հաջորդական քայլերի միջոցով՝

1. նախ պետք է բացահայտվեն կարգավորման բոլոր այն դրույթները՝ պահանջները, որոնք առաջացնում են ծախս կամ օգուտ հանրային կամ մասնավոր հատվածի համար,
2. այնուհետև պետք է որոշել յուրաքանչյուր պահանջով սահմանված գործողության իրականացման միավոր ծախսի կամ օգուտի (վճարման ենթակա վճարի, ձեռք բերվող կապիտալի, ծախսվող ժամանակի, տրամադրվող աջակցության և այլն) մեծությունը,
3. հաջորդ քայլում պետք է գնահատել յուրաքանչյուր պահանջի ազդեցության ենթարկված սուբյեկտների՝ այդ պահանջի իրականացումն ապահովող շահառուների ընդհանուր թվաքանակը և յուրաքանչյուր պահանջի իրականացման հաճախականությունը (տարեկան մեկ անգամ, տարեկան երկու անգամ, երկու տարին մեկ անգամ և այլն),

4. յուրաքանչյուր պահանջի ընդհանուր ծախսի կամ օգուտի հաշվարկման համար պետք է տվյալ պահանջի միավոր ծախսը կամ օգուտը բազմապատկել ազդեցության ենթարկված սուբյեկտների ընդհանուր թվաքանակով և դրա իրականացման հաճախականությամբ,
5. իսկ կարգավորմամբ պայմանավորված ընդհանուր ծախսերի կամ օգուտների հաշվարկման համար պետք է բոլոր պահանջների ընդհանուր ծախսերը կամ օգուտները գումարել իրար:

Կարգավորմամբ պայմանավորված ծախսերի և օգուտների գնահատման քայլերի հաջորդականություն



ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

Ժամանակի հաշվառում (դիսկոնտրավորում)

Շատ հաճախ կարգավորմամբ պայմանավորված ծախսերը և օգուտներն առաջանում են մի քանի տարվա ընթացքում: Եթե այդ դեպքն է, ապա պետք է օգտագործել դիսկոնտրավորման բանաձևը: Ժամանակը գործոն է, որն այլընտրանքային ծախսերի (չստացված եկամտի) առկայության պատճառով ազդում է ծախսերի և օգուտների հաշվարկի վրա. քանի որ այսօրվա փողը կարող է ներդրվել և ապահովել եկամուտ, ուստի այսօրվա փողն ավելի մեծ արժեք ունի, քան նույն քանակությամբ վաղվա փողը: Այլ կերպ ասած՝ ծախսերն ու օգուտները պետք է ենթարկվեն դիսկոնտրավորման: Դիսկոնտրավորումը մի գործընթաց է, որի ժամանակ ծախսերի (օգուտների) ապագա արժեքը բերվում է նրանց ներկա արժեքին: Երբ փարբերակի ազդեցությունը տրվում է մի քանի տարի, պետք է կիրառել այսպես կոչված «դիսկոնտրավորման փոկոսադրույքը»՝ ստորև նշված բանաձևին համապատասխան՝

4.5.2. Ծախսերի և օգուտների գնահատման մեթոդներ

ԿԱԳ մեթոդաբանության շրջանակներում ծախսերի և օգուտների գնահատման ժամանակ պետք է հիշել, որ հաճախ ծախսերը և օգուտները հանդիսանում են միմյանց հայելային արտացոլումը. ինչպես, օրինակ, արդեն վերը նշվել է, օգուտների ամենակարևոր տեսակներից մեկը ծախսերի կրճատումից խնայողություններն են: Նմանապես, ծախսերը հաճախ սահմանվում են որպես «չստացված օգուտներ», այն է՝ բաց թողնված հնարավորություններ: Ստորև ներկայացվում են ծախսերի և օգուտների քանակական գնահատման ամենատարածված մեթոդներն ու եղանակները, որոնց մեծ մասը նպատակաուղղված են ոչ թե պարզապես ծախսերի և օգուտների քանակական գնահատմանը, այլ՝ դրանց դրամական արտահայտությամբ ներկայացմանը:

1. Կարգավորումից բխող վճարների գնահատման մեթոդաբանություն:

Կարգավորումից բխող վճարներով պայմանավորված մասնավոր հատվածի տարեկան ծախսի գնահատումն իրականացվում է հետևյալ բանաձևով՝

$$\text{Վճարներով պայմանավորված տարեկան ծախս} = \text{Միավոր վճար} * \text{Քանակություն} \\ (\text{ազդեցության ենթարկվածներ} * \text{հաճախականություն})$$

Որտեղ միավոր վճարը կարգավորմամբ սահմանված վճարի մեծությունն է, իսկ քանակությունը ցույց է տալիս, թե տարեկան քանի անգամ է իրականացվում տվյալ վճարը ազդեցության ենթարկված տնտեսվարողների կողմից:

Օրինակ 14. Կարգավորումից բխող վճարների գնահատման օրինակ

Եթե օրենսդրությամբ սահմանվում է տարեկան պետական տուրք դեղերի մեծածախ իրացման լիզենզիայի տրամադրման համար, ապա դեղերի մեծածախ իրացման լիզենզիայի պետական տուրքի վճարման տարեկան ծախսը կլինի՝

$$\text{Կարգավորումից բխող վճարը} = 140,000 \llcorner\llcorner \text{դրամ} * 1 \text{ անգամ} * 72 \text{ մատակարար} \\ \text{որտեղ՝}$$

140,000 չ՛հրամը տարեկան պետական տուրքի մեծությունն է,

1 անգամը տարվա ընթացքում տուրքի վճարման հաճախականությունը է,

72-ը՝ դեղերի մեծածախ իրացման գործունեություն իրականացնող մատակարարների թիվը:

2. Սրանդարդ ծախսային մոդել:

Ձեռնարկատիրության իրականացման վարչարարական բեռի (ծախսեր, որոնք առաջանում են կարգավորմամբ սահմանված տեղեկատվության ներկայացման պարտավորությունների իրականացումից) գնահատման ստանդարտ ծախսային մոդելի հիմնական գաղափարը կայանում է դիտարկվող կարգավորումը ըստ «տեղեկատվության ներկայացման պարտավորությունների» տրոհելու և յուրաքանչյուր «տեղեկատվության ներկայացման

պարտավորության» շրջանակներում «տվյալների ներկայացման պահանջների» առանձնացման մեջ: Այնուհետև, յուրաքանչյուր «տվյալի ներկայացման պահանջ» արտահայտվում է անհրաժեշտ վարչարարական գործողությունների միջոցով, որոնցից յուրաքանչյուրի ծախսը գնահատվում է հետևյալ բանաձևի կիրառմամբ՝

Յուրաքանչյուր վարչարարական գործողության փարեկան ծախս = Գին * Ժամանակ * Քանակություն (ազդեցության ենթարկվածներ * հաճախականություն),

Որտեղ գինը վարչարարական գործողության իրականացման վրա ծախսված ժամանակի դրամական արժեքն է՝ արտահայտված տվյալ գործողության իրականացման համար պատասխանատու վարձու աշխատողի՝ 1 ժամվա միջին անվանական աշխատավարձով և 1 ժամվա ընթացքում իրականացվող վերադիր ծախսերի դրամական արժեքով, ժամանակը գործողության իրականացման տևողությունն է՝ արտահայտված ժամով, իսկ քանակությունը ցույց է տալիս, թե տարեկան քանի անգամ է իրականացվում գործողությունն ազդեցության ենթարկված տնտեսվարողների կողմից:

Ստանդարտ ծախսային մոդելի հիման վրա մշակվել է ***Համապատասխանության ծախսային մոդելը***, որը կիրառվում է հանրային շահի ապահովմանն ուղղված կարգավորմամբ սահմանված պարտավորությունների իրականացմամբ պայմանավորված գործարար միջավայրի համապատասխանության նշանակալի ծախսերի (կապիտալ ծախսերի, աշխատուժի ծախսերի, նյութական ծախսերի և այլ ծախսերի) գնահատման համար: Մեկ այլ մոդել, որը ևս մշակվել է Ստանդարտ ծախսային մոդելի հիման վրա ***Կարգավորման ծախսային մոդելն է***, որը կիրառվում է կարգավորմամբ պայմանավորված մասնավոր հատվածի և հանրային հատվածի ծախսերի (բացառությամբ՝ պետական բյուջե կատարվող վճարների և այլընտրանքային ծախսերի) գնահատման համար:

Օրինակ 15. Ստանդարտ ծախսային մոդելով ծախսերի գնահատման օրինակ

Եթե, օրենսդրության համարձայն, անշարժ գույքի գնահատման որակավորման վկայական ստանալու համար պետք է հանձնել անշարժ գույքի գնահատման մասնագիտական որականվորան քննություն, որի համար պահանջվում է համապատասխան պետական լիազոր մարմին ներկայացնել գրավոր դիմում, բարձրագույն կրթության մասին վկայող փաստաթղթի (դիպլոմ) պատճեն, մեկ լուսանկար՝ 3 x 4սմ չափսի, անձը հաստատող փաստաթղթի (անձնագրի) պատճեն և պետական փուրքի վճարման անդորրագրի պատճեն, ապա քննությանը մասնակցելու համար դիմելու ժամանակային ծախսը կլինի՝

Վարչարարական գործողության ծախս = (0.5 ժամ * (1,110 ՀՀ դրամ + 330 ՀՀ դրամ) + (0.5 ժամ + 0.5 ժամ) * 1,110 ՀՀ դրամ) * 45 անձ = 97,200 ՀՀ դրամ

որտեղ՝

0.5 ժամը դիմումի լրացման ժամանակային ծախսն է,

0.5 ժամը բարձրագույն կրթության մասին վկայող փաստաթղթի (դիպլոմ), անձը հաստատող փաստաթղթի (անձնագրի) և պետական տուրքի վճարման անդորրագրի պատճենահանման և դրա ճանապարհային (պատճենահանման ծառայություն մատուցող գրասենյակ գնալ գալու) ժամանակային ծախսն է,

0.5 ժամը լուսանկարվելու և դրա ճանապարհային ժամանակային ծախսն է,

1,110 ՀՀ դրամը վարձու աշխատողի մեկ ժամվա միջին անվանական աշխատավարձն է,

330 ՀՀ դրամը՝ 1 ժամվա ընթացքում իրականացվող վերադիր ծախսը (թուղթ, գրիչի և այլն),

45-ը տարեկան որակավորում ստացող անձանց թիվն է:

Օրինակ 16. Համապատասխանության ծախսային մոդելով ծախսերի գնահատման օրինակ

Կապիտալ ծախս

Եթե օրենսդրությամբ սահմանվում է, որ աշխատանքային գործույկները պետք է պահվեն մետադյա չհրկիզվող պահարանում, ապա չհրկիզվող պահարանի ձեռքբերման կապիտալ ծախսը կլինի՝

$$\text{Կապիտալ ծախս} = (80,000 \text{ ՀՀ դրամ} + 25,360 \text{ ՀՀ դրամ}) * 3326 \text{ չհրկիզվող պահարան} = 350,427,360 \text{ ՀՀ դրամ}$$

որտեղ՝

80,000 ՀՀ դրամը մեկ չհրկիզվող պահարանի շուկայական գինն է,

25,360 ՀՀ դրամը մեկ չհրկիզվող պահարանի 5 տարվա օգտակար օգտագործման ժամկետի ընթացքում տարեկան սպասարկման գումարների բերված արժեքն է,

3326-ը ձեռք բերված չհրկիզվող պահարանների թիվն է:

Աշխատուժի ծախս

Եթե, օրենսդրության համաձայն, դեղերի մեծածախ իրացում իրականացնող փոխտնտեսները պետք է նշանակեն պարզաճ բաշխման գործունեության (ՊԲԳ) համար պատասխանատու անձ, ապա ՊԲԳ պատասխանատու անձի տարեկան աշխատավարձի ծախսը կլինի՝

$$\text{Աշխատուժի ծախս} = 186,540 \text{ ՀՀ դրամ} * 1 \text{ պատասխանատու անձ} * 12 \text{ ամիս} * 72 \text{ մատակարար} = 161,170,560 \text{ ՀՀ դրամ}$$

որտեղ՝

186,540 ՀՀ դրամը պատասխանատու անձի ամսական անվանական աշխատավարձն է,

1-ը յուրաքանչյուր մատակարարի կողմից նշանակված ՊԲԳ պատասխանատու անձանց թիվն է,

12-ը՝ տարվա մեջ ամիսների թիվը,

72-ը՝ դեղերի մեծածախ իրացման գործունեություն իրականացնող մատակարարների թիվը:

Ծառայության ձեռքբերման ծախս

Եթե, օրենսդրության համաձայն, դեղերի պետական գրանցումն իրականացվում է դեղերի լիցենզիայի ստուգման արդյունքում տրված ետառնադրության հիման վրա ապա դեղերի

$$\text{Ծառայության ձեռքբերման ծախս} = 412,000 \text{ ՀՀ դրամ} * 1071 \text{ դեղ} = 441,252,000 \text{ ՀՀ դրամ}$$

որտեղ՝

412,000 ՀՀ դրամը փորձաքննության վճարն է,


1071-ը՝ տարեկան զբաղված դեղերի քանակը:

3. Մասնակի հավասարակշռության մոդել:

Առաջարկվող կարգավորման շուկայական ազդեցությունների վերլուծությունը պահանջում է հատուկ գործիքների՝ տնտեսական մոդելների կիրառում, որոնք արտահայտում են տարատեսակ գործոնների, ոլորտների և դերակատարների միջև առկա փոխկապակցվածությունները և փորձում են արտացոլել իրական կյանքում առկա վարքագծային օրինաչափությունները: Ավելին, կախված իրենց ընդգրկման շրջանակներից, տնտեսական մոդելների միջոցով հնարավոր է նաև միաժամանակ գնահատել ծախսերի և օգուտների մի քանի տեսակներ: ***Մասնակի հավասարակշռության մոդելի*** օգտագործումը ենթադրում է, որ կարգավորման ազդեցությունը բոլոր մնացած շուկաների վրա նշանակալի չէ և կարող է կամ անտեսվել, կամ գնահատվել առանց ամբողջական տնտեսության մոդելի

կիրառման: Սա նշանակում է, որ շատ դեպքերում անուղղակի ազդեցությունները կիլինեն քիչ նշանակալի, քան ուղղակի ազդեցությունները, և ծախսերի ու օգուտների փոխանցումը այլ շուկաներ կսահմանափակվի: Իսկ որպես տվյալ դիտարկվող շուկայում ստեղծվող բարեկեցության գնահատման ցուցանիշ դիտարկվում է սպառողական ավելցուկի և արտադրողական ավելցուկի հանրագումարը, որի փոփոխությունն էլ հենց գնահատվում է մոդելի շրջանակներում՝ կարգավորման ազդեցությունը պարզելու համար:

Օրինակ 18. Մասնակի հավասարակշռության մոդելների կիրառմամբ գնահատման օրինակ



Գծապատկերի ա) մասում ցուցադրված է մրցակցային շուկայի իրավիճակ մինչ այդ շուկայում շրջակա միջավայրի կարգավորման ներդրումը. առաջարկի S_0 և պահանջարկի D կորերի հարման կետում որոշվում է տվյալ շուկայում իրացվող ապրանքի կամ ծառայության P_0 հավասարակշիռ գինը և Q_0 քանակը: Պահանջարկի կորից ցած գտնվող և հավասարակշիռ գնից վեր գտնվող երկնագույնով սրվարաններկված հատվածը հանդիսանում է սպառողական ավելցուկը (սպառողների համար ապրանքի կամ ծառայության գնումից դրա արժեքի ավելցուկը՝ ընդհանուր վճարված գումարի նկատմամբ): Առաջարկի կորից վեր գտնվող և հավասարակշիռ գնից ցած գտնվող կապույտ գույնով սրվարաններկված հատվածը հանդիսանում է արտադրողական ավելցուկը (ապրանքի կամ ծառայության վաճառքից արտադրողների սրացած գումարի ավելցուկը՝ ընդհանուր արտադրական ծախսերի նկատմամբ): Այս երկու փարածքների հանրագումարը իրենից ներկայացնում է այս շուկայում գեներացված ընդհանուր բարեկեցությունը՝ տվյալ ապրանքի կամ ծառայության արտադրությունից և սպառումից հասարակության զուտ օգուտը:

Ենթադրենք, որ այս շուկայում շրջակա միջավայրի նոր կարգավորման ներդրումը կհանգեցնի ապրանքի կամ ծառայության արտադրական ծախսերի ավելացման: Արտադրված արդյունքի յուրաքանչյուր միավորի արտադրությունն այժմ ավելի ծախսատար է՝ պայմանավորված կարգավորմանը համապատասխանության ծախսերով: Արդյունքում կազմակերպություններն, ի պատասխան, կնվազեցնեն իրենց արտադրության ծավալը: Արդյունաբերության այդ ճյուղի համար դա կդրսևորվի առաջարկի կորի S_0 -ից S_1 դեպի վեր տեղաշարժով: Այլ հավասար պայմաններում՝ առաջարկի կորի այս տեղաշարժը շուկայի վրա կազդի հավասարակշիռ գնի բարձրացմամբ՝ P_0 -ից P_1 , և արտադրության հավասարակշիռ ծավալի նվազմամբ՝ Q_0 -ից Q_1 :

Ինչպես երևում է գծապատկերի ա) և բ) մասերի համեմատությունից, բարեկեցության վրա ազդեցությունն արտահայտվում է սպառողական և արտադրողական ավելցուկի կրճատմամբ: Այս շուկայի համար կարգավորմանը համապատասխանության ծախսերը հավասար կլինեն հին և նոր առաջարկի կորերի միջև ընկած հատվածին, որը սահմանազատված է արտադրության նոր Q_1 հավասարակշիռ մակարդակով: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ վերոնշյալ գծապատկերից կարելի է հանգել կարգավորմամբ պայմանավորված ծախսերի վերաբերյալ մի շարք հետևությունների:

Առաջին, երբ սպառողները զգայուն են բարիքի գնի նկատմամբ, այսինքն պահանջարկի կորն ունի դեպի վար թեքվածություն, ապա ավելի բարձր գինը դրդում է նրանց կրճատել տվյալ բարիքի սպառումը: Եթե կարգավորման առաջարկվող փոփոխությունների ծախսերը նախապես գնահատելիս գնի նկատմամբ այս զգայուն վարքը հաշվի չի առնվում (այն է՝ գնահատումները հիմնվում են արտադրության Q_0 սկզբնական ծավալի վրա), ապա կարգավորման համապատասխանության ծախսերը լինում են գերազնահատված:

Երկրորդ, ինչպես երևում է գծապատկերից համապատասխանության ծախսերը սովորաբար կարգավորմամբ պայմանավորված ընդանուր ծախսերի միայն մի մասն են կազմում: Գծապատկերում սև գույնով սովորաբար ներկված թերարտադրությունից անվերադարձ կորուստը (սպառողների կողմից՝ իրենց արտադրության ծախսից ավելի բարձր գնահատվող ապրանքի կամ ծառայության միավորներ չարտադրելու կորուստը) կարգավորումից առաջացող մեկ այլ իրական կորուստ է: Այն արտացոլում է արտադրության կրճատմամբ պայմանավորված զուտ օգուտի կորուստը հասարակության համար: Ավելին, այն տեղի է ունենում հաշվարկային ժամանակաշրջանի հաջորդող տարիների համար ևս:

Այսպիսով, եթե ենթադրենք, որ այս շուկայից դուրս կարգավորման ազդեցություններն աննշան են, ապա կարգավորման սոցիալական ծախսը հավասար կլինի կարգավորմանը համապատասխանության ծախսերի և թերարտադրությունից անվերադարձ կորուստի հանրագումարին. ճիշտ հավասար մինչև կարգավորումը եղած հավասարակշիռ մակարդակի համեմատ սպառողական ավելցուկի և արտադրողական ավելցուկի նվազմանը:

4. Ընդհանուր հավասարակշռության մոդել:


Կարգավորման առաջարկվող մի շարք տարբերակների դեպքում առաջարկվող կարգավորման ազդեցությունները կարող են դուրս գալ կոնկրետ ոլորտի սահմաններից և առաջացնել էական փոփոխություններ թաղանթիվ այլ ոլորտների և նույնիսկ ամբողջ

տնտեսության մասշտաբով: Ազդեցության ենթարկված շուկաների թվի աճին զուգահեռ ավելի ու ավելի քիչ հավանական է դառնում, որ մասնակի հավասարակշռության մոդելը կարող է ապահովել ծախսերի և օգուտների ճշգրիտ գնահատում: Նմանատիպ դեպքերում կիրառվում է **ընդհանուր հավասարակշռության մոդելը**, որն ընդգրկում է ամբողջ տնտեսության մասշտաբով շուկաների միջև առկա կապերը և կարող է գնահատել տնտեսությունում ցանկացած փոփոխությունից բխող առաջարկի կորերի տեղաշարժի և համապատասխանաբար պահանջարկի փոփոխությունները: Այսպիսով, ընդհանուր հավասարակշռության մոդել(ներ)ի կիրառման ժամանակ ենթադրվում է, որ սպասվող անուղղակի ազդեցությունները շատ նշանակալի են:


Օրինակ 19. – Ընդհանուր հավասարակշռության մոդելի կիրառմամբ գնահատման օրինակ

Դիցուք, որևէ երկրի կառավարությունը տնտեսության ոլորտներից մեկում բարձրացնում է վարձու աշխատողների եկամտային հարկը r տոկոսով: Ի՞նչ ազդեցություն կունենա այս քաղաքականությունը աշխատավարձերի ընդհանուր մակարդակի, քաղաքականության շրջանակում ընդգրկված տնտեսության ոլորտում և չընդգրկված ոլորտներում զբաղվածության մակարդակի ու ընդհանուր աշխատանքի շուկայում զբաղվածության մակարդակի վրա:


ա) Ընդգրկված ոլորտ



բ) Չընդգրկված ոլորտներ



գ) Աշխատանքի շուկա



Ընդհանուր հավասարակշռության մոդելի կիրառմամբ վերոնշյալ հարցերին պատասխանելու համար պետք է.

1. Որոշել աշխատանքի շուկայի սկզբնական հավասարակշռությունը: Գծապարկերում աշխատանքի ընդհանուր պահանջարկի D^1 կորի և աշխատանքի ընդհանուր առաջարկի S կորի հարմամբ որոշվում է սկզբնական հավասարակշռության e^1 կետը, որտեղ աշխատավարձի դրույքաչափը w^1 է, զբաղվածության մակարդակը տնտեսության ընդգրկված ոլորտում՝ L_c^1 ,

չընդգրկված ոլորտներում միասին՝ L_u^1 , իսկ ընդհանուր զբաղվածությունը՝ $L^1=L_c^1+L_u^1$: Աշխատանքի ընդհանուր պահանջարկի կորը հանդիսանում է տնտեսության ընդգրկված ոլորտում աշխատանքի պահանջարկի D_c^1 կորի և չընդգրկված ոլորտների աշխատանքի պահանջարկի D_u կորի հորիզոնական գումարը:

2. Ուսումնասիրել տնտեսության ընդգրկված ոլորտում աշխատանքի պահանջարկի փոփոխությունը և դրա արդյունքում աշխատանքի ընդհանուր պահանջարկի կորի տեղաշարժը: Եկամտային հարկի բարձրացման արդյունքում աշխատուժի ներգրավման հետ կապված ծախսերը կաճեն, ինչը կհանգեցնի ընդգրկված ոլորտում աշխատանքի պահանջարկի նվազման, և այդ ոլորտում աշխատանքի պահանջարկի կորի տեղաշարժի D_c^1 -ից D_c^2 (մասնակի հավասարակշռության մոդելի դեպքում վերլուծությունն այսքանով կավարտվեր): Աշխատանքի ընդհանուր պահանջարկի կորը ևս կտեղաշարժվի D^1 -ից D^2 :

3. Աշխատանքի ընդհանուր պահանջարկի և ընդհանուր առաջարկի կորերի միջոցով որոշել նոր հավասարակշռ աշխատավարձի մակարդակը, իսկ այնուհետև՝ տնտեսության համապատասխան ոլորտներում զբաղվածության մակարդակը: Աշխատողները կտեղափոխվեն ոլորտից ոլորտ, այնքան ժամանակ մինչ բոլոր ոլորտներում աշխատավարձը կհավասարվի նոր w^2 մակարդակին, որը հաստատվել է աշխատանքի ընդհանուր պահանջարկի նոր D^2 կորի և աշխատանքի ընդհանուր առաջարկի S կորի հատման կետում: Զբաղվածության մակարդակը տնտեսության ընդգրկված ոլորտում կլինի L_c^2 , իսկ տնտեսության չընդգրկված ոլորտներում միասին՝ L_u^2 :

4. Համեմատել հավասարակշռության նախնական և նոր մակարդակները միմյանց հետ: Եկամտային հարկի աճը հանգեցնում է աշխատավարձի, ընդհանուր զբաղվածության և տնտեսության ընդգրկված ոլորտում զբաղվածության նվազման, իսկ տնտեսության չընդգրկված ոլորտներում՝ զբաղվածության աճի:

Ընդհանուր հավասարակշռության մոդելի շրջանակներում պետք է դիտարկվեն նաև կառավարության միջամտության ազդեցությունները գործատուների վրա. մասնավորապես, կախված աշխատանքի պահանջարկի առաձգականությունից, փաստացի ազդեցությունները վարձու աշխատողների և գործատուների վրա փարբեր կերպ կարող են արտահայտվել: Այսպես՝ պահանջարկի բարձր առաձգականության դեպքում զբաղվածության նվազմանը զուգընթաց աշխատավարձը նշանակալիորեն իջնում է, և որոշ չափով ավելանում է գործատուի ծախսը: Մինչ այս միջամտությունը եկամտային հարկը վճարվում էր վարձու աշխատողի կողմից, ուստի վարձու աշխատողը դառնում է հարկի ավելացումից հիմնական տուժողը: Պահանջարկի ցածր առաձգականության դեպքում մինչ միջամտությունը, ցածր առաձգականությամբ պայմանավորված, հարկերի մեծ մասը վճարվում էր գործատուի կողմից: Այդ իսկ պատճառով միջամտության արդյունքում գործատուի ծախսերը շեշտակիորեն կաճեն: Միևնույն ժամանակ կնկարվի աշխատողին վճարվող աշխատավարձի չափի և աշխատող անձանց թվաքանակի չափավոր նվազում: Ինչևէ, այս վարթարացումներն աշխատողների եկամուտների և աշխատողների թվաքանակի առումով ավելի համեստ կլինեն, քան աշխատանքի պահանջարկի բարձր առաձգականության դեպքում: Պահանջարկի կարարյալ առաձգականությունը և կարարյալ ոչ առաձգականությունը կարող են չդիտարկվել, քանի որ դրանք քննարկելի են միայն տեսական հարթությունում: Մասնավորապես, աշխատանքի պահանջարկի բարձր առաձգականությունը կրճատում է գործատուի ներդրումը հարկերի վճարման գործընթացին: Կարարյալ

առաձգականության դեպքում այս ներդրումը դառնում է զրո: Գումարները, որոնք մինչ միջամտությունն օգտագործվում էին հարկ վճարելու համար (նվազեցվում էին աշխատավարձերից) միջամտությունից հետո ավելանալու են, սակայն մեկ աշխատողի վրա կատարված ծախսը գործատուի համար նույն գումարը կմնա, ինչ միջամտությունից առաջ: Կատարյալ ոչ առաձգականության դեպքում միջամտությունը ոչ մի ազդեցություն չի թողնում զբաղվածության վրա: Այս դեպքում գործատուն փութում է բոլոր առումներով. հարկի բարձրացման արդյունքում հարկի գումարի մի մասը վճարվում է գործատուի «գրպանից»:

Ընդ որում, ընդհանուր հավասարակշռության մոդելի շրջանակներում նպատակահարմար կլինի խոսել նաև վարքագծային բաղադրիչի մասին, քանի որ, անկախ տեսական ենթադրություններից, գործնականում ազդեցությունները կարող են փոքր լինել: Ներկայացված իրավիճակում շահառուների վարքագծային արձագանքի օրինակ կարող է լինել սոցիալական վիճակի վարթարացման կանխատեսմամբ պայմանավորված, վարձու աշխատողների կողմից սպառողական ծախսերի կրճատումը և խնայողությունների իրականացումը:

5. Վճարելու պատրաստականության մոդել:

Ոչ շուկայական ազդեցությունները սովորաբար գնահատվում են ապագա օգուտի ստացման համար անհատների **վճարելու պատրաստականության** միջոցով: **Վճարելու պատրաստականությունը** կարող է գնահատվել երկու եղանակով՝

1. ուսումնասիրելով, թե իրականում անհատներն ինչ են վճարում որոշակի արդյունքի ստացման համար՝ այսպես կոչված **բացահայտված նախապատվությունների** միջոցով: **Բացահայտված նախապատվությունների** միջոցով գնահատման մեթոդներն են՝
 - 1) *ճանապարհորդության ծախսերի մեթոդները*, օրինակ՝ մի խումբ քաղաքացիների համար որևէ հուշարձանի կամ զբոսայգու արժեքը կարող է մոտարկվել՝ ուսումնասիրելով, թե որքան գումար են ծախսում այդ խմբում ընդգրկված անհատներն այդ վայր այցելու նպատակով իրականացվող ճանապարհորդության վրա,
 - 2) *հեղոնիստական գնորոշման մեթոդները*, որոնք վիճակագրական մեթոդների կիրառմամբ գնահատում են բարիքի հատկանիշների մասնաբաժինն այդ բարիքի գնի ձևավորման մեջ: Այս մոդելները թույլ են տալիս անուղակիորեն գնահատել ապրանքի հատկանշային արժեքները (որոնք չունեն դրամական արտահայտում շուկայում)՝ այլ ապրանքների (որոնց գները կախված են այդ հատկանիշների առկայությունից) գների համեմատ տվյալ ապրանքի գնի տարբերության որոշմամբ,
 - 3) *կանխող վարքագծի մեթոդները*, որոնք ուսումնասիրում են անհատների գործողությունները՝ ուղղված որոշակի ռիսկերի կանխարգելմանը: Օրինակ՝

անհատի համար որոշակի ռիսկի արժեքը կարող է մոտարկվել՝ ուսումնասիրելով, թե որքան է այդ անհատը վճարել այդ ռիսկի կանխարգելման համար,

4) *հիվանդության արժեքի մեթոդները*, որոնք գնահատում են օգուտները որպես հիվանդությունից բխող ուղղակի և անուղղակի ծախսերի իրականացումից խուսափելու արդյունքում խնայողություն: Մասնավորապես՝ այս մեթոդի շրջանակներում որպես ուղղակի ծախս դիտարկվում են հիվանդության ախտորոշման, բուժման, վերականգման ծախսերը, որպես անուղղակի ծախս՝ հիվանդությամբ պայմանավորված եկամտի, արտադրողականության և ժամանակի կորուստը:

2. անհատներին ուղղակիորեն հարցնելով, թե որքան նրանք կցանկանային վճարել ապագայում որոշակի արդյունքի ստացման համար՝ այսպես կոչված **հայտնած նախապատվությունների** միջոցով: **Հայտնած նախապատվությունների միջոցով գնահատման մեթոդներն են՝**

1) *պայմանական գնահատման մեթոդները*, որոնք հիմնվում են այն գաղափարի վրա, որ անհատները կարող են ուղղակիորեն հայտնել՝ որն է որոշակի ապագա օգուտի համար իրենց վճարելու պատրաստակամությունը,

2) *ընտրության մոդելավորման և համակցված վերլուծությունների մեթոդները*, որոնք բարիքների նկատմամբ նախապատվությունների ուսումնասիրությունների վրա հիմնված մոդելավորման մեթոդաբանություններ են, որոնց ժամանակ բարիքները նկարագրվում են ըստ իրենց հատկանիշների և այդ հատկանիշների կատեգորիաների: Հարցվողներին խնդրում են կատարել բարիքի ընտրություն՝ հիմնվելով այդ բարիքի հատկանիշների նկատմամբ ունեցած նախապատվությունների վրա: Վճարելու պատրաստակամությունն անուղղակիորեն գնահատվում է՝ ելնելով դիտարկվող բարիքի համապատասխան հատկանիշների գներից:

Անհատական նախապատվությունները կարող են գնահատվել նաև մեկ այլ ցուցանիշի՝ **ընդունելու պատրաստակամության** միջոցով: **Ընդունելու պատրաստակամությունը** փոխհատուցման այն նվազագույն գումարն է, որն անհատը պատրաստ է ընդունել չստացված օգուտի փոխարեն կամ իրեն պատկանող ռեսուրսներից (ակտիվներից) հրաժարվելու դիմաց (օրինակ՝ վտանգավոր արտադրական օբյեկտներում աշխատելու դիմաց վճարվող հավելավճարները): Սակայն այս երկու ցուցանիշների՝ **վճարելու պատրաստակամության** և **ընդունելու պատրաստակամության** մեծությունները երբեմն կարող են էականորեն տարբերվել միմյանցից:

Օրինակ 20. Ոչ շուկայական ազդեցությունների գնահատման օրինակներ

Հետևյալ օրինակը ցույց է տալիս, թե ինչպես ճանապարհային խցանումների օրինակը կարող է գնահատվել փարբեր մեթոդներով:

Լոռույան արժեքը (Հեղոնիստական գնորոշման մեթոդ)

Փաստը ցույց է տալիս, որ խցանումների առկայության դեպքում երթևեկության աղմուկը մեծանում է մեքենաների շարժիչի միացման, վարման, արգելակման և առավել ագրեսիվ վարորդների պահվածքի պատճառով (օրինակ՝ ազդանշանները): Ծանրաբեռնված ճանապարհներին մոտ լինելը բնակարանների գնային փարբերություն է առաջացնում: Պատկերացնենք համափորությունում, որտեղ կան լրիվ նույն հատկանիշներով 20 փոներ, այն փունը, որը գտնվում է հարավային ծայրամասում, հարակից է ծանրաբեռնված մայրուղուն, մինչդեռ հյուսիսային մասում գտնվող փունը՝ հանգստի գոտուն: Համափորության հատկանիշների վերաբերյալ փվյալներ հավաքելիս պարզվում է՝ հանգստի գոտուն հարակից փան արժեքը 150 մլն դրամ է, մինչդեռ մյուս փունը, որը գտնվում է հարավային մասում, արժե 100 մլն դրամ:

Հաշվի առնելով այս գները և փոների հատկանիշների նմանությունը՝ կարող ենք եզրահանգել, որ լոռույան արժեքը (հատկանիշ, որը հարավային փունը չունի) 50 մլն դրամ է՝

$$150 \text{ մլն դրամ} - 100 \text{ մլն դրամ} = 50 \text{ մլն դրամ:}$$

Ասթմայի նվազեցում (Հիվանդության ծախսի մեթոդ)

Տրանսպորտային խցանումները աղտոտում են օդը և առաջ բերում երեխաների մոտ ասթմայի առաջացման մեծ ռիսկեր: Ենթադրենք, որ աղտոտված օդի ազդեցությանն են ենթարկվել 2000 երեխա, և բուժիչ միջամտության արժեքը, 5 փարվա կտրվածքով, փարեկան 3 հազար դրամ է ամեն մի երեխայի համար: Տվյալ փարածաշրջանում երեխաների ասթմայով փառապելու ռիսկի նվազեցման վիճակագրական արժեքը կլինի 30 մլն դրամ՝

$$2,000 * 3,000 * 5 = 30 \text{ մլն դրամ:}$$

5. ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒՄ

ԿԱԳ-ի հիմանկան նպատակներից մեկը կառավարությանն օժանդակելը և ուղղորդելն է նրա կողմից իրականացվելիք գործողությունների ուղղությունը պատշաճ որոշելու հարցում հաշվի առնելով առկա իրավիճակը, տվյալները և օրենսդրական նախաձեռնության առանցքային նպատակները:

Տարբերակների համեմատման փուլի նպատակն է կարգավորման ամեն մի այլընտրանքային տարբերակի ուժեղ և թույլ կողմերի համադրումը, որպեսզի եզրակացություն անենք, թե որն է նպատակներին հասնելու համար առավել արդյունավետ և ծախս-խնայող, ամենաքիչ կամ քիչ զգալի թերություններով տարբերակը: Տարբերակների համեմատությունը ցույց կտա, որ չկա կատարյալ լուծում: Բոլոր տարբերակներն էլ կունենան առավելություններ ու թերություններ: Ամեն մի տարբերակի «կողմ» և «դեմ» կողմերը համեմատելիս հնարավոր կլինի տալ եզրակացություն, թե որ տարբերակն է մնացածներից առավել ընդունելի, որն էլ հիմք կհանդիսանա կառավարությանն առաջարկություն կատարելու համար: Եթե ոչ մի տարբերակ նախընտրելի չէ, ապա ԿԱԳ հաշվետվության մեջ պետք է մանրամասն բացատրվի այդ դիրքորոշումը:

ԿԱԳ մեթոդաբանության շրջանակներում կիրառվում են տարբերակների համեմատման հետևյալ վերլուծական մեթոդներները՝

1. **Ծախս-օգուտ վերլուծություն.** կիրառվում է, երբ տարբերակների բոլոր ծախսերն ու օգուտներն ունեն դրամական արտահայտություն,
2. **Ծախս-արդյունավետություն վերլուծություն.** կիրառվում է, երբ տարբերակների ընդհանուր ծախսերն ու օգուտներն ունեն քանակական արտահայտություն, սակայն արտահայտված չեն միևնույն չափման միավորով,
3. **Բազմաչափանիշ վերլուծություն.** կիրառվում է, երբ տարբերակների ծախսերն ու օգուտներն ունեն և՛ քանակական (դրամական կամ ոչ դրամական), և՛ որակական արտահայտություն:

5.1. Ծախս-օգուտ վերլուծություն

Վերլուծության շրջանակներում տարբերակների համեմատությունն իրականացվում է ըստ «Չուտ օգուտ»-ի, որը յուրաքանչյուր տարբերակի համար ստացվում է տվյալ տարբերակի ընդհանուր օգուտների և ընդհանուր ծախսերի տարբերությունից:

ԿԱԳ վերլուծության շրջանակներում նախընտրելի է այն տարբերակը, որն ունի ամենամեծ «Չուտ օգուտ»-ը:

Ընդհանուր օգուտներ – Ընդհանուր ծախսեր = «Չուտ օգուտ»

Օրինակ 21. Ծախս-օգուտ վերլուծության օրինակ

Տարբերակ 1 – ընդհանուր ծախս՝ 540,000 ՀՀ դրամ, ընդհանուր օգուտ՝ 700,000 ՀՀ դրամ:

«Չուր օգուտ» = 700,000 ՀՀ դրամ - 540,000 ՀՀ դրամ = 160,000 ՀՀ դրամ

Տարբերակ 2 – ընդհանուր ծախս՝ 200,000 ՀՀ դրամ, ընդհանուր օգուտ՝ 250,000 ՀՀ դրամ:

«Չուր օգուտ» = 250,000 ՀՀ դրամ - 200,000 ՀՀ դրամ = 50,000 ՀՀ դրամ

Տարբերակ 3 – ընդհանուր ծախս՝ 800,000 ՀՀ դրամ, ընդհանուր օգուտ՝ 100,000,000 ՀՀ դրամ:

«Չուր օգուտ» = 1,000,000 ՀՀ դրամ - 800,000 ՀՀ դրամ = 200,000 ՀՀ դրամ

Նախընտրելի տարբերակ՝ Տարբերակ 3:

Առավելություններ – մեթոդի շրջանակներում կարգավորման այլընտրանքային տարբերակների բոլոր ծախսերը և օգուտները (բացասական և դրական ազդեցությունները) ենթարկվում են քանակական գնահատման, և տարբերակները համեմատվում են ըստ հստակ չափանիշի՝ «Չուտ օգուտ»-ի:

Թերություններ – կարող է կիրառվել միայն այն ազդեցությունները գնահատելիս, որոնք հնարավոր է արտահայտել քանակական ձևով և միևնույն չափման միավորով (լավագույն տարբերակը դրամականացված արժեքներն են, որոնք երբեմն կարող են դժվարությամբ ստացվել):

5.2. Ծախս-արդյունավետություն վերլուծություն

Ծախս-արդյունավետություն վերլուծությունն, ի տարբերություն նախորդ վերլուծական մեթոդի, ավելի պարզ է: Այն հետապնդում է շատ որոշակի պահանջ. առավելագույնի հասցնել կարգավորման առաջարկվող տարբերակի արդյունավետությունը՝ օրենսդրական նախաձեռնության շրջանակներում սահմանված նպատակի (թիրախի) կամ արտաքին սահմանափակումների (ինչպիսին է, օրինակ, բյուջեի սահմանափակումը) պայմաններում:

Վերլուծության շրջանակներում տարբերակների համեմատությունն իրականացվում է ըստ դրանց միավոր արդյունքի ծախսատարության (օրինակ՝ յուրաքանչյուր աշխատատեղի ստեղծման ծախսը կամ յուրաքանչյուր քաղաքացիական ծառայողի վերապատրաստման ծախսը), որը ստացվում է՝ կիրառելով ընդհանուր ծախսերի և ընդհանուր օգուտների հարաբերակցության բանաձևը:

ԿԱԳ վերլուծության շրջանակներում նախընտրելի է այն տարբերակը, որն ամենաարդյունավետն է. պահանջում է նվազագույն ծախս միավոր օգուտի ստացման համար:

Ընդհանուր ծախս/Ընդհանուր գուտ

Օրինակ 22. Ծախս-արդյունավետություն վերլուծության օրինակ

Տարբերակ 1 – ընդհանուր ծախս՝ 540,000 ՀՀ դրամ, ընդհանուր օգուտ՝ 6 աշխատատեղ:

$$540,000 \text{ ՀՀ դրամ} / 6 \text{ աշխատատեղ} = 90,000 \text{ ՀՀ դրամ} / \text{աշխատատեղ}$$

Տարբերակ 2 – ընդհանուր ծախս՝ 200,000 ՀՀ դրամ, ընդհանուր օգուտ՝ 2 աշխատատեղ:

$$200,000 \text{ ՀՀ դրամ} / 2 \text{ աշխատատեղ} = 100,000 \text{ ՀՀ դրամ} / \text{աշխատատեղ}$$

Տարբերակ 3 – ընդհանուր ծախս՝ 800,000 ՀՀ դրամ, ընդհանուր օգուտ՝ 10 աշխատատեղ:

$$800,000 \text{ ՀՀ դրամ} / 10 \text{ աշխատատեղ} = 80,000 \text{ ՀՀ դրամ} / \text{աշխատատեղ}$$

Նախընտրելի տարբերակ՝ Տարբերակ 3:

Առավելություններ – ապահովում է կարգավորման տարբերակների ծախսերի և օգուտների գնահատումների՝ տարբեր չափման միավորներով արտահայտման հնարավորություն:

Թերություններ – մեթոդի շրջանակներում անտեսվում են հնարավոր կողմնակի հետևանքները, քանի որ այն կենտրոնացած է մի տեսակի օգուտի վրա (կարգավորման նախատեսված նպատակի): Ինչպես նաև այն չի ապահովում հստակ արդյունքներ, օրինակ՝ արդյոք կարգավորման առաջարկվող տարբերակը հասարակության համար կընձեռի շոշափելի «Զուտ օգուտ»-ներ:

5.3. Բազմաչափանիշ վերլուծություն

Վերլուծության շրջանակներում տարբերակների համեմատությունն իրականացվում է՝ ըստ դրանց «Կշռված գնահատական»-ների:

Տարբերակների «Կշռված գնահատական»-ների հաշվարկն իրականացվում է հետևյալ քայլերի միջոցով՝

1. առաջնահերթ չափանիշների սահմանում և նրանց կարևորության կշռում. ոչ բոլոր չափանիշներն են հավասարապես կարևոր, նրանցից մի քանիսն ավելի էական/հրատապ են, քան մնացածը՝ կախված հանրային արժեհամակարգից,

շահառուների սպասումներից և ազգային կամ տարածաշրջանային ռազմավարություններից,

Ցանկալի է չափանիշների ընտրությունը և կշռումը իրականացնել շահառուների, կառավարության և ոլորտի փորձագետների հետ, օրինակ՝ ֆոկլուս խմբերի միջոցով:

2. ըստ յուրաքանչյուր չափանիշի՝ տարբերակների գնահատման համակարգի սահմանում և յուրաքանչյուր տարբերակի գնահատում,
3. յուրաքանչյուր տարբերակի գնահատականների կշռում ըստ յուրաքանչյուր չափանիշի կշռի,
4. յուրաքանչյուր տարբերակի համար ընդհանուր «Կշռված գնահատական»-ի հաշվարկում:

ԿԱԳ վերլուծության շրջանակներում նախընտրելի է այն տարբերակը, որն ունի ամենամեծ ընդհանուր կշռված գնահատականը:

$$\text{Ընդհանուր կշռված գնահատական} = \sum \text{Գնահատական} \times \text{Կշիռ}$$

Օրինակ 23. Բազմաչափանիշ վերլուծության օրինակ

Տարբերակ 1 – հանրային իրազեկվածության մակարդակի բարձրացում հեռուստատեսությամբ սոցիալական գործադրների ցուցադրման միջոցով
Տարբերակի ընդհանուր ծախս՝ 5,400,000 ՀՀ դրամ:

Տարբերակ 2 – ոչինչ չանել (ներկայումս խնդրի շուրջ հանրային իրազեկվածությունն ապահովվում է թոուցիկների տարածման միջոցով)
Տարբերակի ընդհանուր ծախս՝ 2,000,000 ՀՀ դրամ

Տարբերակ 3 – հանրային իրազեկվածության մակարդակի բարձրացում մարզեր այցելությունների և թիրախային խմբերի հետ հանդիպում-քննարկումների կազմակերպման միջոցով
Տարբերակի ընդհանուր ծախս՝ 8,000,000 ՀՀ դրամ

Տարբերակների գնահատման սանդղակ

Չափանիշ	Գնահատման ցուցանիշ	Գնահատական
Կարգավորմամբ պայամավորված ընդհանուր ծախսեր	> 7,500,000 ՀՀ դրամ	1
	5,000,000 ՀՀ դրամ - 7,500,000 ՀՀ դրամ	2
	2,500,000 ՀՀ դրամ - 5,000,000 ՀՀ դրամ	3
	< 2,500,000 ՀՀ դրամ	4

Հանրային իրազեկվածության խթանում	Առկա չէ	1
	Ցածր	2
	Միջին	3
	Բարձր	4

Առավելություններ – մեթոդը հնարավորություն է տալիս միաժամանակ իրականացնել և՛ քանակական, և՛ որակական գնահատումներ:

Թերություններ – տարբերակների գնահատումները սուբյեկտիվ բնույթ են կրում:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

Առաջնահերթությունների սահմանման գործընթացում օբյեկտիվության և թափանցիկության ապահովում

Պետք է գիտակցել, որ չափանիշների առաջնահերթությունների սահմանումը բարդ և հակասական գործընթաց է: Քաղաքացիները հակված են տեսնելու տարբեր առաջնահերթություններ՝ կախված խնդրի շրջանակներում ազդեցության ենթարկման աստիճանից: Փորձագետները ևս կողմնապահություն կարող են անել՝ ելնելով մասնագիտական ոլորտից: Տնտեսական և քաղաքական շահերից բխող թաքնված գործողությունների ծրագիրը ևս

Անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ առաջնահերթությունների սահմանման գործընթացի օբյեկտիվությունը խիստ կախված է չափանիշների ընտրության և կշռման ընկալումից: Առաջնահերթությունների սահմանումը կարող է լինել հնչեղ և օբյեկտիվ, բայց այն կարող է չարտացոլել օրենսդրական նախաձեռնության առաջնահերթությունները կամ չառաջացնել անհրաժեշտ մասնակցային զգացողություն արտաքին շահառուների մոտ, որոնք երկուսն էլ հանդիսանում են առաջնահերթույների հիմանվորման առանցքային գործոններ:

Ուստի, անհրաժեշտ է ունենալ բազմաոլորտային խմբեր՝ անհատական կողմնապահությունները բացառելու համար:

5.4 Տարբերակների համեմատության վերլուծական մեթոդի ընտրություն

Ստորև ներկայացված Աղյուսակ 1-ում ամփոփ ցուցադրված են ծախսերի և օգուտների վերաբերյալ առկա տվյալների պայմաններում ԿԱԳ մեթոդաբանության շրջանակներում կիրառվող՝ տարբերակների համեմատության վերլուծական մեթոդների՝ ծախս-օգուտ, ծախս-արդյունավետություն և բազմաչափանիշ, միջև ընտրության կատարման չափորոշիչները:

Աղյուսակ 1. Արդյո՞ք օգտագործել ծախս-օգուտ վերլուծություն, ծախս-արդյունավետություն վերլուծություն թե՞ բազմաչափանիշ վերլուծություն

Մեթոդաբանություն	Տվյալների միջավայր
Ծախս - օգուտ վերլուծություն	<ol style="list-style-type: none"> 1) <i>և՛ ծախսերը, և՛ օգուտները քանակականացված են</i> 2) <i>բոլոր ծախսերը և օգուտները արտահայտված են միևնույն չափման միավորով</i>
Ծախս-արդյունավետություն վերլուծություն	<ol style="list-style-type: none"> 1) <i>և՛ ծախսերը, և՛ օգուտները քանակականացված են</i> 2) <i>ծախսերը և օգուտները արտահայտված են տարբեր չափման միավորներով</i>
Բազմաչափանիշ վերլուծություն	<ol style="list-style-type: none"> 1) <i>առկա են և՛ որակական, և՛ քանակական գնահատումներ կամ առկա են միայն որակական գնահատումներ</i>

6. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ

6.1. Մշտադիտարկման և գնահատման միջոցառումների նախագծման դերը ԿԱԳ վերլուծությունում

ԿԱԳ վերլուծության իրականացման արդյունքում ձևավորված կարգավորիչ միջամտությունն անհրաժեշտ է ենթարկել կանոնավոր մշտադիտարկման և գնահատման: Այս միջոցառումների իրականացումը օրենսդրական նախաձեռնության մշակողներին և շահագրգիռ կողմերին հնարավորություն է տալիս ստուգել, թե արդյոք կարգավորիչ միջամտության իրականացումը «ճիշտ ճանապարհի վրա» է, և գեներացնել տեղեկատվություն, որը կօգտագործվի գնահատելու, թե որքանով է միջամտությունը հասել իր առջև դրված նպատակներին:

Երբ միջամտությունը չի հասնում սահմանված նպատակների իրականացմանը, օրենսդրական նախաձեռնության մշակողների համար անհրաժեշտ է իմանալ՝ արդյոք դա հանդիսանում է օրենսդրական նախաձեռնության մշակման հետ կապված խնդիրների, թե վատ իրականացման արդյունք. օրինակ՝ արդյո՞ք խնդրի վերլուծությունը ճիշտ է եղել, արդյո՞ք սահմանված նպատակները եղել են համապատասխան և հասանելի, արդյո՞ք միջամտության իրականացումը վստահվել է կողմերի, որոնք ի վիճակի էին այն հասկանալ և ունեին ցանկություն այն իրականացնել, արդյո՞ք վատ իրականացումը հանդիսանում է ցածր վարչարարական կարողությունների արդյունք:

Այս առումով՝ նպատակային ցուցանիշների հետ համատեղ, արժեքավոր տեղեկատվություն են հաղորդում մշտադիտարկման և գնահատման միջոցառումները, որոնց պատշաճ կազմակերպման և իրականացման համար անհրաժեշտ է ուրվագծել, թե ինչպիսին են լինելու այդ միջոցառումները:

Մշտադիտարկման և գնահատման միջոցառումների նախագծումը օրենսդրական նախաձեռնության մշակման վերջին քայլն է: Ընդհանուր մոտեցումն այն է, որ մշտադիտարկման և գնահատման միջոցառումների նախագծումը ներառվում է ԿԱԳ վերլուծության իրականացման շրջանակներում և ներկայացվում է կարգավորման նախընտրելի տարբերակի համար: Նախագծումը ներկայացնում է մշտադիտարկման և գնահատման հիմնական տարրերը, որոնք պետք է ներառվեն կարգավորիչ միջամտության առաջարկության մեջ, և պետք է օգտագործվեն մշտադիտարկման և գնահատման միջոցառումների մանրամասն նախագծի կազմման համար՝ այն բանից հետո, երբ օրենսդրական նախաձեռնությունը կընդունվի:

6.2. Մշտադիտարկման միջոցառումների նախագծում

6.2.1. Ի՞նչ է մշտադիտարկումը և ի՞նչը մշտադիտարկել

«Մշտադիտարկում» հասկացության սահմանումը

Միջամտության վերաբերյալ տվյալների հավաքագրման համակարգված և շարունակական գործընթաց:

Մշտադիտարկման ժամանակ դիտարկվում է, թե «ի՞նչ» փոփոխություններ են տեղի ունեցել կարգավորման ուժի մեջ մտնելուց հետո: Մշտադիտարկումը օգնում է բացահայտել և լուծել կարգավորման իրականացման հետ կապված ցանկացած խնդիր և հավաքագրում է փաստական տեղեկատվություն դրա հետագա գնահատման և անհրաժեշտության դեպքում ազդեցությունների գնահատման համար:

Կարգավորման գործողության ընթացքում կարող է մշտադիտարկվել դրա՝

Կարգավորիչ միջամտության՝ մշտադիտարկման ենթակա տարրերը	
Իրականացումը (Implementation)	Միջամտության արդյունավետ կիրարկումն ապահովելու համար անհրաժեշտ միջոցառումների իրականացումը:
Կիրարկումը (Application)	Կարգավորման հիմնական նպատակների իրականացման ապահովման ընթացքում դիտարկվող փոփոխությունները:
Համապատասխանությունը և Հարկադրումը (Compliance and Enforcement)	Կարգավորմամբ սահմանված պահանջ-պայմաններին տնտեսվարողների համապատասխանության աստիճանը, կատարված չափումները, իրականացված ստուգումները, բացված դատական գործերը կարող են մշտադիտարկվել ինչպես կիրարկման, այնպես էլ իրականացման փուլերում և երկու դեպքում էլ տրամադրում են օգտակար տեղեկատվություն առաջընթացի մասին:
Համատեքստային տեղեկատվություն (contextual information)	Ի լրումն առանձին օրենսդրական նախաձեռնության առաջընթացի՝ մշտադիտարկման իրականացման ընթացքում պետք է հավաքագրվի նաև համատեքստային տեղեկատվություն (իրադարձություններ, որոնք ուղղակի կապված չեն կարգավորիչ միջամտության հետ, սակայն կարող են ազդեցության ենթարկվել դրա կողմից): Այդպիսիք են, օրինակ, տնտեսական աճը,

6.2.3. Մշտադիտարկման համակարգի նախագծում

Մշտադիտարկման համակարգի նախագծումն իրենից ներկայացնում է կարգավորիչ միջամտության իրականացման ընթացքում տվյալների հավաքագրման և օգտագործման վերաբերյալ համակարգված նախագծի կազմում: Հավաքագրված փաստացի տվյալներն ու դրանց վերլուծությունը թույլ են տալիս իրականացնողներին գնահատել ձեռք բերված առաջընթացն ու բացահայտել խնդիրները (որոնք կարող են խոչընդոտ հանդիսանալ արդյունքներին հասնելու համար) բավականին վաղ շրջանում, որպեսզի հնարավոր լինի քայլեր ձեռնարկել դրանց վերացման ուղղությամբ:

Մշտադիտարկման համակարգի նախագծման ժամանակ կարևոր է ներկայացնել, թե ինչ տվյալներ է անհրաժեշտ հավաքագրել, երբ դրանք պետք է դառնան հասանելի և ում կողմից դրանք պետք է տրամադրվեն: Պետք է հաշվի առնել նաև, թե արդյոք նախագծված համակարգը կհանգեցնի ավելորդ վարչարարական բեռի առաջացման՝ առաջացելով ոչ համաչափ տեղեկատվական պարտավորություններ տնտեսվարողների, քաղաքացիների և պետական մարմինների համար:

Մշտադիտարկման նոր համակարգի նախագծման ժամանակ պետք է վերլուծել, թե արդյոք գոյություն ունեցողները (դեռ) ծառայում են իրենց նպատակին, այսինքն՝ տրամադրում են արդյոք արժեքավոր և ժամանակին տեղեկատվություն օրենսդրական նախաձեռնության մշակման գործընթացի համար: Դրա համար անհրաժեշտ է պատասխանել հետևյալ հարցերին՝

<p>Ի՞նչ տվյալներ են հավաքագրվում և ինչպե՞ս են դրանք օգտագործվում</p>	<p>Ու՞մ կողմից և ինչպե՞ս են տվյալները օգտագործվում: Արդյո՞ք բոլոր տվյալներն են անհրաժեշտ այն նպատակի համար, որի համար դրանք հավաքագրվել են: Եթե ոչ, ապա ինչո՞ւ: Արդյո՞ք դրանք օգտագործվում են այլ նպատակների համար:</p>
<p>Ինչպե՞ս են տվյալները հավաքագրվում</p>	<p>Ի՞նչ չափով արդեն իսկ գոյություն ունի մշտադիտարկման համակարգ: Ու՞մ կողմից է իրականացվում տվյալների հավաքագրումը (լիազոր մարմին, այլ պետական և ոչ պետական մարմիններ, շահառուներ և այլն):</p>

Մշտադիտարկման համակարգի միջոցառումները նախագծելիս պետք է՝

1. ապահովել, որպեսզի մշտադիտարկման համակարգն աշխատի հենց սկզբից, և ստեղծվեն օբյեկտիվ հիմքեր, որոնք կապահովեն հուսալի և անխափան տվյալների հավաքագրում,
2. արդյունավետ օգտագործել հավաքագրված տվյալները՝ ապահովելով տվյալների հավաքագրման, պահպանման և վերլուծության առաջարկվող մեթոդների և գործիքների հուսալիություն,
3. մշակել այնպիսի նպատակային ցուցանիշներ, որոնք թույլ կտան հավաքագրել տվյալներ, որոնք կապված են իրականացման բարելավման և կարգավորիչ միջամտության հետագա գնահատման հետ,
4. դիտարկել մշտադիտարկման համակարգի կարգավորման և սպասարկման ծախսերը միջամտության կյանքի տևողության ընթացքում և հաշվի առնել դրանք նախընտրելի տարբերակի ծախսերի գնահատման մեջ:

Մշտադիտարկման համակարգի նախագծման հարցադրումներ

Ի՞նչ տեղեկատվություն է անհրաժեշտ, և ինչպե՞ս է այն օգտագործվելու արդյունքների և ցուցանիշների առաջընթացի վերաբերյալ մշտադիտարկման համար:

Հուշում՝ խուսափել տվյալների հավաքագրման ջանքերի կրկնությունից (օրինակ՝ երբ երկու տարբեր մարմիններ միևնույն ոլորտում հավաքագրում են միևնույն տվյալները տարբեր վերլուծությունների համար):

Ինչպե՞ս են տվյալները հավաքագրվելու ու վերլուծվելու:

Հուշում՝ գոյություն ունեն տվյալների հավաքագրման և մշտադիտարկման մի քանի մեթոդներ, այդ թվում՝ մասնակցության վրա հիմնված մոտեցումներ, գրառումների և երկրորդային տվյալների վերլուծություն, դիտորդություն, հարցումներ, դաշտային ուղևորություններ, ֆոկուս-խմբեր և հարցազրույցներ:

Ի՞նչ տեղեկատվություն է անհրաժեշտ: Ու՞մ է դա անհրաժեշտ: Ե՞րբ է դա անհրաժեշտ: Որոշումների կայացման ի՞նչ գործընթացներ պետք է հիմնվեն այդ տվյալների վրա:

Հուշում՝ առավելագույնս օգտագործել միևնույն տվյալները տարբեր նպատակների կամ տարբեր վերահսկող մարմինների համար, և հավաքագրել տվյալներ, որոնք «կողմնորոշված են որոշումների կայացմանը» (բավարարում են որոշումների կայացման համար անհրաժեշտ տվյալների պահանջը):

Ինչպե՞ս է տեղեկատվությունը պահպանվելու և կառավարվելու՝ տարբեր նպատակների համար (օրինակ՝ միջամտության կատարողականի վերլուծություն, ուղղիչ գործողությունների հետագծելիություն, հաշվետվողականություն և գնահատում):

Հուշում՝ անկախ այն բանից, թե ինչ համակարգ է ընտրվում (թղթային կամ էլեկտրոնային), կարևոր է հիշել, որ տվյալների կառավարման համակարգը պետք է կարգավորված լինի՝ ապահովելու համար տվյալների հավաքագրման, պահպանման և վերլուծության արդյունավետությունը:

Ի՞նչ ռեսուրսներ (մարդկային, տեխնիկական և ֆինանսական) են անհրաժեշտ մշտադիտարկման գործառույթներն ապահովելու համար: Ի՞նչ ծախսեր է ենթադրում տվյալների հավաքագրման գործընթացն ու արդյո՞ք դրանք արդարացված են:

Հուշում՝ մաքսիմալ հնարավոր չափով նվազագույնի հասցնել տվյալների հավաքագրման համար ռեսուրսների օգտագործումը:

6.3. Գնահատման միջոցառումների նախագծում

6.3.1. Ի՞նչ է գնահատումը և ի՞նչն է պետք գնահատել

«Գնահատում» հասկացության սահմանումը

Տվյալների վրա հիմնված դատողություն, թե որքանով է գոյություն ունեցող միջամտությունն արդյունավետ, արդիական և համապատասխան:

Գնահատման ժամանակ դիտարկվում է, թե **«արդյո՞ք»** կարգավորիչ միջամտությունն արդյունավետ է եղել իր առջև դրված նպատակների իրականացման տեսանկյունից, և **«արդյո՞ք»** սահմանված նպատակներն իրականացվել են ծախս-խնայող եղանակով (այսինքն՝ նվազագույն ծախսերով):

Գնահատման ժամանակ փաստերի օգտագործման միջոցով գնահատվում է, թե որքա՞ն լավ է իրականացվել (կամ աշխատում) կարգավորիչ միջամտությունը՝ հիմք ընդունելով ԿԱԳ վերլուծության շրջանակներում ավելի վաղ արված կանխատեսումները: Գնահատման գործընթացը դուրս է գալիս «ի՞նչ է տեղի ունեցել» դիտարկումից. այն դիտարկում է, թե **«ինչու՞»** է ինչ որ բան տեղի ունեցել (ու ինչպիսի՞ կապեր, եթե այդպիսիք կան, կարող են ստեղծվել՝ պայմանավորված կարգավորիչ միջամտությամբ), և, եթե հնարավոր է, **«որքա՞նով»** է փոխվել դրությունը՝ որպես հետևանք:

Այսպիսով, գաղափարն այն է, որ, որտեղ հնարավոր է, պետք է իրականացնել հետևություններ ցանկալի արդյունքների վրա կարգավորիչ միջամտության պատճառային ազդեցությունների վերաբերյալ:

Գնահատման գործընթացը պետք է ապահովի փաստերի վրա հիմնված ներկայացում այն բանի, թե արդյո՞ք կարգավորիչ միջամտությունը շարունակում է լինել արդարացված:

Դրա համար գնահատման ընթացքում կարող է և պետք է հավաքագրվեն լրացուցիչ տվյալներ, որոնք չափում են կարգավորման երկարաժամկետ ազդեցությունները և չափազանց ծախսատար են անընդհատ մշտադիտարկման համար:

Կարգավորիչ միջամտության՝ գնահատման ենթակա տարրերը	
Արդյունավետություն (effectiveness)	Իրականացված միջոցառումների՝ սահմանված նպատակներին հասնելու արդյունավետությունը
Ծախս-խնայողություն (efficiency)	Միջամտության կողմից օգտագործվող ռեսուրսների և գեներացված փոփոխությունների միջև կապը (մասնավորապես՝ միավոր արդյունքի ծախսատարությունը)
Համապատասխանություն (relevance)	Առկա խնդիրների ու կարիքների և միջամտության նպատակների միջև փոխհարաբերությունները (կապերը)
Համաձայնեցվածություն (coherence)	Տարբեր միջոցառումների համատեղ իրականացման լավ կամ վատ լինելը

6.3.2. Գնահատման համակարգի նախագծում

Գնահատման միջոցառումների նախագծման ժամանակ պետք է ձգտել տալ հստակ կապեր իրականացվող գնահատման, դրա արդյունքների և որոշումների կայացման միջև:

Գնահատման միջոցառումները պետք է հայտարարվեն և նկարագրվեն նախապես՝ հստակ սահմանելով, թե՛

1. գնահատման ի՞նչ տեսակի միջոցառումներ են անհրաժեշտ և ե՞րբ,
2. ո՞վ է պատասխանատու դրանց իրականացման համար (օրինակ՝ լիազոր մարմինը),
3. ինչպե՞ս և ու՞մ պետք է փոխանցվեն գնահատման արդյունքները:

Գնահատման համակարգի նախագծման հարցադրումներ
Ի՞նչ չափով է գնահատման համակարգն արդեն առկա: Արդյո՞ք անհրաժեշտ է նոր միջոցների ձեռնարկում կամ ունակությունների զարգացում:
Գնահատման ի՞նչ տեսակի միջոցառումներ են անհրաժեշտ և ե՞րբ:
Ո՞րն է այդ միջացառումների հիմնական նպատակն ու կենտրոնացվածությունը:
Ո՞վ է պատասխանատու դրանց իրականացման համար (օրինակ՝ լիազոր մարմինը):

Ինչպե՞ս և ու՞մ պետք է փոխանցվեն գնահատման արդյունքները (նվազագույնը՝ այն մարմինն, որը ընդունել է դիտարկվող օրենսդրական նախաձեռնությունը):

Ընդունված մոտեցում է նախագծման աշխատանքների վերջում մշտադիտարկման և նպատակային ցուցանիշների համակարգերի ներկայացումը աղյուսակի ձևով՝

Գործառնական նպատակ	Ցուցանիշ	Սահմանում	Չափման միավոր	Տվյալի աղբյուր	Չափման հաճախականություն	Բազային արժեք	Թիրախային արժեք
-	-	-	-	-	-	-	-
-	-	-	-	-	-	-	-
-	-	-	-	-	-	-	-

Օրինակ 24. Մշտադիտարկման և նպատակային ցուցանիշների համակարգերի ընդհանրացված աղյուսակ

Նպատակային ցուցանիշի վերնագիրը	Պարզեցված և կրճատված լիցենզիաների և թույլտվությունների %-ը
Համապատասխան նպատակը	Մինչև 2023 թ.-ը նվազեցնել ՀՀ-ում գործարարության վարչարարական բեռը 20 %-ով
Տվյալների աղբյուրը՝ նպատակային ցուցանիշի մշտադիտարկման համար	ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից հրապարակվող մշտադիտարկման հաշվետվություններ
Տվյալների հավաքագրման համար պատասխանատու մարմինը	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն

<p>Տվյալների հրապարակման հաճախականությունը</p>	<p>Տարեկան</p>		
<p>Մեթոդաբանության հակիրճ նկարագրությունը</p>	<p>Այս ցուցանիշը չափելու է լիցենզավորման համարկազի բարելավման արդյունքում գործարար միջավայրի բարելավումը: Այն չափվելու է պրոգրեսիվ եղանակով՝ մինչև որ վերանայվեն գոյություն ունեցող բոլոր լիցենզիաներն ու թույլտվությունները:</p>		
	<p>Պարզեցված լիցենզիաների %-ը =</p>	<p>Պարզեցված լիցենզիաների քանակ/ Ընդանուր լիցենզիաներ և թույլտվություններ (480՝ 2019 թ.)</p>	<p>x 100 %</p>
<p>Կրճատված լիցենզիաների %-ը =</p>	<p>Կրճատված լիցենզիաների քանակ/ Ընդանուր լիցենզիաներ և թույլտվություններ (480՝ 2019 թ.)</p>	<p>x 100 %</p>	
<p>Ելակետային և թիրախային արժեքների վերաբերյալ տեղեկատվություն</p>	<p>Ելակետային տարի</p>	<p>2019</p>	<p>480</p>
	<p>Թիրախային տարի</p>	<p>2023</p>	<p>20 %</p>

III. ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

1. Ու՛մ հետ, ինչպե՛ս և ե՛րբ իրականացնել հանրային քննարկումներ

Հանրային քննարկումները իրավաստեղծ գործընթացի ժողովրդավարության և թափանցիկության ապահովման պահանջն են: ԿԱԳ գործընթացի ենթատեքստում հանրային քննարկումներն ուղղակիորեն կապված են կառավարության պետական կառավարման թափանցիկության, մասնակցության և հաշվետվողականության սկզբունքների հետ:

Հանրային քննարկումը դա կառավարության կողմից հանրությանը կարգավորումների ձևավորմանը մաս դարձնելու գործընթաց է: Վերոնշյալը ենթադրում է, որ հանրային քննարկումների նպատակը կառավարության կողմից շահառուներին պարզապես տեղեկատվությամբ ապահովելը չէ, այն ավելի շատ ենթադրում է երկխոսություն, օրենսդրական նախաձեռնության մշակման ու իրականացման վրա ազդող կարծիքների և փաստարկների ներկայացում: Բացի այդ, հանրային քննարկումը ոչ միայն թույլ է տալիս ձևավորել իրազեկ հասարակություն, այլ նաև հզոր գործիք է կարգավորման որակի բարելավման համար: Շահառուների ներգրավումը իրապես նպաստում է խնդրի առավել ճշգրիտ սահմանմանը, նպատակների թիրախավորմանը և հետևաբար նաև գործիքակազմի ընտրությանը:

Նախքան հանրային քննարկումների իրականացումը, օրենսդրական նախաձեռնության մշակողը պետք է կազմի քննարկումների իրականացման հստակ ծրագիր՝ նշելով հանրային քննարկման նպատակը, դրանից ակնկալվող արդյունքները և իրականացման ժամանակացույցը: Հանրային քննարկումների կազմակերպիչը, ելնելով քննարկվող թեմայի անհրաժեշտությունից, որոշում է, թե երբ և ում հրավիրել քննարկման: Օրինակ՝ եթե կարգավորողի համար բացահայտ չէ իրական խնդիրը, կամ չունի համարժեք տվյալներ խնդրի սահմանման և փաստարկներով հիմնավորման համար, ապա վերջինս կարող է հանրային քննարկումներ իրականացնել խնդրի բացահայտման փուլում: Սակայն, լայնածավալ քննարկումներ, այնուամենայնիվ, պետք է իրականացնել այն ժամանակ, երբ կան ձևավորված առաջարկներ: Ընդհանրապես հանրային քննարկումներ կարելի է իրականացնել ԿԱԳ գործընթացի ցանկացած փուլում, սակայն պաշտոնական ձևաչափով այն պետք է իրականացնել այն ժամանակ, երբ կա ձևավորված օրենսդրական նախագիծ: Տրամաբանությունը կայանում է նրանում, որ օրենսդրական նախաձեռնության մշակողը պետք է կարողանա տեղադրել բավարար տեղեկատվություն հանրային հատվածում արդյունավետ և տեղեկացված երկխոսություն ապահովելու համար: Սակայն մյուս կողմից՝ հանրային քննարկումներ պետք է իրականացնել այն ժամանակ, երբ դեռ որոշումները կայացված չեն: Հանրային քննարկումները կարող են նպաստել նոր մտահաղացումների առաջացմանը, խնդրի առավել հստակեցմանը, վստահելի տվյալների

հավաքագրմանը, ինչպես նաև առաջարկվող լուծումների արդյունավետությանը, այդ իսկ պատճառով՝ նախքան որոշում ընդունելը պետք է ներգրավել հասարակությանը, որպեսզի վերհանված առաջարկները կարողանան տեղ գտնել վերջնական կարգավորման մեջ:

Ինչ վերաբերում է ժամանակացույցին, ապա հանրային քննարկումները պետք է տևեն այնքան ժամանակ, որ շահագրգիռ կողմերին և մասնակիցներին տրվի բավարար ժամանակ լիովին ներգրավվելու և սեփական կարծիքը արտահայտելու համար: Պետք է նշել նաև, որ հանրային քննարկումները հզոր գործիք են հանդիսանում տեղեկատվության հավաքագրման համար, մասնավորապես այն տեղեկատվության համար, որին տիրապետում է հանրությունը, այլ ոչ թե՛ պետական հատվածը: Այսինքն, այլ կերպ ասած, հանրային քննարկումները՝

1. փակում են կարգավորող և կարգավորվող կողմերի միջև առկա տեղեկատվական բացը,
2. ամրապնդվում են որոշումների կայացման գործառնական հիմքերը,
3. բարձրացնում են որոշումների կայացման գործընթացի թափանցիկությունը և հաշվետվողականությունը,
4. նվազեցնում են կարգավորման չարաշահման, կարգավորման ձախողման և չնախատեսված հետևանքների ռիսկը,
5. բարելավում են կարգավորման կիրառումը՝ վաղ փուլերում կանխելով այն, ինչը կարող է հանգեցնել կիրառման սխալ ընթացքի:

Հանրային քննարկումները կարող են իրականացվել՝

1. առցանց,
2. հեռախոսային զանգերի,
3. հարցումների կամ
4. պաշտոնական հանդիպումների միջոցով:

**Մասնագիտական հարցաշար
Ինչպես է խնդիրը որոշվում**

Ա. Սահմանե՛ք ինչու՞մն է խնդիրը, և ինչու է այն խնդրահարույց		Գործիք
Ինչու՞	Որպեսզի պարզենք՝ արդյոք կա խնդիր, և արդյոք խնդիրը ենթակա է կարգավորման:	Խնդրի բնույթի վերլուծություն
Ինչպե՞ս	Հստակ նկարագրե՛ք ներկա իրավիճակը՝ բերելով փաստացի ապացույցներ, տվյալներ:	
	Բերե՛ք խնդրի դրսևորման օրինակներ և փաստարկեք դրանք:	
	Բերե՛ք այն կարգավորումները, որոնք չեն լուծել խնդիրը:	

Բ. Գնահատե՛ք խնդրի բնույթը, հանգամանքները, ուժգնությունը, հրատապությունը և մասշտաբները		
Ինչու՞	Որպեսզի հավաստիանանք՝ խնդիրը արժե ենթարկել հետագա ԿԱԳ վերլուծման, ապա և կարգավորման:	
Ինչպե՞ս	Որոշե՛ք խնդրի բնույթը/բաղադրիչները: Խնդրի արժևորումը «քանակական» կամ նույնիսկ «դրամական» արտահայտությամբ կարող է տարբերվել դեպքից դեպք:	

Գ. Ներկայացրե՛ք խնդրի պատճառները և դրանց պատճառահետևանքային կապը		
Ինչու՞	Որպեսզի մշակվեն այն կարգավորման տարբերակները, որոնք ուղղվելու են խնդրի լուծմանը:	Խնդրի ծառ, Ֆիշբոն գծապատկեր
Ինչպե՞ս	Կառուցե՛ք «խնդրի ծառը» կամ այլ նմանատիպ գծապատկերներ, որոնք ակնհայտ կդարձնեն պատճառահետևանքային կապը խնդրի հետ, դասակարգեք պատճառները ըստ առաջնահերթության (խորքային պատճառ, ենթապատճառներ), նույնիսկ կշիռներ տվեք դրանց: Պետք է ի նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ խնդրի առաջացման պատճառները, ինչպես նաև դրա ազդեցությունը տնտեսության տարբեր հատվածների և հասարակության տարբեր սոցիալական խմբերի վրա կարող են տարբեր լինել:	

Դ. Որոշե՛ք՝ ում վրա է խնդիրը ազդում, և ովքեր են շահառուները/դերակատարները		
Ինչու՞	Որպեսզի հստակեցվեն հանրային քննարկման շահառուները և նախապատրաստվի խնդրի պատճառների վերլուծությունն ու ազդեցությունների բաշխումը:	Շահառուների ազդեցության քարտեզ՝ համաձայն Հավելված 3-ի
Ինչպե՞ս	Առանձնացրե՛ք այն շահառուներին, ովքեր տուժում են, և ում վարքագիծն է պատճառ հանդիսանում խնդրի առաջացմանը:	
	Շահառուների խումբերը կդասակարգվենի կախված խնդրի բնույթից: Որտեղ անհրաժեշտ է, տարբերակեք դրանց կատեգորիաները (օրինակ՝ միկրո, ՓՄՁ կամ խոշոր ձեռնարկություններ), գնահատե՛ք՝ ինչպես են տարբեր խմբի անհատները ենթարկվում խնդրի ազդեցությանը (սոցիալապես խոցելի խմբեր և այլ):	

Ե. Նկարագրե՛ք խնդրի հավանական զարգացումը կամ միտումները		
Ինչու՞	Որպեսզի պարզենք կարգավորման անհրաժեշտությունը և դրա հարատևությունը (persistence):	
	Որպեսզի նկարագրենք ելակետային իրավիճակը/սցենարը/տարբերակը, որի համեմատ կարգավորման տարբերակները պետք է համադրվեն և հաշվարկվեն:	
Ինչպե՞ս	Ելակետային սցենարի մշակումը կախված է ԿԱԳ-ի շրջանակներում իրականացվող մեթոդաբանության ընտրությունից, ինչը կարող է սկսել փաստերի վրա հիմնված որակական գնահատականից մինչև լիարժեք մոդելավորման/կանխատեսման սցենարներ:	Որակական ազդեցության գնահատում, սցենարների կանխատեսում/մոդելավորում
	Ելակետային սցենարը, այնուամենայնիվ, պետք է տարբերվի ներկա կարգավիճակի նկարագրությունից, թեկուզ նրանով, որ Ձեր վերլուծությունը պետք է դիտարկի խնդրի պատճառների հնարավոր զարգացման ընթացքը և ցույց տա, թե ինչպես է այն ազդում խնդրի գոյության և ուժգնության վրա:	

	<p>Այս նպատակով պետք է դիտարկվեն բոլոր այն կարգավորիչ միջոցառումները, որոնք մինչ այդ ձեռնարկվել են, ինչպես նաև նրանք, որոնք ընդունվել են, սակայն դեռ չեն իրականացվել:</p>	
	<p>Այն դեպքերում, երբ պատճառների հնարավոր միտումները անորոշ են և խնդրի զարգացման համար զգալի կարևորություն ունեն, ապա դրանք պետք է հատուկ ուշադրության արժանանան և ենթարկվեն զգայունության վերլուծության (sensitivity analysis):</p>	

**Խնդրի սահմանման ընթացքում ընդունված սխալներից խուսափումը.
Խնդրի սխալ և ճիշտ սահմանման օրինակներ**

1. Խուսափե՛ք խնդիրը առանց հստակ սահմանումների կամ անորոշ և անհասկանալի հասկացություններով արտահայտելուց

Օրինակ՝ «*Բացակայում են ճանապարհային ենթակառուցվածքները*»

ՓՈԽԱՐԵՆԸ ԵՂԵՔ ՀՍՏԱԿ՝ «*Ա-ից դեպի Բ փանող ճանապարհը չի կարող կրել ծանր բեռնատարներ*»

2. Մի՛ կատարեք թույլ հիմնավորված հայտարարություններ

Օրինակ՝ «*Դայակների գործունեությունը կարգավորված չէ երկրում*»

ՓՈԽԱՐԵՆԸ ԵՂԵՔ ՕԲՅԵԿՏԻՎ՝ «*Դայակների գործունեությունը չի գտնվում հարկային դաշտում*»

3. Մի՛ շտապեք կատարել լուծման եզրահանգումներ, հստակեցրե՛ք խնդիրը

Օրինակ՝ «*Աշակերտները վաղ առաջադիմություն ունեն, քանի որ դպրոցներում սնվելու հնարավորություն չկա*»


ՓՈԽԱՐԵՆԸ՝ «*Աշակերտները վաղ առաջադիմություն ունեն, քանի որ դասերին կենտրոնացումը ցածր է*»

4. Տարբերե՛ք խնդրի դրսևորումը պատճառներից և հետևանքներից

Օրինակ՝ «*Կեղտաջրերի ոլորտի կարգավորման անկատարություն կամ բացակայություն*» (պատճառ), «*սննդային թունավորումներ*» (հետևանք)

ՓՈԽԱՐԵՆԸ ՑՈՒՅՑ ՏՎԵՔ՝ ԻՆՉՊԵՍ Է ԽՆԴԻՐԸ Ի ՀԱՅՏ ԵԿԵԼ ԿԱՄ ԴՐՍԵՎՈՐՎԵԼ՝ «*Կենցաղային և արտադրական կեղտաջրերից աղտոտված և վարակված ստորգետնյա խմելու ջրաղբյուրներ, ջրամբարներ և այլ ջրային ռեսուրսներ*»

Շահառուների ներգործության քարտեզ



Աղյուսակ 2. Ազդեցությունների տեսակների օրինակներ

Գործարար միջավայր և մրցակցություն	Հանրային ֆինանսներ	Սոցիալական ոլորտ	Առողջապահական ոլորտ	Շրջակա միջավայր
Տնտեսավարողների գործարար վարքագիծ և գործառնական ծախսեր	Պետական բյուջեի եկամուտներ/ծախսեր	Զբաղվածություն	Կենսաոճ	Կլիմա
Փոքր և միջին ՓՄՁ գործարար վարքագիծ և գործառնական ծախսեր	ՏԻՄ եկամուտներ/ծախսեր	Աշխատանքային պայմաններ	Առողջության վրա ազդող կյանքի/շրջակա միջավայրի պայմաններ	Ռեսուրսների արդյունավետ օգտագործում
Գործարար միջավայրի վրա դրված վարչարարական բեռ	Հանրային կառավարում	Եկամուտների բաշխվածություն, սոցիալական Պաշտպանություն	Առողջության վրա ազդող տնտեսական պայմաններ	Կենսաբազմազանություն
Սպառողների իրավունքներ	Մակրոտնտեսական միջավայր	Աշխատանքի որակ և ստանդարտներ	Ծառայությունների հասանելիություն և որակ	Բնապահպանական ռիսկեր
				Թափոններ
				Կենդանիներ

Աղյուսակ 3. Բազմաչափանիշ վերլուծության ժամանակ կարգավորման առաջարկվող տարբերակների գնահատման համակարգի մշակման օրինակ

Չափանիշ: Գնահատված ընդհանուր ծախսեր (ՀՀ դրամ)	
> 100 միլիարդ	Գնահատական 1
50 միլիարդ – 100 միլիարդ	Գնահատական 2
20 միլիարդ – 50 միլիարդ	Գնահատական 3
< 20 միլիարդ	Գնահատական 4
Չափանիշ: Շահառու (կամ ազդեցության ենթարկված) բնակչության չափը (ամբողջ բնակչության %)	
0 – 25 %	Գնահատական 1
25 – 50 %	Գնահատական 2
50 – 75 %	Գնահատական 3
75 – 100 %	Գնահատական 4
Չափանիշ: Բնապահպանական օգուտներ	
Առկա չէ	Գնահատական 1
Ցածր	Գնահատական 2
Միջին	Գնահատական 3
Բարձր	Գնահատական 4
Չափանիշ: Սոցիալական ընդունելիության ինդեքս	
Առկա չէ	Գնահատական 1
Ցածր	Գնահատական 2
Միջին	Գնահատական 3
Բարձր	Գնահատական 4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ